2026, ԱՊՐԻԼ Բ, ԹԻՎ 8 (700)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակի օրվա առիթով

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ.

Այսօր Հայաստանում և սփյուռքի համայնքներում ոգեկոչում ենք Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանության մեր սուրբ նահատակների հիշատակը, որոնք անմահացան՝ իրենց հոգիներում անմար պահելով սերն առ Քրիստոս և առ հայրենին:

Ապրիլի 24-ը խորհրդանշորեն ամփոփում է մեր ժողովրդի հավաքական տառապանքը, որի մեջ խտացված են մեկ և կես միլիոն մարտիրոսացյալ հայորդիների, հայրենակորույս, տարագիր ազգիս զավակների, մշակութային եղեռնի ենթարկված մեր վանքերի ու եկեղեցիների, ավերված բնակավայրերի հիշողությունները: Այդ ողբերգությունը, սակայն, չկոտրեց մեր ազգի ոգին: Մեր ժողովուրդը վերապրեց ցեղասպանությունը, ամենուր նոր կյանք վերընձյուղեց, վերահաստատեց Հայոց անկախ պետականությունը:

Ապրիլի 24-ն ուխտի օր է՝ միահյուսված աշխարհասփյուռ մեր ժողովրդի պահանջատիրությանը, որը զերծ է թշնամանքից ու ատելությունից, ուղղված է արդարության ու ճշմարտության վերականգնմանը և ցեղասպանության արհավիրքի ուրացման բացառմանը:

Ցեղասպանության աղետալի դեպքերից հարյուրամյակ անց, երբ թվում էր, թե նման սոսկալի հանցագործությունները մնացել են անցյալում, ցավոք, նոր ցեղասպան գործողություններով հայաթափվեց Արցախը, բռնությամբ տեղահանվեցին ավելի քան 120 000 արցախցիներ: Այս ծանր կացության և առկա սպառնալիքների հանդիման՝ մեր նահատակների զոհողությունը մեզ պարտավորեցնում է ամրապնդել մեր միաբանությունն ու համերաշխությունը և հզորացնել Հայոց պետությունը: Հիրավի, համազգային միասնականությամբ է, որ կարող կլինենք արդյունավորելու ջանքերը Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման և արգասավորելու քայլերն ու նախաձեռնությունները՝ հանուն ազգային առաջընթացի և խաղաղ ու անվտանգ կյանքի:

Աղոթենք և հայցենք, որ մեր նահատակ սրբերի բարեխոսությամբ խաղաղության երկնային շնորհները և մեր Տեր Հիսուս Քրիստոսի ողորմությունն ու սերը բաշխվեն համայն աշխարհին, մեր հայրենիքին և ժողովրդին այսօր և միշտ. ամեն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր

Ապրիլի 24-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ ոգեկոչելու Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակը:

Հուշահամալիրում ծաղկեպսակի զետեղումից հետո Նորին Սրբության նախագահությամբ կատարվեց Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսական կարգ:

Օրվա առիթով Ծիծեռնակաբերդի հուշահամալիր էր բերվել նաև Հայոց ցեղասպանության սրբոց նահատակաց մասունքարանը:

Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների ոգեկոչման արարողությունները Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակի օրվա առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, Միածնաէջ Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ: Այդ կապակցությամբ հավատացյալների խոնարհումի համար դուրս էր բերվել Հայոց ցեղասպանության սրբոց նահատակաց մասունքարանը: Պատարագիչն էր Մայր Աթոռի Միջեկեղեցական բաժնի տնօրեն Հոգեշնորհ Տ. Գարեգին վարդապետ Համբարձումյանը:

Իր քարոզում Հայրը Սուրբը, անդրադառնալով օրվա խորհրդին, ի մասնավորի նշեց. «Այսօր հիշատակում ենք Հայոց ցեղասպանության մեր սուրբ նահատակներին, որոնց հիշատակը մեզ համար վշտի թանգարան չէ՝ ամեն տարի հավաքվելու, հիշելու և այդպես մոռանալու:



Նրանք պարզապես պատմության մեջ զոհեր չեղան, նրանք վկաներ են: Այսօր նահատակ սրբերի հիշատակով մենք կանգնած չենք մահվան լռության առջև, այլ կանգնած ենք հավատքի վկայության առջև, որովհետև նրանք ընտրեցին հավատքը»:

Հայր Գարեգինն ընդգծեց, որ նահատակների կյանքի մեջ բացահայտվեց հավատքը, որը հնարավոր չէր որևէ կերպ մարել, բացահայտվեց սերը, որը որևէ կերպ չվերածվեց ատելության, բացահայտվեց հույսը, որը ոչ մի կայսրություն չկարողացավ ջնջել:

«Մեր նահատակները չեն իմացել՝ ինչ է լինելու եկեղեցու ապագան, չեն իմացել, որ այսօր վերապրած սերունդներ են ունենալու, վերակառուցված եկեղեցիներ են ունենալու, եկեղեցին զարգանալու է, հավատքը զորացնելու է, չեն իմացել, բայց նրանք մահվան դռան առջև ընդունել են Քրիստոսի այն խոսքը, որ՝ Ես եմ կյանքը: Այո՛, Քրիստոս է իրական կյանքը, և Քրիստոսով է իրական կյանքը: Ու այդ վստահությամբ է, որ նրանք ընդունեցին նահատակության պսակը»,— ասաց պատարագիչ Հայր Սուրբը՝ հավելելով, որ սուրբ նահատակների առաքելությունը մեր քրիստոնեական կյանքն ու հավատքը զորացնելն է:

Վերջում Գարեգին վարդապետը մաղթեց, որ տառապանքի և նահատակության ճանապարհով անցած սրբերի օրինակը հավատավոր հայորդիների կյանքում դառնա իրական վկայություն, որպեսզի երբեք չվիատվեն և չհուսահատվեն, այլ ընդունելով Քրիստոսի հավատքը՝ Նրան միշտ փառք և երկրպագություն մատուցեն:

Սուրբ Պատարագի ավարտին եկեղեցականների թափորը, կրելով սուրբ նահատակների մասունքարանը, ուղղվեց դեպի Մայր Տաճարի շրջափակ, ուր Աղոթքի և ուխտի խաչքարի առջև, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հայոց Ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսական կարգ:

Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Ընդհանրական Պատրիարքը ժամանեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Ապրիլի 20-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով, Հայաստան ժամանեց Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Ընդհանրական Պատրիարք Նորին Սրբություն Մոր Իգնատիուս Եփրեմ Բ-ն:

Մայր Տաճարի ղողանջների ներքո Սուրբ Էջմիածնի միաբանությունը Ամենայն Հայոց Կաթողիկոսին և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Ընդհանրական Պատրիարքին թափորով առաջնորդեց Միածնաէջ Մայր Տաճար, ուր կատարվեց «Հրաշափառի» արարողություն: Տաճարում երկու Հովվապետերը խոնարհվեցին Իջման Սուրբ Սեղանի առջև: Միասնական աղոթքից հետո Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հանուն Մայր Աթոռի միաբանության, ողջունեց և իր բարեմաղթանքները հղեց Նորին Սրբություն Մոր Իգնատիուս Եփրեմ Բ Պատրիարքին: Իր հերթին Եփրեմ Բ Պատրիարքը գոհունակություն հայտնեց Աստծո կամքով Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելելու առիթով և աղոթք վերառաքեց Հայոց Եկեղեցու պայծառության, հայ ժողովրդի բարօրության և տարածաշրջանում խաղաղության հաստատման համար: Ապա Վեհարանում տեղի ունեցավ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Ընդհանրական Պատրիարքի առանձնազրույցը:

Ավարտվեց Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարքի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Ապրիլի 23-ին ավարտվեց Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Մոր Իգնատիուս Եփրեմ Բ-ի եղբայրական այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Այս առիթով Միածնաէջ Մայր Տաճարում կատարվեց միասնական աղոթք և հրաժեշտի արարողություն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքում Մոր Իգնատիուս Եփրեմ Բ Պատրիարքի այցը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին նկատեց որպես զորակցություն հայ ժողովրդին՝ արձանագրելով, որ հոգևոր պետերի նմանօրինակ փոխայցելությունները մեծապես նպաստում են երկու քույր եկեղեցիների փոխհարաբերությունների առավել սերտացմանն ու արդյունավոր գործակցությանը, ինչը աշխարհի փոթորկահույզ այս ժամանակաշրջանում առավել քան կարևոր է: Իր հերթին Ասորի Ուղղափառ Եկեղեցու Հովվապետը խորին երախտագիտություն հայտնեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ջերմ ընդունելության համար՝ ընդգծելով, որ դարեր շարունակ երկու քույր եկեղեցիները միասին անցել են նահատակության ու փորձությունների միջով, և այսօր ևս՝ Մերձավոր Արևելքի ու Հայաստանի համար այս դժվարին օրերին, իրենց միասնականությունն ու աղոթքը զորակցության կենդանի վկայություն են երկու ժողովուրդների համար:

Խոսքի ավարտին Մոր Իգնատիուս Եփրեմ Բ Պատրիարքը աղոթք առաքեց առ Բարձրյալն Աստված Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պայծառության, հայ ժողովրդի խաղաղ ու բարօր կյանքի համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իսպանիայից ժամանած պատվիրակությանը

Ապրիլի 16-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իսպանիայից ժամանած գործարարների՝ ուղեկցությամբ Իսպանիայի Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) և Իսպանիայի Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու եկեղեցական խորհրդի ատենապետ տիար Լևոն Գրիգորյանի:

Հանդիպման ընթացքում պատվիրակության անդամները նշեցին, որ Հայաստան այցի նպատակն է երկու երկրների միջև գործնական կապերի ընդլայնումն ու տնտեսական համագործակցության զարգացումը: Հյուրերը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, առանձնակի կարևորությամբ ընդգծեցին, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին իրենց այցելությունը պայմանավորված է հայ և իսպանացի ժողովուրդների միջև ձևավորված պատմական, հոգևոր և մշակութային կապերով, ինչպես նաև ընդհանուր քրիստոնեական արժեքներով:

Վեհափառ Հայրապետը ողջունեց և իր օրհնությունը բերեց ներկաներին՝ հաջողություններ ու բարի արդյունավորում մաղթելով նրանց ծրագրերին և նախաձեռնություններին, որոնք կնպաստեն հայ և իսպանացի ժողովուրդների բարեկամական հարաբերությունների ամրապնդմանն ու փոխճանաչողության խորացմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց միջազգային համաժողովի մասնակից փաստաբաններին

Ապրիլի 24-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց ՀՀ փաստաբանների պալատի նախաձեռնությամբ Երևանում գումարված միջազգային համաժողովի մասնակից փաստաբաններին, այդ թվում՝ Ֆրանսիայի փաստաբանական միությունների ղեկավարներին՝ գլխավորությամբ ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանի:

Հանդիպմանը տիար Բաբայանը, Նորին Սրբությանը ներկայացնելով հյուրերին, տեղեկացրեց, որ համաժողովի շրջանակներում նրանք նախ այցելել են Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակին, ապա ժամանել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ ստանալու Հայոց Հայրապետի օրհնությունը, ինչպես նաև ծանոթանալու Հայոց Եկեղեցու առաքելությանն ու ազգային-հասարակական կյանքում ունեցած դերակատարությանը:

Իր հերթին ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտոր տիար Արա Զոհրաբյանը, երախտագիտություն հայտնելով ընդունելության համար, Ամենայն Հայոց Հայրապետին փոխանցեց իրավաբանական հանրության զորակցությունը՝ Եկեղեցու առջև ծառացած արդի մարտահրավերների դիմագրավման ճանապարհին:

Ողջունելով ներկաներին՝ Վեհափառ Հայրապետն անդրադարձ կատարեց 20-րդ դարասկզբին հայ ժողովրդի նկատմամբ իրագործված մեծագույն ոճրագործությանը և արձանագրեց, որ պատմական արդարության հանդեպ լռությունն ու ոչ համարժեք դատապարտումը ծնում են նորանոր ողբերգություններ: Այս առնչությամբ Նորին Սրբությունն իր գնահատանքը փոխանցեց Ֆրանսիայի բարեկամ ժողովրդին և իշխանություններին՝ Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման, ինչպես նաև ցեղասպանությունը վերապրած ֆրանսաբնակ հայորդիների նկատմամբ հոգածու վերաբերմունքի համար:

Իր խոսքում Նորին Սրբությունը կարևորեց նաև նմանօրինակ միջազգային համաժողովների անցկացումը՝ ընդգծելով իրավապաշտպան հանրության անփոխարինելի դերը ճշմարտության, արդարության և իրավունքի գերակայության հաստատման գործում:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետն իր բարձր գնահատանքը հայտնեց փաստաբաններին՝ արդյունավոր ընթացք մաղթելով համաժողովի աշխատանքներին և արգասաբեր գործունեություն՝ իրենց մասնագիտական առաքելությանը:

Հայտարարություն

ՀՀ արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայության պետի ապօրինի որոշմամբ արգելվել է Հայոց Եկեղեցու կողմից նշանակված եկեղեցականների մուտքն ազատազրկման վայրեր: ՔԿՀ պետը փաստացի դադարեցրել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու քրեակատարողական հիմնարկների հոգևոր ծառայությունը, միևնույն ժամանակ, շրջանցելով Մայր Աթոռը և անտեսելով իրավական կարգավորումները, անհատ եկեղեցականների հետ կնքել է աշխատանքային պայմանագրեր: Այս քայլը իշխանությունների հերթական թիրախավորած ու հակաեկեղեցական արշավն է՝ սահմանափակելու օրենսդրությամբ երաշխավորված Հայոց Եկեղեցու հոգեխնամ առաքելությունը հանրային կյանքում, ինչը դրսևորվել է նաև ՀՀ Զինված ուժերում և կրթական ոլորտում:

«Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքի 10-րդ հոդվածով ամրագրված է ազատազրկման վայրերում Հայոց Եկեղեցու հոգեխնամ գործունեություն ծավալելու առաքելությունը, իսկ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածը Քրեակատարողական հիմնարկներում Հայ Եկեղեցու հոգեխնամ առաքելությունը համարում է ազգային Եկեղեցու մենաշնորհ և օրենքի ուժով երաշխավորում պետության կողմից այդ գործունեությանը չխոչընդոտելու պարտականությունը:

Ըստ այդմ՝ մերժելի է այն փաստը, որ Քրեակատարողական ծառայության պետը, անտեսելով իր վերադաս նախարարության և Հայոց Եկեղեցու միջև կնքված պայմանագիրը, քրեակատարողական հիմնարկներում հոգեխնամ ծառայության իրականացման համար կատարել է ինքնակամ տնօրինումներ: Մեկընդմիշտ պետք է արձանագրել, որ վերոհիշյալ օրենքների և ՀՀ արդարադատության նախարարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև կնքված պայմանագրի համաձայն՝ հոգեխնամ գործունեություն իրականացնող սուբյեկտը ոչ թե անհատ քահանան է, այլ Հայոց Եկեղեցին:

Նման գործելակերպը կոպիտ միջամտություն է Եկեղեցու ներքին կյանքին և կազմաքանդում է Եկեղեցու կանոնակարգված ու կազմակերպված հովվական ծառայությունը՝ այն դարձնելով անհատական նախաձեռնություն և վարչական կամայականություն: Եկեղեցու դեմ շարունակվող այսօրինակ ապօրինի գործողությունները տարակույս չեն թողնում, որ իշխող քաղաքական ուժը հակաեկեղեցականությունը վերածել է պետական քաղաքականության, ինչը

կործանարար է, որով և՝ խստագույնս դատապարտելի:

Տարիներ շարունակ քրեակատարողական հիմնարկներում իրականացվող հոգևոր ծառայությունը եղել է Հայոց Եկեղեցու կարևոր առաքելությունը՝ միտված ազատազրկված անձանց հոգևոր խնամքին, ապաշխարությամբ նրանց վերափոխմանը և հասարակություն արժանապատիվ վերադարձին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հորդորում է ՀՀ արդարադատության նախարարությանը հարգել օրենքն ու եկեղեցական ընկալյալ կարգը և չխոչընդոտելով Եկեղեցու առաքելությունը՝ վերականգնել քրեակատարողական հիմնարկներում հոգևոր ծառայության բնականոն ընթացքը:

Հայտարարություն

Վրդովմունքով տեղեկացանք, որ Ադրբեջանի իշխանությունները հողին են հավասարեցրել Ստեփանակերտ քաղաքի Սուրբ Հակոբ եկեղեցին և հարակից տարածքում գտնվող խաչքարերն ու կոթողները, որոնք, ըստ ադրբեջանական աղբյուրների, իբրև թե անօրինական և ապամոնտաժման ենթակա կառույցներ էին: Խիստ մտահոգիչ են նաև Ստեփանակերտի Առաջնորդանիստ Սուրբ Աստվածածին մայր տաճարի ոչնչացման վերաբերյալ ստացվող տեղեկությունները:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը խստորեն դատապարտում է Ադրբեջանի իշխանությունների կողմից իրականացվող Արցախի հոգևոր և մշակութային ժառանգության հետևողական ոչնչացումը: Ակնհայտ է, որ Ադրբեջանի իշխանությունը շարունակում է թիրախավորել հայկական քրիստոնեական սրբավայրերը՝ նպատակ ունենալով ջնջել հայկական հետքն Արցախից:

Պետական մակարդակով իրագործվող այս վանդալիզմը հերթական անգամ փաստում է, որ Ադրբեջանի հայատյաց քաղաքականությունը որևէ փոփոխություն չի կրել, որով և կասկածելի են դառնում Հայաստանի հետ կայուն ու երկարատև խաղաղություն հաստատելու մասին հայտարարությունները:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը կոչ է անում ՀՀ կառավարության ղեկավարին և իշխանության ներկայացուցիչներին հրատապ ու գործուն քայլեր ձեռնարկել՝ կանխելու Արցախի հոգևոր և մշակութային ժառանգության համակարգված յուրացումն ու ոչնչացումը:

Կոչ ենք անում նաև մշակութային ժառանգության պահպանությամբ, տարածաշրջանում ժողովուրդների խաղաղ համակեցությամբ և փոխգործակցությամբ շահագրգիռ բոլոր պետություններին ու միջազգային կազմակերպություններին ազդու միջոցներ ձեռնարկել՝ կասեցնելու մշակութային ոճրագործություններն Արցախում:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Հայ Եկեղեցու՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված գործունեությունը Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրոք

«Ցեղասպանության նահատակներն այսօր երկնքի արքայության լուսեղեն օթևաններում մարտիրոսության պսակով զարդարված արդարության, մարդասիրության, խաղաղության հովանավոր սրբեր են, որոնց բարեխոսությունը երկնքից Աստծո ողորմության ու շնորհների աղբյուրն է բացում այնտեղ, ուր տկարանում է արդարությունը, խախտվում են խաղաղության անդորրն ու ապահովությունը, ուր ոտնահարվում են մարդկանց և ժողովուրդների իրավունքները, սպառնալիքներ են հառնում ընդդեմ հասարակությունների բարօր կեցության, մոլեգնում են հալածանքներ հավատքի և ինքնության դեմ»:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Մուտք

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը երկարատև, բազմաշերտ և համալիր պայքար է, որն ընդգրկում է պատմաքաղաքական, իրավական, մշակութային և հոգևոր բաղադրիչներ: Հայոց ցեղասպանությունը՝ որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն, ոչ միայն հայ ժողովրդի նկատմամբ իրականացված զանգվածային բնաջնջման քաղաքականություն էր, այլև մարդկության դեմ ուղղված ծանրագույն ոճրագործություն, որի հետևանքներն այսօր իսկ չեն կորցրել իրենց ազդեցությունը միջազգային հարաբերությունների և տարածաշրջանային քաղաքականության վրա: Պատմաքաղաքական առումով այն կերպավորվեց նոր իրողություններ՝ կապված ազգային ինքնության, Սփյուռքի ձևավորման և տարածաշրջանային ուժային հավասարակշռության փոփոխության հետ:

Իրավական տեսանկյունից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը սերտորեն առնչվում է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներին, մասնավորապես՝ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ-ի) կողմից ընդունված ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժման կոնվենցիայի դրույթներին: Չնայած այն հանգամանքին, որ կոնվենցիան ընդունվել է հետագայում, ցեղասպանության փաստի ճանաչումը դիտարկվում է որպես պատմական արդարության վերականգնման և նման հանցագործությունների կանխարգելման կարևոր նախադրյալ: Այս համատեքստում միջազգային ճանաչումը ձեռք է բերում ոչ միայն քաղաքական, այլև իրավական և բարոյական նշանակություն՝ նպաստելով համաշխարհային մակարդակով պատասխանատվության մշակույթի ձևավորմանը:

2015 թ. ապրիլի 23. Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման արարողությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Միևնույն ժամանակ, Հայոց ցեղասպանության գնահատականն ունի նաև խորքային հոգևոր և արժեհամակարգային հիմք: Դա ոչ միայն հայ ժողովրդի ազգային ողբերգությունն է, այլև հավատքի, ինքնության և գոյատևման փորձություն է, որի հաղթահարման համար առանցքային դեր է խաղացել Հայ Առաքելական Եկեղեցին: Եկեղեցին դարեր շարունակ հանդես է եկել որպես ազգային հիշողության կրող և պահպանող հաստատություն՝ փոխանցելով սերունդներին ոչ միայն ողբերգության հիշողությունը, այլև վերածննդի և հարատևման գաղափարը:

Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն է ստանում Գարեգին Բ-ի գահակալության շրջանը (1999-ից մինչ օրս), որի ընթացքում Հայ Առաքելական Եկեղեցին առավել համակարգված և նախանձախնդիր կերպով ներգրավվեց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում: Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ իրականացվել են հետևողական և նպատակային քայլեր՝ ուղղված ոչ միայն ցեղասպանության պատմական փաստի միջազգային հաստատմանը, այլև դրա համամարդկային ընկալման խորացմանը: Այդ նախաձեռնությունները նպաստել են, որ Հայոց ցեղասպանության հարցը շարունակաբար մնա միջազգային օրակարգում՝ ձեռք բերելով նոր իրավաքաղաքական և հոգևոր ընդգրկում:

Եկեղեցու դերի վերաիմաստավորում

Գարեգին Բ-ի գահակալության տարիներին Հայ Առաքելական Եկեղեցին զգալիորեն ընդլայնեց իր դերակատարությունը ոչ միայն հոգևոր, այլև համազգային և միջազգային նշանակության խնդիրների շրջանակում: Եկեղեցու գործունեությունը դուրս եկավ զուտ կրոնական դաշտից և ընդգրկեց պատմական հիշողության պահպանման, ազգային ինքնության ամրապնդման և պատմական արդարության վերականգնման ուղղությամբ համակարգված նախաձեռնություններ: Այս համատեքստում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը դարձավ Եկեղեցու առաջնահերթություններից մեկը՝ դիտարկվելով ոչ միայն որպես հայ ժողովրդի ողբերգական անցյալի իրավաքաղաքական գնահատման խնդիր, այլև որպես համամարդկային նշանակություն ունեցող բարոյական ու քաղաքակրթական մարտահրավեր:

Գարեգին Բ-ի նախաձեռնությամբ և հովանավորությամբ իրականացված միջոցառումները՝ միջազգային համաժողովներ, միջեկեղեցական հանդիպումներ և հիշատակի արարողություններ, նպաստեցին այն գաղափարի տարածմանը, որ ցեղասպանությունների ճանաչումն ու դատապարտումը համաշխարհային անվտանգության և մարդկային իրավունքների պաշտպանության կարևոր բաղադրիչներ են: Այս մոտեցումը համահունչ է ժամանակակից միջազգային իրավունքի և Միավորված ազգերի կազմակերպության շրջանակում ձևավորված այն սկզբունքներին, որոնք ուղղված են ցեղասպանությունների կանխարգելմանը և «այլևս երբեք» գաղափարի իրականացմանը:

Վեհափառ Հայրապետն իր քարոզներում, ուղերձներում և միջազգային հարթակներում ունեցած ելույթներում բազմիցս շեշտադրել է, որ պատմական հիշողության պահպանումը չպետք է վերածվի թշնամանքի կամ վրեժի խթանման միջոցի, այլ պետք է ծառայի արդարության վերականգնմանը, հաշտեցման հնարավորությունների ստեղծմանը և կայուն խաղաղության հաստատմանը: ➥ էջ 4, 7

Հայ Եկեղեցու՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված գործունեությունը Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրոք

2015 թ. ապրիլի 12. Գարեգին Բ Կաթողիկոսը Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում՝ Ֆրանցիսկոս Պապի՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված Սուրբ Պատարագին: Պատարագի ընթացքում Ֆրանցիսկոս Պապը երկրորդ անգամ կատարվածը բնորոշեց ցեղասպանություն եզրույթով՝ վերահաստատելով Հովհաննես-Պողոս պապի՝ 2001 թ. հռչակագրի ձևակերպումը: Պատարագի ավարտին հայկական ծեսով կատարվեց հոգեհանգստյան արարողություն նահատակների համար:

2016 թ. հունիսի 24. Հռոմի Ֆրանցիսկոս Պապը Ծիծեռնակաբերդում: Այցի ընթացքում Գարեգին Բ Հայրապետի և Ֆրանցիսկոս Պապի մասնակցությամբ էկումենիկ աղոթք կատարվեց Խոր Վիրապի վանական համալիրում, իսկ հունիսի 26-ին երկու եկեղեցապետերը համատեղ հռչակագիր ստորագրեցին, որը վկայակոչում էր Վատիկանի կողմից Հայոց ցեղասպանության ավելի վաղ ճանաչումը:

↩ էջ 3

Այս գաղափարական դիրքորոշումը կարևոր ազդեցություն է ունեցել միջազգային հանրության հետ կառուցողական երկխոսության ձևավորման վրա՝ նպաստելով նրան, որ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը ներկայացվել է ոչ թե որպես նեղ ազգային օրակարգ, այլ որպես համամարդկային արժեքների պաշտպանության և պատմական արդարության հաստատման անհրաժեշտություն. *«Աշխարհի և մարդկության ապահով ու բնականոն կյանքը խաթարող ոճրագործությունները որոշապես հետևանք են նաև Հայոց ցեղասպանության համընդհանուր դատապարտման հապաղման» (Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նիստին ընթերցված ուղերձից):*

2015 թվականը՝ Հայոց ցեղասպանության զոհերի սրբադասման տարեթիվ

Գարեգին Բ-ի գահակալության շրջանի կարևորագույն և պատմականորեն նշանակալի տարեթվերից առանձնանում է 2015 թվականը, որը նշանավորվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը հիշատակող համազգային և համաշխարհային միջոցառումների կազմակերպմամբ: Այս տարելիցը դարձավ ոչ միայն ոգեկոչման, այլև քաղաքական, իրավական և հոգևոր համախմբման յուրահատուկ հանգրվան, որի ընթացքում Հայաստանի Հանրապետությունը, Սփյուռքը և Հայ Առաքելական Եկեղեցին հանդես եկան համադրական և համակարգված դիրքորոշմամբ՝ ուղղված Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացի խթանմանը:

Տարելիցի շրջանակներում առանձնահատուկ նշանակություն ունեցավ Հայ Առաքելական եկեղեցու իրականացրած աննախադեպ և բացառիկ քայլը՝ ցեղասպանության ընթացքում նահատակված հայերի համընդհանուր սրբադասումը: 2015 թվականի ապրիլի 23-ին Մայր Աթոռում տեղի ունեցած սրբադասման արարողությունն իր բնույթով եզակի էր ոչ միայն հայ եկեղեցական պատմության, այլև համաշխարհային քրիստոնեական ավանդության մեջ, քանի որ առաջին անգամ միաժամանակ սրբադասվեց շուրջ 1,5 միլիոն նահատակ՝ առանց անհատականացվող ընթացակարգի՝ ընդգծելով նրանց հավաքական վկայությունը և նահատակությունը: Այս գործողությունն ուներ աստվածաբանական խորքային հիմք՝ ներկայացնելով ցեղասպանության զոհերին որպես հավատքի համար նահատակվածներ և ընդգծելով նրանց տեղը Եկեղեցու սրբերի շարքում:

2001 թ. սեպտեմբերի 27. Գարեգին Երկրորդը և Հովհաննես Պողոս Երկրորդը ստորագրում են Համատեղ հռչակագիր՝ Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ: Եվս մեկ Համատեղ հայտարարություն երկու եկեղեցապետերի միջև ստորագրվել էր 2000 թ. նոյեմբերի 29-ին:

Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու պարագայում վեցդարյա ընդմիջումից հետո սրբադասում իրականացնելու և այդ սրբադասումը բոլոր նահատակների վրա տարածելու համարձակ գաղափարը հայտնի էր դեռևս Գարեգին Ա Վեհափառի՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս եղած տարիներից: 1985-ին իր «Եօթը ողջոյն նահատակաց եօթանասնամեակին» աշխատության մեջ, դիմելով նահատակներին, Գարեգին Ա Վեհափառն իր համոզմունքն է հայտնում այս կապակցությամբ. *«Եւ կու գայ օրը, երբ այլևս բնականօրէն ճանչցուած ձեր սրբութիւնը կը դառնայ կանոնականացեալ սրբադասում, որուն արժանի էք մեր բոլորի խիղճերուն, քրիստոնէական հաւատքի անկեղծագոյն վկայութեամբը»:*

Այնուհետև՝ 1989-ին, Սուրբ Էջմիածնում երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ հանդիպման ժամանակ որոշվել է հայոց նահատակների սրբադասման արարողությունն իրականացնել հաջորդ տարի, և ապրիլի 29-ին էլ ստորագրվել է հայ ժողովրդին ուղղված համատեղ հաղորդագրություն, որտեղ ասվում է. *«Տրուած լինելով, որ յառաջիկայ տարին 75-ամեակն է մեր նահատակների զոհաբերման, առաջադրում ենք մինչև 1990 թուականի ապրիլ ամիսը հարկ եղած նախապատրաստական աշխատանքները յառաջ տանել՝ իրականացնելու համար նրանց սրբադասումը՝ ի շարս տօնելի սրբոց Եկեղեցւոյս Հայաստանեայց»:* Սրբադասումն ինչ-ինչ պատճառով չկայացավ, սակայն, ինչպես տեսնում ենք, գաղափարը մնաց եկեղեցական օրակարգում, և այն իրականություն դարձավ 25 տարի անց:

Սրբադասման կարգի վերականգնման հարցը գործնական փուլ թևակոխեց միայն 2005 թ.: Գարեգին Բ-ի և Արամ Ա-ի հայրապետական տնօրինություններով ստեղծվեց Սրբադասման հանձնաժողով՝ հարցը հանգամանորեն ուսումնասիրելու և առաջիկա Եպիսկոպոսաց ժողովին ներկայացնելու նպատակով: 2013 թ. սեպտեմբերի 24–27-ին Մայր Աթոռում գումարված Եպիսկոպոսաց ժողովը քննարկեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում սրբադասման ավանդության վերականգնման հարցը և այդ շրջագծում Հայոց ցեղասպանության զոհերի սրբադասման հետ առնչվող խնդիրները. որոշեց որդեգրել Հայոց ցեղասպանության նահատակների հավաքական սրբադասման սկզբունքը:

Հաստատվեցին Հայ Եկեղեցու սրբադասման ծիսակարգը և շարականի կանոնը («Հրաշացան Պակուցմամբ…» ԴԿ), ժամամուտը (Ի յիշատակի….), վկայաբանությունը և սրբապատկերի նախօրինակը: Որպես ամենամյա եկեղեցական հիշատակության տոնացուցային օր սահմանվեց ապրիլի 24-ը՝ *«Յիշատակ սրբոց նահատակաց, որք կատարեցան յընթացս Ցեղասպանութեանն Հայոց վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց»:*

Սրբադասման արարողությունը տեղի ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ հանդիսավոր արարողակարգով, միջազգային բազմաթիվ պատվիրակությունների, եկեղեցական առաջնորդների և քաղաքական գործիչների մասնակցությամբ: Այն ուղեկցվեց համազգային զանգերի ղողանջով և լռության րոպեով՝ խորհրդանշելով համահայկական և համաշխարհային հիշողության միասնությունը: Միջազգային լրատվամիջոցները լայնորեն լուսաբանեցին միջոցառումները, և Հայոց ցեղասպանության թեման կրկին հայտնվեց համաշխարհային հանրության ուշադրության կենտրոնում:

Այս իրադարձության նշանակությունը չի սահմանափակվում միայն հոգևոր հարթությամբ: Սրբադասումը միաժամանակ հստակ քաղաքական և բարոյական ուղերձ էր միջազգային հանրությանը՝ վերահաստատելով, որ ցեղասպանության զոհերի հիշատակը չի կարող մոռացվել կամ ենթարկվել պատմական վերանայման: Այն ընդգծեց պատմական արդարության վերականգնման անհրաժեշտությունը և զորեղացրեց ցեղասպանության ճանաչման պահանջի բարոյական հիմնավորումը: Այս համատեքստում Հայ Առաքելական Եկեղեցին՝ Գարեգին Բ-ի առաջնորդությամբ, հանդես եկավ որպես ոչ միայն հոգևոր, այլև հանրային և միջազգային ազդեցիկ դերակատար՝ նպաստելով ցեղասպանության ճանաչման գործընթացի նոր փուլին:

2015 թ. ապրիլի 12-ին Նորին Սրբությունը Վատիկանում մասնակցեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով Սուրբ Պետրոսի տաճարում Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի մատուցած Ս. Պատարագին, որի ընթացքում Սուրբ Գրիգոր Նարեկացին Կաթոլիկ Եկեղեցու կողմից հռչակվեց «Եկեղեցու վարդապետ»: Պատարագի ավարտին հայկական ծեսով կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ Մեծ եղեռնի նահատակների համար, որից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքն ուղղեց Ֆրանցիսկոս Պապին և ներկա հավատավոր ժողովրդին:

Ավելին՝ 100-րդ տարելիցի միջոցառումները ներառեցին միջազգային գիտաժողովներ, միջկրոնական աղոթքներ, մշակութային ծրագրեր և դիվանագիտական նախաձեռնություններ, որոնք միտված էին ձևավորելու ցեղասպանության վերաբերյալ համապարփակ գիտական և հանրային խոսույթ: Այս ամենը վկայում է, որ 2015 թվականը դարձավ շրջադարձային փուլ ոչ միայն հիշողության քաղաքականության, այլև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ինստիտուցիոնալացման և խորացման առումով:

Սփյուռքի համախմբում

Գարեգին Բ-ի գահակալության շրջանում առանձնահատուկ կարևորություն է տրվում հայկական Սփյուռքի ներուժի համակարգված ներգրավմանը՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դրա վերաբերյալ համաշխարհային իրազեկման գործընթացում: Համաշխարհայնացման պայմաններում, երբ սփյուռքահայ համայնքները տարածված են տասնյակ երկրներում՝ Եվրոպայից մինչև Ամերիկա, Մերձավոր Արևելքից մինչև Ավստրալիա, Հայ Առաքելական Եկեղեցին, Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ, հանդես եկավ որպես համահայկական ինքնության պահպանման և համախմբման առանցքային հաստատություն:

Գարեգին Բ-ի նախաձեռնությամբ ամրապնդվում են եկեղեցական թեմերի միջև կապերը, ընդլայնվում թեմական կառույցների գործունեության շրջանակը, խթանվում նրանց մասնակցությունը ոչ միայն հոգևոր, այլև կրթական, մշակութային և հասարակական-քաղաքական նախաձեռնություններին: ➥ էջ 7

«Հայրենիքի փրկությունը թո՛ղ լինի գերագույն օրենքը»

Հարցազրույց «Արարատ» ռազմավարագիտական կենտրոնի տնօրեն, պատմաբան և քաղաքագետ Արմեն Այվազյանի հետ

— Պարո՛ն Այվազյան, աշխարհաքաղաքական արդի իրավիճակում Հայոց ցեղասպանության պահանջատիրությունը ի՞նչ դրական արդյունքների և բացասական հետևանքների կարող է հանգեցնել: Հակասո՞ւմ է արդյոք Հայոց ցեղասպանության հիմնախնդրի զարգացումը Հայաստանի Հանրապետության անվտանգությանը, և մի՞թե պետք է ուրանալ արևմտահայության ժառանգորդների ազգային իրավունքները, ինչպես դա արվում է արցախահայության նկատմամբ:

— Այդ հարցին պատասխանելու համար նախ պետք է հստակ պատկերացնել, թե ինչ նպատակներ էին հետապնդում Հայոց ցեղասպանության կազմակերպիչները՝ Աբդուլ Համիդը և երիտթուրքերը, և համեմատել դրանք այսօրվա Թուրքիայի և Ադրբեջանի ղեկավարության՝ Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ վարած քաղաքականության հետ:

1893—1923 թթ. տեղի ունեցած Հայոց ցեղասպանությունն ունեցել է չորս հիմնական փուլ, որոնց ընթացքում հայկական քաղաքակրթությունը բնաջնջվել է իր բնիկ տարածքի մեծ մասից՝ խլելով ավելի քան 2 միլիոն հայերի կյանք: Մասնավորապես՝ շուրջ 300 000 հայ ոչնչացվել է 1894—1896 թթ., 30 000-ը՝ 1909 թ., 1,5 միլիոնը՝ 1915—1916 թթ., և շուրջ 30 000-ը՝ 1917—1922 թթ.:

Ցեղասպանությունն ուղղված էր ամբողջ հայ ժողովրդի դեմ: Այն իրականացվել է ոչ միայն Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Օսմանյան կայսրության այլ շրջաններում, այլև Արևելյան Հայաստանի այն տարածքներում, ուր հասել են թուրքական ջարդարար զորքերն ու նրանց դաշնակից կովկասյան թաթարական զինված խմբերը: Հետևաբար՝ ցեղասպանության զոհերի ժառանգները ոչ միայն սփյուռքահայերն են, այլև ներկայիս Հայաստանի Հանրապետության քաղաքացիները՝ առանց բացառության, քանի որ այն ուղղված էր ամբողջ հայության դեմ: Առավել ևս, որ Հայաստանի Հանրապետության բնակչության զգալի մասը Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայության ուղղակի ժառանգներն են:

Ավելին, միայն Հայաստանի Հանրապետությունը՝ որպես միջազգայնորեն ճանաչված պետություն, ունի իրավունք և հնարավորություն միջազգային իրավական ատյաններում բարձրացնելու Հայոց ցեղասպանության հարցը:

Ո՞րն էր Հայոց ցեղասպանության բուն նպատակը: Այն ոչ այնքան հայերի՝ որպես առանձին էթնոսի ֆիզիկական բնաջնջումն էր, որքան Հայաստանի ոչնչացումը՝ որպես մի երկրի, որն ուներ անկախ պետականությունը վերահաստատելու ժողովրդագրական, գաղափարական, քաղաքական և մշակութային բոլոր նախադրյալները: Վերջին հաշվով, ցեղասպանությունն ուղղված էր Հայաստանի պետականության վերականգնման հնարավորության դեմ: Ըստ էության, հայերը բնաջնջվեցին հենց որպես այդ քաղաքական հնարավորության կրողներ:

Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից դուրս՝ Օսմանյան կայսրության այլ շրջաններում, հայերի ոչնչացումը նույնպես նպատակ ուներ վերացնելու հայերի հետագա որևէ պահանջները իրենց պատմական հայրենիքի նկատմամբ: *Այսպիսով՝ նպատակը Հայաստանի ոչնչացումն էր, իսկ միջոցը՝ հայերի բնաջնջումը*: Ոչնչացվեցին հայ ժողովրդի վերնախավը, հասարակական կառուցվածքը, հազարամյակների պատմություն ունեցող կրթական, եկեղեցական և համայնքային ճյուղավորված համակարգերը, ինչպես նաև այդ հողում ստեղծված հայկական ողջ մշակույթը: Եվ ամենակարևորը՝ ցեղասպանության հետևանքով հայությունը կորցրեց իր հինգհազարամյա կենսատարածքի մեծ մասը:

— Թուրքիայի քաղաքականությունը Օսմանյան կայսրությունից մինչև այսօր փոխվե՞լ է արդյոք, և իրատեսակա՞ն են միթե այն հայացքները, որ թուրքական պետական քաղաքականությունը բարեփոխվել է և այլևս ուղղված չէ հայկական ինքնության ոչնչացման դեմ: Խաղաղության հեռանկարը, որ հայ ժողովրդին քարոզվում է այսօր, սին պատրա՞նք է, քաղաքական խաբեությո՞ւն, թե՞ պատմական հնարավորություն:

— Փոխվե՞լ է արդյոք Թուրքիայի և Ադրբեջանի քաղաքականությունը Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ: 1991 թ. ԽՍՀՄ-ի փլուզումից անմիջապես հետո այդ ֆաշիստական պետությունները որդեգրեցին նույն հակահայկական ուղեգիծը՝ նպատակ ունենալով թուլացնել և ոչնչացնել Հայաստանը: Սկզբում իրականացվեց Ադրբեջանի ԽՍՀ-ի տարածքում մնացած հայաբնակ շրջանների հայաթափումը, այնուհետև դատարկվեց Արցախը, ապա նման փորձեր կատարվեցին Հայաստանի Հանրապետության դեմ՝ հատկապես Սյունիքում և ՀՀ-ի արևելյան ամբողջ սահմանի երկայնքով:

Այս պահի դրությամբ, հաղթահարելով հայ ժողովրդի կատաղի դիմադրությունը, նրանց հաջողվել է իրականացնել այդ հրեշավոր ծրագրի առաջին փուլը. Արցախը հայաթափվել է, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից բռնազավթվել է շուրջ 240 քառ. կմ՝ ներառյալ ռազմավարական նշանակության բարձունքներ: Հայաստանի նկատմամբ քաղաքական ճնշումն աստիճանաբար ավելի ու ավելի աճում է:

Ադրբեջանը և նրան մշտապես ուղղորդող ու թիկունքն ապահովող Թուրքիան Հայաստանից, ըստ էության, պահանջում են հրաժարվել ինքնիշխան պետականության լիարժեք իրացումից և ենթարկվել իրենց պայմաններին՝ կրճատել և, ըստ էության, լուծարել Հայկական բանակը, տրամադրել Սյունիքով անցնող ճանապարհներն ու հաղորդակցությունները, փոփոխել Սահմանադրությունը, վերանայել պատմության դասագրքերը, հրաժարվել Հայոց ցեղասպանության հիշողությունից և Արցախ վերադարձի անքակտելի իրավունքից, Հայաստանում բնակավորել հարյուր հազարավոր ադրբեջանցիների՝ նրանց ուղեկցող թյուրքական «հսկիչ» զորքերով հանդերձ:

Այս պահանջները վկայում են, որ Թուրքիայի և Ադրբեջանի նպատակներն ու մեթոդները չեն փոխվել: Հետևաբար՝ Հայաստանի Հանրապետությունն ու հայությունը պետք է համախմբեն իրենց ամբողջ ներուժը՝ քաղաքական, դիվանագիտական, տնտեսական և պաշտպանական ոլորտներում՝ արդյունավետորեն դիմակայելու համար նրանց հայասպան ծրագրերին: Ուրիշ, այլընտրանքային ճանապարհ պարզապես գոյություն չունի: Հատկապես կարևոր է հուսալի դաշնակիցների ապահովումը, որը լիովին լուծելի խնդիր է:

— Հայաստանի Հանրապետության կառավարության վարած քաղաքականությունը ներկայումս փաստացի միտված է Հայ դատի շարունակության դեմ: Առերևույթ քողարկումով փորձ է արվում ոչ միայն հայ ժողովրդի գիտակցությունից արմատախիլ անելու Հայոց ցեղասպանության հիշողությունն ու պահանջատիրությունը, պատմական Հայաստանի իրողությունը՝ բռնազավթված Արևմտյան Հայաստանով և Արևելահայաստանի հայտնի շրջաններով, այլև կասկածի տակ է դրվում Հայոց ցեղասպանության իրողությունը, սակարկվում միլիոնավոր հայ նահատակների թիվը, պետական արտաքին քաղաքականությամբ անգործության մատնվում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը: Այդ ամենն արվում է հետևողականորեն՝ Արցախից սկսած մինչև Արարատ, Հայոց պատմության գաղափարական վերախմբագրումից մինչև Հայ Եկեղեցու կազմաքանդմանն ուղղված քաղաքական արշավ: Ինչպե՞ս կմեկնաբանեք այս ամենը՝ աշխարհաքաղաքական ճնշո՞ւմ և ներքին անելանելիությո՞ւն, աշխարհաքաղաքացիությո՞ւն՝ ազգային ինքնության ուրացմամբ և հայրենասիրության ոչնչացմամբ, թե՞ մի այլ երևույթ:

— Թե ինչպես են Հայաստանի Հանրապետությունում իշխանության եկել ուժեր, որոնք բացահայտորեն համագործակցում են թշնամու հետ՝ ի վնաս մեր պետության և ժողովրդի, առավել առարկայականորեն կպարզվի ապագայում: Այժմ կարևորն այն է, որ ՀՀ-ի ներկա իշխանությունների քաղաքականությունը քայքայում է երկրի ինքնիշխանությունը տարբեր ուղղություններով: Իրավիճակը բարդ է և վտանգավոր:

Չափազանց խոսուն էր Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան հաջորդ իսկ օրը Երևանում աղմկոտ բաքոսատոնի կազմակերպումը: Դա, անշուշտ, թուրքական պատվեր էր՝ աննախադեպ հարձակում հայոց հիշողության, արժանապատվության, արժեքների, պետականության և առհասարակ հայկականության դեմ: Քանի դեռ ՀՀ-ում տեր ու տիրակալը կոլաբորացիոնիստական ուժերն են՝ մշակութային միջոցառումների անվան տակ իրականացվող նման վնասարարական դրսևորումները, հավանաբար, կշարունակվեն և նույնիսկ կհաճախանան:

Պետք է գիտակցել, որ Փաշինյանն ու ՔՊ-ն սաստկացնելու են թուրքահաճո ուղեգիծը, իսկ առաջիկա ընտրություններում վերարտադրվելու դեպքում անցնելու են Հայաստանը թուրք-ադրբեջանական գաղութի վերածելու անզուսպ քայլերի: Հայաստանում վտանգված են պետականության և ազգային ինքնության գրեթե բոլոր բաղադրիչները, հայկական ամեն ինչ: Նրանք, ովքեր դա չեն գիտակցում, քաղաքականապես մանկամիտ են:

Մեզ բոլորիս ծանր ժամանակներ են սպասում: 2026 թվականը կարող է դառնալ վճռորոշ: Բայց և՝ «Թե Աստված մեզ հետ է, ո՞վ կարող է լինել մեր դեմ» (Հռոմ. 8:31):

— Ո՞րն է Հայ Եկեղեցու դերն ստեղծված իրավիճակում, և առհասարակ ինչպե՞ս եք գնահատում մեր Եկեղեցու գործունեությունը Հայոց ցեղասպանության հիմնախնդրի և հայկական ժառանգության պահպանման ու վերադարձման ուղղությամբ: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ որպես ազգային ինքնակա և համաքրիստոնեական տիեզերական հաստատություն, ինչպե՞ս պետք է դիմադարձի՝ հաղթահարելու հակահայկական և հակապատմական ներքին ու արտաքին սպառնալիքները:

— Հայոց Եկեղեցին ինչպես անցյալում, այնպես էլ այսօր հայկական քաղաքակրթության և ինքնության պաշտպանն ու ջատագովն է: Իր այդ կարգավիճակից բխելով՝ Եկեղեցին և հայ հոգևորականությունը չեն կարող աչք փակել հայոց պատմության ամենաողբերգական էջի՝ ցեղասպանության և դրա հետևանքների՝ տարբեր ձևերով մոռացության մատնելու իշխանական փորձերի վրա: Չէ՞ որ հենց Հայոց Եկեղեցին ու հոգևորականությունն են եղել ցեղասպանության առաջնային թիրախներից մեկը՝ հետևողականորեն և կանխամտածված կերպով ոչնչացվելով: Վերջին տվյալներով՝ ցեղասպանության ընթացքում ավերվել և ոչնչացվել են հայկական 2538 եկեղեցի և 451 վանք, որոնք, բացի կրոնական հաստատություններ լինելուց, նաև կրթական ու մշակութային օջախներ էին, գրչության կենտրոններ, հին ձեռագրերի մատենադարան-պահոցներ... Սպանվել են հազարավոր հոգևորականներ, ովքեր հայության առավել կրթված ու նվիրյալ սոցիալական խավն էին, որը ազգային հավաքական գիտելիքի ու հոգևոր-մշակութային ժառանգության կրողն էր: Այս պայմաններում ինչպե՞ս կարող է Եկեղեցին մոռանալ կամ ուրանալ այդ ամենը, հատկապես երբ մոռացությունն ու ուրացումը լուրջ սպառնալիք են նախևառաջ մեր պետության և ժողովրդի համար: Ուրացումը ոչ միայն բարոյական խզում է անցյալի հետ, այլև ազգային դիմադրողականության կազմալուծում, որը կարող է հանգեցնել ծանր և լիովին կանխատեսելի հետևանքների:

Ցավով պետք է արձանագրել, որ մեր օրերում Հայոց Եկեղեցին ոչ պատահականորեն Հայաստանի Հանրապետությունում զրկված է ազատ գործելու հնարավորությունից: Եկեղեցին ոչ միայն պաշտպանված չէ, այլև ենթարկվում է բացահայտ ճնշումների և հալածանքների. կալանավորված արքեպիսկոպոսներ, Մայր Աթոռի և այլ տաճարների բակերում աղանդավորական խուժան՝ նրան «պաշտպանող» ոստիկանական ուժերով, պետական ուժային և դատական մարմինների կոպիտ միջամտություն Եկեղեցու ներքին կյանքին ու ինքնակառավարման գործընթացներին, ներեկեղեցական ու դավանաբանական կանոնների փոփոխությունների պարտադրանք, պետական ամենաբարձր մակարդակներից գրեթե ամեն օր հնչող վիրավորանքներ, սպառնալիքներ, հայհոյանքներ և շանտաժ — ահա այն միջավայրը, որի մեջ այսօր գոյատևում է Հայոց Եկեղեցին:

Այդ ամենով հանդերձ՝ քրիստոնեական հավատքն ու Եկեղեցին ուժեղանում են առավելապես հալածանքների և քաղաքական ճնշումների պայմաններում: ՀՀ-ի ղեկավարների «հանճարեղ» գործողությունների հետևանքով Հայոց Եկեղեցու վարկը բարձրացել է աննախադեպ աստիճանի՝ հետխորհրդային շրջանի ողջ ընթացքում:

ՀՀ-ի ներկայիս իշխանությունների հրահրած հակաեկեղեցական արշավը ևս մեկ անգամ ապացուցում է, որ Հայաստանի Հանրապետության ներկայիս իշխանության և հայ ժողովրդի շահերը որևէ կետում չեն համընկնում: Ավելին՝ դրանք ուղիղ հակադարձ են: Երբ իշխանությունը պատերազմ է հայտարարում սեփական Եկեղեցուն, փաստացի պատերազմ է հայտարարում իր իսկ ժողովրդի՝ նրա ազգային ինքնությանը, պատմական հիշողությանը և հոգևոր հիմքերին: Ամեն դեպքում, պատմական այս բախման մեջ արդար կողմը հայ ժողովուրդն է և Հայոց Եկեղեցին:

— Հայագիտական ակադեմիական և ոչակադեմիական հաստատություններն ու կազմակերպությունները, ըստ Ձեզ, բավարա՞ր աշխատանք են տանում Հայ դատի կայացման և Հայաստանի իշխող քաղաքական ուժի ապազգային գործունեության կասեցման ու վերաձևման ուղղությամբ:

— Եթե կարճ պատասխանեմ, ՀՀ-ի ակադեմիական և բուհական հիմնարկների ղեկավարությունը ոչ միայն բավարար աշխատանք չի տանում այդ ուղղությամբ, այլև, փաստորեն, բացահայտ կամ լռելյայն սատարում է ներկայիս իշխանությունների ապազգային քաղաքականությանը՝ երբևէ բողոքի ձայն չբարձրացնելով: Այնինչ ակադեմիական և բուհական հաստատությունների ղեկավարները նախևառաջ պետք է լինեն գիտնականներ և հայրենասեր քաղաքացիներ և հետո միայն՝ չինովնիկներ ու բյուրոկրատներ: Հասարակական և բարոյական տեսանկյունից նրանք կրում են ոչ միայն վարչական, այլև հանրային մտքի ու խղճի ձևավորման պատասխանատվություն. նրանց կրավորականությունը ինստիտուցիոնալ հարմարվողականության (կոնֆորմիզմի) դրսևորում է, որը թուլացնում է գիտական համայնքի ինքնավարությունն ու քննադատական ներուժը և խոչընդոտում ժողովրդավարության զարգացմանը:

— Ի՞նչ հանգուցալուծումներ կարող են լինել Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի համար մոտ ապագայում:

— Օրակարգում Հայաստանի անվտանգության և կայունության ապահովումից, նույնիսկ՝ փրկությունից և ազատագրությունից ավելի կարևոր հարց չկա: Ինչպես ասում էին հին հռոմեացիները, «Salus patriae suprema lex esto», այսինքն՝ «Հայրենիքի փրկությունը թող լինի գերագույն օրենքը»:

Հարցազրույցը՝ Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

▲ Վանի Սուրբ Ստեփանոս եկեղեցու ավերակները

◄ Անիի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ավերակները

Հայ Եկեղեցին Հայոց ցեղասպանության ընթացքում

Դեռ Առաջին աշխարհամարտից առաջ Օսմանյան Թուրքիայում արևմտահայերն ունեին հարյուրամյակների ընթացքում կարգավորված եկեղեցական կառուցվածք՝ Կիլիկիո կաթողիկոսություն, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն, Երուսաղեմի հայոց պատրիարքություն, հայոց թեմեր՝ թեմական առաջնորդների գլխավորությամբ: Օսմանյան Թուրքիայի տարածքում կային 50-ից ավելի հայոց թեմեր: Մինչև Առաջին աշխարհամարտը Օսմանյան Թուրքիայի տարածքում գոյություն ունեին հայկական 1388 եկեղեցի և 134 վանք: Միայն Կիլիկիո կաթողիկոսության ենթակայության տակ կային 222 եկեղեցի և 12 վանք: Մինչև պատերազմի սկիզբը արևմտահայոց թեմերը ստանում էին Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը. թեմական առաջնորդները եպիսկոպոս էին ձեռնադրվում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ:

Հայոց Եկեղեցին, ի դեմս Կոստանդնուպոլսի պատրիարքի, Կիլիկիո կաթողիկոսի, թեմերի առաջնորդների, ամբողջությամբ պաշտպանում էր իր ժողովրդի ձգտումները, մանավանդ 1909 թ. Ադանայի ջարդերից հետո ձեռք էր բերել երկարատև ազատություն ու անկախություն: 1912 թ. հուլիսի 19-ին և օգոստոսի 25-ին Աղթամարի կաթողիկոսական տեղապահ Եզնիկ վարդապետ Ներկարարյանն իր նամակներում՝ ուղղված Կ. Պոլսի պատրիարքությանը, հայտնում էր բազմաթիվ հայերի սպանությունների ու թալանի մասին, որ կատարում էին թուրքերն ու քրդերը հայկական գյուղերում, ինչպես նաև այն մասին, որ հայերը սարսափի ներքո ստիպված են լքել հարազատ գյուղերը: Հաճնի թեմական առաջնորդ Պետրոս եպիսկոպոս Սարաջյանը Կ. Պոլսի պատրիարքին զեկուցում էր քուրդ Բեկ Միր-Մեհի գազանությունների մասին, որոնք կատարվում էին Շատախի հայ բնակչության հանդեպ:

Օսմանյան Թուրքիայի կառավարության հակահայկական խստացող տրամադրություններն ստիպեցին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Հովհաննես արքեպիսկոպոս Արշարունուն 1912 թ. սեպտեմբերի 4-ին օգնության դիմել Ամենայն Հայոց Գևորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսին: Պատրիարքը մասնավորապես գրում էր. «Սկսվեց նոր ժամանակաշրջանը՝ ամենուր լի նոր չարիքներով, և այժմ, մասնավորապես, նրանց համար բեմ հանդիսացան Վանի, Աղթամարի, Բիթլիսի, Մուշի, Սղերտի թեմերը. նորերս ստացված հեռագրերը հայտնում են սպանությունների, ավերածությունների, կանանց առևանգման և նույնիսկ անչափահասների իսլամացման մասին»: Պատրիարքը կաթողիկոսին խնդրում էր անհրաժեշտ «ցուցում կամ խորհուրդ տալ, որին ենթարկվելով հնարավոր լինի խելամիտ և գործնական ելք գտնել»:

Հայերի համար ստեղծված կացությունից դուրս գալու ելքը պետք է լիներ 1914 թ. հոկտեմբերի 16-ին Ռուսաստանի և Թուրքիայի միջև սկսված պատերազմը, որը խոստանում էր վերջինիս ջախջախումից հետո արևմտահայերին ազատել թուրքական լծից: Մշո հոգևոր առաջնորդ Ներսես եպիսկոպոս Խարախանյանի՝ 1914 թ. նոյեմբերի 8-ի՝ Կոստանդնուպոլսի պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Եղիայանին ուղղած գրության մեջ նշված է. «Կառավարությունը իր վարվելակերպով հայտնի կընե, որ հայերու վրայե վստահությունը բոլորովին վերացած է, և ինքն է, որ մութ տարրերը կը գրգռէ և կը զինէ հայերու դեմ: ....Կամավորներ հասցնելու նպատակով կամ այդ պատրվակով կառավարությունը գող, ավազակ և սրիկաներ չմնաց, որ չզինէ, օրերս Սասունեն, Խոյեն ասդին և անդին և խումբ-խումբ զինված քրդական կամավորներ բերուեցան, որոնք հայերու դեմ գրգռված են, և ճամբու վրա հանդիպած հայ գյուղերը շատ վնասներ կրեցին: Հաստատուն նշաններ կան, թե կառավարությունը պատրվակ կը փնտրէ գավառիս հայերը աղետներու ենթարկելու, և այս տագնապալի վիճակին հանդեպ շվարած, բացի երկնային պաշտպանութենեն՝ ուրիշ միջոց մը չենք տեսներ»:

Սեպտեմբերի 8-ին Բայազետից Հայոց Բագրևանյաց առաջնորդ Ներսես քահանա Քաջբերունին Գևորգ Ե-ին գրում էր. «Ձերդ Վեհափառությունը թող իրազեկ լինի, որ Ս. Հովհաննու հռչակավոր վանքը հեծելազորաց կենտրոն դարձավ: Մեր հայրերուն սուրբ մասունքները ոտից կոխած լինելեն ի զատ այդ հսկա հոյակապ մենաստանը բոլորովին ավերման ենթարկվեցավ: Զայներս Պոլիս՝ պատրիարքարան չհասեր, պաշարված ենք, միակ հույսն ու փրկությունը Ձերդ Վեհափառության կսպասենք»:

1914 թ. նոյեմբերի 8-ի՝ իր թիվ 1720 կոնդակում կաթողիկոսը, մտահոգվելով Արևմտյան Հայաստանում բնակվող իր հոտի բախտով, գրում էր. «Տաճկական իշխանության առանձնապես անկանոն զորքի և մոլեռանդոց ամբոխի կողմից հայերին սպասում են ցնցումներ, որոնք հազիվ կարող է մարդկային երևակայությունը պատկերացնել: Սակայն մեծ է նաև անդրդվելի իմ հավատը, որ այս պատերազմը վերջնականապես կվճռի արևելյան հարցը և վերջ կդնի հայերի դարավոր տառապանքներին»:

Լինելով իմաստուն և հեռատես հոգևորական՝ Գևորգ Ե Կաթողիկոսը չէր կարող չնկատել, որ Կովկասյան ռազմաճակատի ռազմական գործողությունների հենց սկզբից և հատկապես ռուսական զորքերի՝ թուրքական տարածքները մտնելուց հետո հայ ազգաբնակչությունը, որը գտնվում էր ռազմաճակատի գծից ներս, հայտնվելու էր ծանր վտանգի առջև: Կովկասի փոխարքային ուղղված իր ուղերձում Վեհափառ Հայրապետը գրում էր. «Կովկասյան սահմանի վրա պատերազմական գործողություններն սկսվելու ժամանակից, որոնք առաջացան մեր սևծովյան ափերի վրա տաճկական նավատորմի դավադիր հարձակմամբ, պատերազմի գլխավոր բեմը Տաճկաստանի հետ ներկայացնում է Տաճկահայաստանը, և կասկած չկա, որ սկսված սարսափները հետագայում առաջ կբերեն անհամար և անլսելի դժբախտություններ բազմաչարչար հայ ժողովրդի համար»:

1914 թ. նոյեմբեր-դեկտեմբերին արևմտահայ առաջին գաղթականները հայտնվեցին Նախիջևանում: Տեղի փոխանորդ Սիոն վարդապետը, դիմելով Մայր Աթոռին, գաղթականների համար խնդրեց սննդամթերք և դեղորայք:

1914 թ. դեկտեմբերի 28-ին թիվ 1990 հայրապետական կոնդակով Գևորգ Ե-ն ստեղծեց «Եղբայրական օգնություն Ս. Էջմիածնի գլխավոր կարգադիր հանձնաժողով»՝ Սինոդի անդամ Եփրեմ եպիսկոպոս Սուքիասյանի նախագահությամբ: Եղբայրական օգնության հանձնաժողովներ ստեղծվեցին նաև Երևանի հայրապետական թեմում, Բեսարաբիայում, Նախիջևանում, Ալեքսանդրապոլում, Սալմաստում, Վասպուրականում:

1914 թ. դեկտեմբերի 31-ին Եփրեմ եպիսկոպոսը գրում էր Երևանի փոխթեմական Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանին. «Էջմիածնում ահռելի հեղեղ է, անընդհատ գալիս են նոր զանգվածներ՝ բոլորը սոսկալի պայմաններում-: Չկան ազատ տեղեր, կարող են առաջանալ համաճարակ, հիվանդություններ-:

Նորին Սրբության հովանու ներքո գտնվող Եղբայրական օգնության հանձնաժողովը խնդրում է Ձեզ առանց հետաձգելու խոսել նահանգապետի հետ, որպեսզի հեռագրով գավառապետին արվի անհրաժեշտ կարգադրություն, որպեսզի կարելի լինի փախստականներին անհապաղ ուղարկել գյուղերը: Մանրամասն անվանացանկ կազմել տեղերում ավագների կողմից»:

1915 թ. հունվարի 15-ին ռուսական բանակի գնդապետ Վեբերը հեռագրեց Երևանի փոխթեմական Խորեն եպիսկոպոսին. «Ղարաքիլիսայից Ալաշկերտ հասան հազարավոր կանայք և երեխաներ՝ բոլորը քաղցած ու ցնցոտիավոր: Անհրաժեշտ է 30 ֆուրգոն՝ երեխաների տեղափոխման համար»: Խորեն եպիսկոպոսն օգնության համար դիմեց Կովկասյան բանակի 4-րդ կորպուսի հրամանատար, ծագումով հայ գեներալ Պ. Օգանովսկուն, և նա ուղարկեց կարիքավոր հայերին անհրաժեշտ ամեն ինչ:

«Եղբայրական օգնության» Ս. Էջմիածնի Գլխավոր կոմիտեն 1915 թ. հունիսի 5-ի նիստում որոշեց՝ 1. Ալաշկերտի շրջանում գաղթականներին օգնություն ցույց տալ քայքայված տնտեսությունների վերականգնման համար, 2. գաղթականներին ապահովել գյուղատնտեսական գործիքներով, 3. գաղթականներին վերադարձնել հայրենիք:

Նրանց հոսքը դեպի Արևելյան Հայաստան մեծանում էր: 1915 թ. հուլիսի 10-ին Անդրանիկը Բերկրակալեից հեռագրում է Խորեն եպիսկոպոսին. «Իմ անունից և իմ ժողովրդի անունից խնդրում եմ, Աստծո սիրույն, իրար հետևից Իգդիր ուղարկեք 20 ֆուրգոն՝ հայ գաղթական հայերի համար: Հսկայական քանակով գաղթական է գալիս ձեզ մոտ Վանից, բոլոր տեղերից, Վանա լճի շրջակայքից, ինչպես նաև Մուշի շրջանից: Հացը ուղարկեք հիմա և մինչև այն ժամանակ, քանի դեռ չի ավարտվել գաղթականների հոսքը»:

Կաթողիկոսը գաղթականներին ընդառաջ Իգդիր է ուղարկել Խորեն եպիսկոպոսին, Արսեն վարդապետին, ինչպես նաև հայ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ գաղթականներին անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար: Այս առաքելության իրականացման համար Հակոբ քահանա Խաչվանքյանն Ալեքսանդրապոլից Երևան ուղարկեց 600 փութ հաց:

Արևմտահայությանը փրկելու համար Գևորգ Ե-ն դիմեց ԱՄՆ-ի և Իտալիայի կառավարություններին և Ռուսաստանի արտաքին գործերի նախարարին: ԱՄՆ-ի նախագահին Գևորգ Ե-ն մասնավորապես գրում էր. «Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Միջագետքում, Հալեպի և Մոսուլի միջև, ինչպես նաև Կիլիկիայում և Կ. Պոլսում մի քանի հարյուր հազար հայեր անելանելի վիճակում են, որը սպառնում է նրանց գոյատևմանը: Ռազմական գործողությունների թատերաբեմում հայտնված իմ ժողովրդի միջոցները չնչին են, որպեսզի օգնություն ցույց տա իր թշվառ եղբայրներին: Ընդ որում մենք զրկված ենք օգնությունը տեղ հասցնելու հնարավորությունից: Իմանալով Ձեր մարդասիրական վերաբերմունքը տանջվածների նկատմամբ և Ձեր բարեհոգի սիրտը, դիմում եմ Ձեզ մեծ խնդրանքով՝ ստանձնել Թուրքիայում մահվան դատապարտված իմ ժողովրդին փրկելու և նրան սնունդով, հագուստով և կացարանով ապահովելու նախաձեռնությունը»:

Հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպանության կազմակերպման հիմնական պատճառներից մեկը նաև հայերի դավանանքն էր: Հենց դրանով է բացատրվում այն փաստը, որ Արևմտյան Հայաստանում և ընդհանրապես Թուրքիայում ամենուրեք կոտորածների առաջին թիրախը դառնում էին Հայոց Եկեղեցու սպասավորները: Կոստանդնուպոլսի պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Եղիայանը 1915 թ. դեկտեմբերի 28-ին ԱՄՆ-ի հայոց հոգևոր թեմի առաջնորդական փոխանորդ Արսեն վարդապետ Վեհունուն տեղեկացնում էր. «Առաջնորդներից Կարնո Սմբատ եպիսկոպոս Սաատեթյանն իր ժողովրդին հետ դեպի Միջագետք տարած ժամանակ, Քեմախի մոտերը հրոսակներու կողմե սպանված է: Տրապիզոնի Գեորգ ծ. վարդապետ Թուրյան, Կարնո պատերազմական ատյանեն ղրկված ըլլալով, ճամփուն սպանված է: Շապին-Գարահիսար Վաղինակ ծ. վարդապետ Հազարապետյան կախաղանի վրա իր հոգին ավանդած է տեղական վճիռով: Մշո Վարդան ծ. վարդապետ Հակոբյան բանտին մեջ բրածեծ մահացած է: Տիգրանակերտի Մկրտիչ ծ. վարդապետ Չլղատյան բանտին մեջ գանահար սպանված է: Եվդոկիայի Շավարշ ծ. վարդապետ Սահակյան, ձերբակալվելով Սեբաստիա, ղրկված ատեն ճամբուն սպանված է: Խարբերդի Պսակ ծ. վարդապետ Տեր-Խորենյան շղթայակապ դեպ Տիգրանակերտ այլոց հետ ղրկված ատեն խողխողված է: Յոզղատի Ներսես եպիսկոպոս Դանիելյան Սեբաստիո մոտերը Ալիսի ափերուն ուրիշ 450 յոզղատցիներու հետ սպանված է: Եդեսիո Արտավազդ ծ. վարդապետ Գալենտերյան քաղաքին մեջ սպանված է ուրիշ 60–70 հայերու հետ վերջին ջարդեն առաջ: Բալուի Եզնիկ եպիսկոպոս Գալփակճյանի, Բազելի Սուրեն ծ. վարդապետ Գալեմյանի, Սղերդի Եղիշե վարդապետ Չանոյանի, Չարսանճագի Գևորգ ծ. վարդապետ Նալբանդյանի, Երզնկայի և Քեմախի Մելքիսեդեկ վարդապետ Հովիվյանի, Սամսոնի Համազասպ ծ. վարդապետ Եղեսյանի և Կյուրինի Խորեն եպիսկոպոս Դիմաքսյանի մահը ստույգ է, բայց պարագաները տակավին անծանոթ կը մնան... Չխնայելով նույնիսկ Կիլիկիո Սահակ Ա կաթողիկոսը, որ նա Հալեպի քովերը Պապ աքսորվելով և ապա ղրկեցավ Երուսաղեմ, ուր կմնա այժմ»: ➥ էջ 14

Հայ Եկեղեցու՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված գործունեությունը Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրոք

➥ էջ 3, 4

Հայ Առաքելական Եկեղեցու թեմերը՝ հատկապես Եվրոպայում, Հյուսիսային և Հարավային Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում, վերածվում են այնպիսի հարթակների, որտեղ համադրվում են ազգային հիշողության պահպանումը և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված գործնական քայլերը:

Փաստացիորեն՝ Սփյուռքի եկեղեցական կառույցները կազմակերպում և համակարգում են ապրիլյան ամենամյա հիշատակի միջոցառումները, որոնք հաճախ իրականացվում են տվյալ երկրների պետական և հասարակական կառույցների մասնակցությամբ: Այս միջոցառումները ներառում են ոչ միայն եկեղեցական արարողություններ, այլև գիտաժողովներ, կլոր սեղան-քննարկումներ, ցուցահանդեսներ և հանրային քննարկումներ, որոնցում ներգրավվում են պատմաբաններ, իրավաբաններ, քաղաքագետներ և մարդու իրավունքների պաշտպաններ: Այսպիսի բազմաշերտ գործունեությունը նպաստում է, որ Հայոց ցեղասպանության հարցը ներկայացվի գիտական և իրավական հիմնավորվածությամբ՝ դուրս գալով զուտ հիշատակի շրջանակներից:

Առանձնակի նշանակություն և իմաստ ունի Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակելու 1700-ամյակի արարողությունների շարքում Նորին Սրբության՝ Դեր Զոր 2001 թ. ապրիլի 23-ի ուխտագնացությունը՝ ուղեկցությամբ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ի և ազգային-եկեղեցական նշանավոր գործիչների, որի ընթացքում Վեհափառ Հայրապետն իր խոսքում վերահաստատեց, որ լինելով ցեղասպանության զոհերի ժառանգները՝ մենք տերն ենք մեր նահատակների արդար դատի և իրավունքների: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ Հայոց ցեղասպանության զոհերը չեն կարող մոռացվել, և նրանց ներկայացրեց որպես հավատքի համար տառապած և նահատակված հայորդիների, որոնց հիշատակը սրբագործված է: Այս համատեքստում Դեր Զորը ներկայացվեց ոչ միայն որպես մահվան վայր, այլև սրբավայր, ուր հայերը գալիս են աղոթքի և ուխտի:

Նորին Սրբությունն ուղերձով հանդես եկավ նաև 2007 թ. Կ. Պոլսում, ուր վերստին բարձրաձայնեց Թուրքիայի կողմից իրականացված Հայոց ցեղասպանության անժխտելիությունը:

Բացի այդ՝ Սփյուռքի համայնքները Հայ Եկեղեցու հովանու ներքո եռանդով մասնակցում են տարբեր երկրների քաղաքական կյանքին՝ իրականացնելով լոբբիստական աշխատանք, համագործակցելով խորհրդարանականների, քաղաքական կուսակցությունների և միջազգային կազմակերպությունների հետ: Մի շարք երկրներում ընդունվել են բանաձևեր և օրենքներ, որոնք ճանաչում և դատապարտում են Հայոց ցեղասպանությունը: Այս գործընթացում կարևոր դեր են խաղացել եկեղեցական առաջնորդների և թեմական կառույցների նախաձեռնած հանդիպումները պետական բարձրաստիճան պաշտոնյաների հետ, ինչպես նաև միջեկեղեցական և միջկրոնական երկխոսության ձևաչափերը:

Հատկանշական է նաև, որ Գարեգին Բ-ի գահակալության տարիներին մեծ ուշադրություն է դարձվել Սփյուռքում ազգային ինքնակազմակերպման գործում երիտասարդ սերնդի ներգրավմանը: Եկեղեցու աջակցությամբ ստեղծվում և զարգացվում են կրթական ծրագրեր, երիտասարդական միություններ և մշակութային նախաձեռնություններ, որոնց նպատակն է ձևավորել ազգային ինքնագիտակցություն և պատմական հիշողության պատասխանատու վերաբերմունք: Սա կարևոր գործոն է՝ ապահովելու, որ ցեղասպանության ճանաչման պահանջը պահպանվի և զարգանա նաև ապագա սերունդների շրջանում:

Այսպիսով՝ Սփյուռքի համախմբումը Գարեգին Բ-ի առաջնորդությամբ ստացել է ինստիտուցիոնալ և համակարգված բնույթ՝ վերածվելով համաշխարհային մասշտաբով գործող մի մեխանիզմի, որը համադրում է հոգևոր, մշակութային, գիտական և քաղաքական գործիքները՝ նպաստելով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացի առաջխաղացմանը:

Հայրապետի դիվանագիտական ազդեցությունը

Այն, որ Գարեգին Բ Կաթողիկոսը պաշտոնապես չի մասնակցում պետական դիվանագիտությանը, չի նվազեցնում նրա ազդեցությունը Հայոց ցեղասպանության ճանաչման միջազգային գործընթացում: Գարեգին Բ-ի գործունեությունն ընդգրկում է մի շարք հարթություններ՝ կրոնական, դիվանագիտական և բարոյական, ինչը նրան դարձնում է ոչ պաշտոնական, բայց ուժեղ, ազդեցիկ միջնորդ և հեղինակ՝ միջազգային հանրության ուշադրությունը Հայոց ցեղասպանության հարցին ուղղելու գործում: Նրա ուղերձները հաճախ հնչում են համաշխարհային քաղաքական և կրոնական առաջնորդների ներկայությամբ՝ համաժողովների, ներկայացուցչական ժողովների և համաշխարհային եկեղեցական հանդիպումների ընթացքում: Օրինակ՝ 2015 թվականին՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների ընթացքում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և Սփյուռքի տարբեր երկրների եկեղեցական կենտրոններում նրա ելույթները տեղի էին ունենում պետական պաշտոնյաների, նախարարների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայությամբ: Այս հանդիպումների միջոցով Գարեգին Բ-ն կարողացել է շեշտել Հայոց ցեղասպանության ճանաչման քաղաքական, իրավական և բարոյական անհրաժեշտությունը՝ ընդգծելով նրա համամարդկային նշանակությունը՝ որպես ապագա ցեղասպանությունների կանխարգելման միջոց:

Ավելին՝ Վեհափառ Հայրապետն օգտագործում է միջկրոնական երկխոսության հարթակները՝ հանդիպումներ կազմակերպելով քրիստոնեական այլ ուղղությունների, ինչպես նաև աշխարհիկ առաջնորդների հետ՝ ներառյալ Եվրոպայի, ԱՄՆ-ի և Լատինական Ամերիկայի տարբեր երկրների քաղաքական գործիչները: Այս նախաձեռնությունները նպաստում են նրան, որ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը մշտապես մնա միջազգային օրակարգում, ներկայացվի ոչ միայն որպես հայկական ազգային իրավահարաբերություն, այլև համամարդկային իրավունքների և պատմական արդարության հիմնարար սկզբունք:

Կարճ ասած՝ Գարեգին Բ Կաթողիկոսի խոսքն ու հոգևոր ազդեցությունը «միջնորդական դիվանագիտության» գործիք են, որ ամրապնդում են Սփյուռքի ղեկավարների, գիտնականների և քաղաքական գործիչների ջանքերը՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում: Նրա ուղերձների վերլուծությունը ցույց է տալիս, որ քրիստոնեական եկեղեցու հոգևոր հեղինակությունը կարող է անմիջական ազդեցություն ունենալ միջազգային քաղաքական գործընթացների վրա, հատկապես այնտեղ, որտեղ պատմական արդարության և մարդկային արժեքների հարցերն են գերակայում:

Ամփոփում

Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջնորդությամբ իրականացված գործողությունները՝ սրբադասումից մինչև միջազգային համագործակցություն, զգալիորեն ամրապնդել են հայկական կողմի դիրքերը՝ նպաստելով պատմական արդարության հաստատմանն ու համամարդկային արժեքների պաշտպանությանը:

Հայ Առաքելական Եկեղեցին շարունակում է իր առաքելությունը՝ միավորելով հավատքը, պատմությունը և արդարության ձգտումը: Ինչպես Իգնատիոս Անտիոքացի Հայրապետն է գրում. *«Ո՛չ կիզիչ հուրը, ո՛չ ջուրը չեն կարողացել մարել քրիստոնյաներիս սերն առ Աստված: Խիզախ ու արիասիրտ քրիստոնյաների համար մեծ բարիք է այս աշխարհում Աստծո հետ մայր մտնելը և Նրա հետ հառնելը» (Ս. Իգնատիոսի վարքից):* Այս պատգամը և՛ անցյալում, և՛ այժմ ուղենիշ է եղել թե՛ եկեղեցու, թե՛ ամբողջ հայ ժողովրդի համար:

Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Օֆելյա ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ինչպե՛ս էր Հովհաննես Թումանյանը Ս. Էջմիածնում խնամում գաղթական երեխաներին. որբերի հայրիկը

«Այս մի կատարյալ անձնազոհություն էր: Շաբաթներով նա ապրել է այնպիսի սարսափների մեջ, որոնց չոր ու ցամաք թվարկումն անգամ մարդու արյուն էր սառեցնում»:

Լեո

1915 թ. համազգային աղետը ժամանակակիցներից յուրաքանչյուրը յուրովի է ապրել: Այդ չտեսնված սոսկալի աղետը մահաստանի էր վերածել ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան Հայաստանը, որտեղ գաղթականության կենտրոն էր դարձել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Ժամանակակիցների վկայությամբ՝ Էջմիածինն էլ այն ժամանակ մահաստան էր դարձել, և որևէ մշակութային գործիչ այդտեղով չէր անցնում: Հանճարեղ Սարյանը, որ դրամական օգնություն էր Էջմիածին հասցրել, մի քանի րոպե այնտեղ գտնվելով՝ ուշաթափվել է: Համատարած տառապանքի, թշվառության, սովի, համաճարակի, մահվան ու թաղումների մեջ, սակայն, կար մի լուսավոր կերպար, որին խոչընդոտ չէին ոչ համաճարակը, ոչ քաղցը, ոչ հոգեկան տառապանքն ու հոգնածությունը, ոչ իր իսկ վատառողջ լինելը. «Հովհաննես Թումանյանն այդ դժոխքի մեջ է գործում, բարեբախտաբար չի գժվում»,— գրում է Լեոն:

Ժամանակակիցները տարբեր կերպ են ներկայացրել Հովհաննես Թումանյանի՝ 1915 թ. որբախնամ գործունեությունը, բայց այսօր վերահիմաստավորելով ու վերարժևորելով դստեր՝ Նվարդ Թումանյանի հուշերը, որ հոր հետ Էջմածնում էր՝ որբերի կողքին, վերլուծելով արխիվային նյութերն ու փրկված որբերի հուշերը՝ գալիս ենք այն համոզման, որ որբերին ապաստան տալուց, կերակրելուց, կարիքները հոգալուց բացի՝ Ամենայն հայոց բանաստեղծը նաև հոգեամոքող դերակատարություն է ունեցել գաղթական հազարավոր երեխաների ու պատանիների համար: Ավելին՝ նրա գործունեության մեծ մասն ակամայից ուղղված էր որբերի ու գաղթականների հոգեկան վերքերի ու հարվածների խմբային հաղթահարմանը: ➥ էջ 8

Սուրբ Էջմիածին, 1915 թ.

Ինչպե՛ս էր Հովհաննես Թումանյանը Ս. Էջմիածնում խնամում գաղթական երեխաներին. որբերի հայրիկը

➥ էջ 7

Նրա հոգատարությունն օգնում էր երեխաներին վերականգնել անվտանգության զգացումը, վերակառուցում էր վստահությունը մարդկանց և աշխարհի նկատմամբ, հնարավորություն տալիս արտահայտելու ճնշված հույզերը՝ առանց բառերի, ստեղծում խմբային ջերմ մթնոլորտ: Այս մոտեցումը շատ մոտ է ժամանակակից հոգեբանության մեջ կիրառվող մեթոդներին, օրինակ՝ խաղային բուժմանը: Կարելի է ասել՝ Թումանյանը ներըմբռնողական ձևով կիրառում էր այն, ինչ այսօր գիտականորեն հիմնավորված է: Ավելին՝ նա կարևորում էր ոչ միայն անհատի, այլև ամբողջ համայնքի հոգեկան վերականգնումը:

Ժամանակակիցների հուշերի մեծ մասը վկայում է բանաստեղծի ապրումակցման բարձր մակարդակը: Զապել Եսայանը գրում է. «Ոչ ոք այդ շրջանին այնքան խոր հասկացողությունով իր սրտագին և հուզիչ բարեկամությունը չէր ընծայեր ինձ, որքան Հովի. Թումանյանը: Իմ առաջին տպավորությունները այդ մեծ պոետեն գլխավորապես կը կայանան այն բանին մեջ, որ կը զգայի իր պաշտպանությունը, իր հովանավորությունը և սրտակցությունը, որոնք միշտ շնորհեր է ինձ ինքնաբերաբար: Եվ անիկա այդ նույն վարմունքը ունեցած է բոլոր անոնց նկատմամբ, որ հրաշքով ազատված էին պատերազմի աղետներեն»:

Թումանյանը հավաքագրում և որբանոցներում տեղավորում էր բազմաթիվ որբ երեխաների: Գթության քույրերից մեկը գրում է. «….Այդ օրն ինձ հետ էր Հովհաննես Թումանյանը, որ բավականին ժամանակ Վաղարշապատում էր: Մի արտի մոտով անցնելիս նա սայլապանին խնդրեց, որ կանգնի ու ինձ ցույց տվեց արտի մեջ: Նայեցի, իրոք, կարծես թե երեխա կար: Գնացի: Կմախքացած երեխա էր՝ արտի մեջ նստած: Ինձ չնայեց: Բոլորովին հյուծված էր, մահվան մոտ: Մեքենան ձեռքիս մոտեցա, որ գլուխը խուզեմ ու սարսափեցի: Ամբողջը ոջիլ էր՝ մազերին, հագուստին: Վխտում էին, ազատ տեղ չկար: Այնպիսի զզվանք զգացի, որ ետ դարձա սայլի մոտ: Թումանյանը հարցական նայեց:

— Չեմ կարող, պարոն Թումանյան, անհնար է:

Ու պատմեցի: Թումանյանը թե՝

— Հա, հասկանում եմ: Տուր մեքենան:

Առավ ու մտավ արտը: Խուզեց երեխայի գլուխը, հետո գրկեց, բերեց դրեց սայլի մեջ…»: Իսկ դուստրը՝ Նվարդ Թումանյանը, որ այդ ծանր ու դժնդակ օրերին հայրիկի հետ էր և որպես գթության քույր՝ խնամում էր որբերին, գրում է. «Հայրիկը, թիկնոցի մեջ փաթաթված, տեղատարափ անձրևի տակ առաջ էր գնում, նրան հետևում էր հազարավոր գաղթականությունը՝ իրենց կապոցներով, երեխաներով՝ նույնիսկ հարազատների դիակներով…. Սարսափելի տեսարան էր…. Այդ միջոցին հայրիկը հիշեցնում էր «Աղավնու վանքի» հայր Օհանին»:

Թումանյանի ինքնաբուժող, ինքնամոքող գործունեության հատկություններից էին որբերի նկատմամբ տածած հոգևոր ու բարոյական աջակցությունը, անսահման մարդասիրությունը, բարությունը, արժեքների սերմանումը բռնագաղթի ենթարկված երեխաների հոգիներում: Թումանյանի կերպարի սքանչելիությունը, հոգեկան մեծ ուժը արտահայտվել են նաև նրանում, որ որբերին ընդունելուց, տեղավորելուց ու նրանց առաջին անհրաժեշտության խնդիրները լուծելուց հետո (նրա անմիջական ղեկավարությամբ բացվել է 5 հիվանդանոց՝ 500 մահճակալով, որբանոց՝ մոտ 3000 երեխայի համար) նա ձեռնամուխ եղավ նրանց զբաղեցնելու ուսուցողական խաղերի ստեղծմանը: Իրականում դա խմբային հոգեկան վերքի հաղթահարման միջոց էր. «….էս խառը ժամանակը ես էլ, ի միջի այլոց, զբաղված եմ և՛ հայրենագիտական, և՛ ուրիշ տեսակի խաղալիքներով — ասում եմ՝ գուցե դրանով էլ մեր մանուկներին մի բանով օգնած լինենք — հայանալու և մարդանալու…. Էսպիսի ժամանակներում ոմանք իրենց գինուն են տալիս, ոմանք՝ լռում ու ինքնամփոփ դառնում, ես որոշեցի էս տեսակ մի բան անեմ, օգուտ որ չլինի, վնաս հաստատ չի լինի»,— գրում է սեփական ժողովրդի նկատմամբ անսահման սիրով և լավատեսությամբ տոգորված բանաստեղծը: Դա որբերի մանուկ հոգեաշխարհը վերականգնելու, վախն ու լարվածությունը մեղմելու, ջերմ, հոգատար մթնոլորտ ստեղծելու խմբային աջակցության մեթոդ էր, որը, անշուշտ, թողել է իր հոգեամոքիչ ազդեցությունը: Որբերը միավորվեցին խաղային գործունեության շուրջ, և խաղը դարձավ խմբային հոգեհարվածի հաղթահարման թումանյանական նախօրինակ: Ստեղծված խաղերը հայրենաճանաչողական էին: Բանաստեղծը գրում է. «….Կաշխատենք…. ծանոթություն տալ թե՛ Հայաստանի, թե՛ Կովկասի ջրերից, լեռներից, լճերից, կենդանական ու բուսական աշխարհից…. որ մեր երեխաներն ու պատանիները ճանաչեն ու սիրեն իրենց հայրենիքը: Սիրեն ոչ թե կույր ազգասերի սիրով, այլ գիտակից, ինտելիգենտ մարդու սիրով, որ սերն ազնիվ լինի, առողջ ու բովանդակալի»:

«Հայոց գետերը», «Թանկագին քարեր», «Հայկական առածանի», «Աստղերի խաղ», «Հայկական հանելուկներ». այս խաղերը դարձան որբերի հոգեամոքման և մղձավանջային հիշողության հաղթահարման մի միջոց:

«Հայոց գետերը» խաղի շնորհիվ, օրինակ, երեխան 69 գետի անուն էր սովորում՝ թե՛ պատմական, թե՛ ժամանակակից Հայաստանի գետերից: 69 խաղաթղթերը բաժանվում էին խաղացողների միջև, որոնք պետք է հավաքածուներ կամ ավազաններ կազմեին: Խաղացողներից մեկը, ով սկսում է խաղը, խաղընկերոջից խնդրում էր համապատասխան խաղաթուղթը: Եթե վերջինս ունենում էր, ապա տալիս էր ընկերոջը, հակառակ դեպքում խաղը շարունակում էր հաջորդը: Հաղթում էր նա, ով առաջինն էր հավաքում տվյալ ավազանին պատկանող գետերի խաղաթղթերը:

Խաղն ունի նաև հավելված-գրքույկ, որտեղ Թումանյանը մեծագույն սիրով, խնամքով ու հոգածությամբ հավաքել-զետեղել է համապատասխան հատվածներ տարբեր հեղինակների գեղարվեստական գործերից, ինչպես նաև հետաքրքիր պատմություններ, ավանդազրույցներ այս կամ այն գետի վերաբերյալ: Գրքույկում տեղ են գտել գետերի լուսանկարներ, գետերում և շրջակա միջավայրում առկա կենդանական ու բուսական աշխարհ, ջրի մակարդակը պատկերող գծապատկերներ և այլն: Խաղն ունի նաև քարտեզ, որը Թումանյանը հատուկ պատվիրել էր մասնագետի: Քարտեզն օգնության էր հասնում այն պահին, երբ մասնակիցներից մեկը պարտվում էր: Եթե վերջինս անսխալ ցույց կտար պահանջվող գետը, կշարունակեր խաղը: Ինքը՝ բանաստեղծը, իր իսկ ստեղծած խաղերի միջոցով հաղթահարեց այն արհավիրքը, որին ականատես էր ամեն օր: Դա ինքնաամոքման յուրատիպ դրսևորում էր նաև:

Խաղերի ստեղծման հոգեբանական ներքին պատրաստությունը զարմանալի է նաև նրանով, որ բանաստեղծն անձամբ էր մասնակցում մանուկների հուղարկավորությանը: Նա դատապարտված է եղել տեսնելու որբերի տառապանքը, անձամբ ցուցակագրելու հիվանդ և առողջ երեխաներին, մասնակցելու նրանց թաղմանը, ամեն պահի առերեսվելու նրանց անզոր և քարացած հայացքներին:

Թումանյանի որբախնամ գործունեությունը շարունակվում է երկար՝ կազմակերպչական հարցերից մինչև բարոյական ու հոգևոր աջակցություն: 1918-ին նա լրագրից պատահաբար կարդում է Վանում որբահավաք գործունեությամբ զբաղվող որդու՝ Արտավազդի գազանաբար սպանվելու բոթը: Հաջորդ օրը նրա տանը պետք է գումարվեր ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի նիստը, և նա նիստը ոչ միայն չի հետաձգում, այլև «….նիստին միայն մի առաջարկ է անում՝ գումարներ հայթայթել նոր որբանոցներ բացելու համար՝ հենց այն որբերի, որոնց կյանքի ապահովության համար իր երիտասարդ կյանքը զոհեց 24-ամյա որդին»:



Հովհաննես Թումանյանը գթության քույրերի և որբերի հետ. Թումանյանից ձախ՝ Նվարդ Թումանյանը, Էջմիածին, օգոստոս, 1915 թ.

Թումանյանի հոգեամոքող և որբերին կյանք վերադարձնող նախաձեռնություններից մեկն էլ տաղանդաշատ որբերին հայտնաբերելն ու խրախուսելն էր: Նա «Հայ գրողների կովկասյան միության» նախագահն էր և դեմ գնալով միության սահմանադրությանն ու վարչության անդամներին՝ ստիպեց, որ միությունը որդեգրի երեք շնորհալի երիտասարդների՝ Միհրան Թութունջյանին, Նորայր Դաբաղյանին և Վաղարշակ Նորենցին: Ավելին՝ նա կազմակերպում է հիմնապաշարի հայթայթման աշխատանքներ, որպեսզի նրանք կարողանան կրթություն ստանալ: Վաղարշակ Նորենցի համար Հովհաննես Թումանյանը դարձավ «մարմնավորված երազ»՝ ոչ միայն գրական իդեալ, այլև բարոյական կատարելության մարմնացում, և նրա մոտ գնալը հետզհետե դարձավ «ներքին բուռն պահանջ»: Նորենցը գրում էր, որ Թումանյանի մեջ ինքը գտել էր այն հարազատությունը, որ որդին զգում է միայն ծնողի հանդեպ: Այս խոսքերը լավագույնս բացահայտում են Թումանյանի դերը՝ որպես ազգային հոգևոր հոր:

Միհրան Թութունջյանի պարագայում ևս Թումանյանի աջակցությունը դարձավ գրական ինքնության ձևավորման կարևոր պայման: Նա պատկանում էր այն երիտասարդ գաղթականների շարքին, որոնց Թումանյանը ոչ միայն փրկեց մահից ու անկումից, այլև տվեց ստեղծագործական կյանք՝ սերմանելով հավատ: Հոգեբանության լեզվով սա կոչվում է դիմակայունություն (ռեզիլիանս), այսինքն՝ ներքին՝ բանական, բարոյական և հոգևոր ուժերի մեկտեղում: Կարելի է ասել, որ նա գործնականում ստեղծել ու կիրառել է այն, ինչ գիտությունը ձևակերպել է ավելի ուշ՝ տալով խմբային հոգեհարվածի հաղթահարում ձևակերպումը:

Այս քառյակը թերևս Ամենայն հայոց բանաստեղծի ներաշխարհի ամբողջական արտապատկերումն է.

Քանի՞ ձեռքից եմ վառվել,
Վառվել ու հուր եմ դառել,
Հուր եմ դառել՝ լույս տըվել,
Լույս տալով եմ ըսպառվել:

Գթության քույրերի և որբերի հետ լուսանկարներում 46 տարեկան բանաստեղծը զառամյալ ծերունու տպավորություն է թողնում: Նա ծերանում է ամիսների ընթացքում, մազերը ճերմակում են, բայց հոգին զարմանալիորեն պահում է անհուն լավատեսությունն ու հավատը ապագայի նկատմամբ. «Ես համոզված եմ, որ սա վերջին ոճրագործությունը պետք է լինի էս համաշխարհային ճիվաղի, բայց թե մեզ համար էլ սոսկալի հարված կարող է լինել: Խորհրդակցություն ունեցանք վերերի հետ, հաղորդագրություններ ու կարգադրություններ եղան արտակարգ, տեսնենք ինչ դուրս կգա: Ամեն օր, ամեն օր նիստերի ենք, ջղային, հուզված, հոգնած: Էսօր էլ ահա երեք նիստ ունեմ: Սպասում եմ մի մասնաժողովի, որ գալու է մոտս՝ խմբագրենք Գրողների ընկերության կոչը — հեռագրով դիմումը աշխարհքի գրեթե բոլոր ազգերի Գրական ընկերություններին, մեծ թերթերին ու նշանավոր գրողներին:

Ինձ ուզում էին ուղարկել Ռուսաստան շրջագայելու, խոսելու և նաև հանգանակության մասին հոգալու, կազմակերպելու, պիտի գնայի և Մոսկվա, բայց իմ անձնական մեղքերը ինձ հնարավորություն չեն տալիս տանից շատ հեռանալու….»:

Լուսինե ՂԱՐԱԽԱՆՅԱՆ, հ. գ. թ., դոցենտ
Հովհաննես Թումանյանի թանգարանի տնօրեն

Խաչի ճանապարհը. Քրիստոսի և հայ ժողովրդի ողբերգությունն ու հարությունը



Էլ Գրեկո. Քրիստոսը կրում է խաչը, 1580 թ.

Հայոց ցեղասպանությունը միայն ազգային ողբերգություն չէ, այլև համամարդկային: Այն Գողգոթայի մի նոր ճանապարհ է, որ հիշեցնում է Քրիստոսի տառապանքներն ու խաչելությունը: Ինչպես Քրիստոս անցավ տանջանքների, ցավի, անարդարության և մահվան ճանապարհով, այնպես էլ հայ ժողովուրդը 20-րդ դարասկզբին ենթարկվեց աննկարագրելի տառապանքների, կորուստների և ազգային սպանդի: Ցեղասպանությունից վերածնված հայ ժողովուրդը վկայում է, որ մահը չի կարող հաղթել կյանքին, ինչպես Քրիստոսի հարությունը հաղթեց մահին: Այս երկու իրականությունները՝ Հայոց ցեղասպանությունը և աստվածային հարությունը, միահյուսվում են մեկ գաղափարի մեջ. ցավը կարող է դառնալ սրբագործող, իսկ կորուստը՝ նոր կյանքի սկիզբ: Հայ ժողովուրդն իր ճակատագրով դարձել է կենդանի վկայություն այն ճշմարտության, որ խաչից հետո միշտ կա հարություն: Այդ պատճառով Հայոց ցեղասպանության հիշողությունը միայն սուգ չէ, այլև հավատքի հաստատում, որ լույսն ի վերջո կհաղթի խավարին, արդարությունը՝ անարդարությանը, և կյանքը՝ մահվանը:

Հիսուս Քրիստոսի հարությունը, որ քրիստոնեական հավատքի կենտրոնական ուսմունքն է, դարերի ընթացքում եղել է ինչպես բուռն բանավեճերի, այնպես էլ խոր հոգևոր խորհրդածության առարկա: Այս իրադարձությունը, որ տեղի է ունեցել 33 թվականին, դարձավ քրիստոնեության հիմնաքարը: Պողոս առաքյալը հստակորեն հայտարարում է. «Եթե Քրիստոս հարություն չի առել, ի զուր է մեր քարոզությունը, ի զուր է և ձեր հավատքը» (Ա Կորնթ. 15:14): Քրիստոս Ինքն է կանխասել Իր խաչելության, հարության ու համբարձման մասին (Մատթ. 16:21), հարության իրողությունը ներկայացնում են չորս Ավետարանները (Հովհ. 20:1–18, Մատթ. 28:1–8, Մարկ. 16:1–8, Ղուկ. 24:1–10), իսկ առաքելական թղթերում դա վկայում են Պետրոս առաքյալը (Գործք 2:31–36), Պետրոս և Հովհաննես առաքյալները (Գործք 4:33), Պողոս առաքյալը (Ա Կորնթ. 15:3–8) և այլք:

«Հարյավ» բառն ընդհանրապես մի քանի նշանակություն ունի. այն երբեմն ցույց է տալիս մարդու վեր կենալը նստած կամ ընկած տեղից, ինչպես, օրինակ, Սողոսի դեպքում, որը գետնից վեր կացավ, սակայն բաց աչքերով ոչ ոքի չէր տեսնում (Գործք 9:8): Քնած տեղից արթնանալն ու վեր կենալը ևս այս բառով են բնութագրվում: «Հարյավ» բառը, սակայն, լավագույնս մատնանշում է մեռած մարդու վերստին կենդանանալու, հարություն առնելու իրողությունը, որի օրինակը մեզ համար Հիսուս Քրիստոսի խոսքերն են՝ ուղղված Մարթային. «Քո եղբայրը հարություն կառնի», այսինքն՝ նորից պիտի կենդանանա: Մարթան պատասխանում է. «Գիտեմ, որ հարության ժամանակ՝ վերջին օրը, հարություն կառնի»: Իսկ Հիսուս ասում է. «Ես իսկ եմ հարություն և կյանք. ով հավատում է Ինձ, թեպետ և մեռնի, կապրի, և ով կենդանի է ու Ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի» (Հովհ. 11:23–26):

Այս համատեքստում անհրաժեշտ ենք համարում ներկայացնել Քրիստոսի հարության պատմական վկայությունները՝ հիմնվելով 1-ին դարի ավետարանական աղբյուրների՝ մասնավորապես Մարկոսի Ավետարանի վրա, ինչպես նաև անդրադառնալ այս իրադարձության աստվածաբանական և բարոյական նշանակությանը՝ ընդգծելով, որ հարությունը ոչ միայն պատմական փաստ է, այլև կյանքի փոխակերպման կոչ: Տարիներ շարունակ շատ գիտնականներ գրեթե անտեսել են Մարկոսի Ավետարանը՝ ենթադրելով, որ այն Մատթեոսի Ավետարանի համառոտ տարբերակն է: Սակայն 19-րդ դարի վերջից ի վեր ավելի է ընդունվում այն տեսակետը, որ Մարկոսի Ավետարանը գրված առաջին Ավետարանն է, և այն դարձել է մեծ հետաքրքրության առարկա: Ժամանակակից աստվածաբանական հետազոտությունները ցույց են տվել, որ Մարկոսի Ավետարանը Հիսուսի ինքնության և զորության եզակի ու հզոր գիրք է: Այն գրված է արագընթաց և ճշգրիտ պատմության տեսքով՝ անտեսելով բազմաթիվ մանրամասներ՝ հիմնական նպատակն ընդգծելու համար: Ինչպես նշում են աստվածաբանները, Մարկոսի Ավետարանը պատկերում է Քրիստոսին իրադարձությունների շրջապտույտում. կա նվազագույն խոսույթ, և առավելագույնը գործողությունն է: Այդ շարժուն, զորութենական ոճը հատկապես ակնհայտ է հարության պատմության շարադրանքում, որտեղ հեղինակը կենտրոնանում է հիմնական փաստերի վրա՝ ընթերցողին թողնելով դրանց նշանակության դատողությունը: Մարկոսի Ավետարանը գրվել է Հռոմում՝ Քրիստոսի համբարձումից մոտ 10 տարի անց: Ըստ վաղքրիստոնեական ավանդության՝ Հռոմի հավատացյալները խնդրեցին Մարկոսին ոչ միայն քարոզել, այլև գրավոր հաղորդել Քրիստոսի գործերն ու կյանքը: Մինչդեռ Մարկոսը Ավետարանը գրեց Պետրոսի թելադրանքով, ինչը մեծ կշիռ է տալիս այնտեղ առկա հարության վկայությանը:

Քրիստոսի հարության պատմական հավաստիության փաստարկները մի քանիսն են: Պատմական վկայություններ կան ինչպես առաջին դարում Հռոմեական կայսրությունում ապրած պատմաբանների, այնպես էլ ավելի ուշ շրջանի գիտնականների ուսումնասիրություններում: Նախ՝ դատարկ գերեզմանի փաստը. Հիսուսի թաղման վայրը հայտնի էր ինչպես նրա հետևորդներին, այնպես էլ թշնամիներին: Եթե գերեզմանը դատարկ չլիներ, քրիստոնեական քարոզչությունը Երուսաղեմում անհնար կլիներ: Երկրորդ՝ աշակերտների փոխակերպումը. Հիսուսի աշակերտները, որոնք խաչելությունից հետո թաքնվել էին վախից, հանկարծակի դուրս եկան հրապարակ՝ քարոզելու հարությունը՝ պատրաստ լինելով նահատակվելու: Երրորդ՝ Պողոս առաքյալի վկայությունը, որն սկզբում հալածիչ էր, ապա դարձի եկավ հարություն առած Քրիստոսին տեսնելուց հետո: Չորրորդ՝ կանանց՝ որպես առաջին վկաների ներկայացումը, որն էլ մեծացնում է պատմության հավաստիությունը, քանի որ առաջին դարի հրեական հասարակությունում կանանց վկայությունը մեծ կշիռ չուներ: Հիսուսի հարության փաստարկ է համարվում նաև Թուրինյան սավանը: Ըստ հետազոտողների՝ այն մարմինը, որին փաթաթված է եղել սավանը, պատկանել է աստվածային էության, և սավանի պատկերն ստեղծվել է հենց հարության պահին: Այս մասին վկայում են նաև ավետարանական նկարագրությունները (Մատթ. 27:27–31, Մարկ. 15:16–20, Ղուկ. 22:63–65, Հովհ. 19:1–5)

Հայոց ցեղասպանության և առհասարակ, ազգային պատմական փորձառության լույսի ներքո մենք՝ հայ քրիստոնյաներս, գիտենք, որ հարությունը իրողություն է, և նույնիսկ ամենամեծ կործանումից հետո կարող են ծնվել հավատ, հույս, նոր կյանք:

Հարության պատկերացումները կարող են լինել բազմաշերտ: Օրինակ՝ բարոյական կյանքից հեռու որևէ մեկը, երբ հանկարծ հետ է կանգնում իր այդ ընթացքից ու բարոյական կենցաղավարությանն է անցնում, դա նշանակում է, որ այդ մարդը մեռած վիճակից կենդանացավ, մեռած գործերի միջից հարություն առավ ու նոր կյանք ստացավ: Իսկ ահա մյուս հարությունն էլ մահանալուց հետո պիտի տեղի ունենա, ինչպես որ գրված է մեր «Հավատո հանգանակ»-ի մեջ. «Հավատում ենք մեռելների հարությանը, հոգիների ու մարմինների հավիտենական դատաստանին, երկնքի արքայությանն ու հավիտենական կյանքին»:

Մեր բարոյակրոնական հարությունն անմիջականորեն կապված է մահացածների վերջին հարությանը, քանի որ մեր այս առաջին հարությունն այն ճանապարհն է, որով ընթանալով՝ մենք՝ իբրև ճանապարհորդներ, գերեզման ենք մտնում, և մեր մարմինները մնում են այնտեղ՝ համաձայն Աստծու վճռի՝ «Հող էիր ու հող պիտի դառնաս» (Ծննդ. 3:19): Իսկ մեր հոգիներն էլ բարձրանում են դեպի Աստված՝ բնակվելով Նրա կողմից սահմանված օթևաններում, մինչև որ գա համընդհանուր հարության ժամանակը, երբ մեր մարմիններն էլ Աստծու ամենակարող զորությամբ պիտի հարություն առնեն և մեր հոգիներին միանալով՝ իրենց հատուցմանն արժանանան. «Արդարներին՝ հավիտենական կյանք, իսկ մեղավորներին՝ հավիտենական տանջանք» (Մատթ. 25:46):

Սուրբ Պողոս առաքյալն ասում է. «Եթե հարություն առաք Քրիստոսի հետ, ապա փնտրեցե՛ք վերին բաները, այնտեղ, ուր Քրիստոս նստած է Աստծու աջ կողմը» (Կողոս. 3:1–2): Այս խոսքերը կոչ են քրիստոնյաներին՝ մշտապես ձգտելու երկնավոր կյանքին, ոչ թե երկրավոր ցանկություններին: Քրիստոնյան մեռած է համարվում մեղք գործելու համար, և քրիստոնյայի նորոգված կյանքում մեղքը տեղ չպիտի ունենա, այլ նրա կյանքը մշտապես սրբությամբ ու արդարությամբ պիտի լեցուն լինի: Առաքյալը շարունակում է. «Վերին բաների մասին խորհեցեք, և ոչ թե այն, ինչ այս աշխարհում է, որովհետև դուք մեռաք, և ձեր կյանքը Քրիստոսի հետ՝ Աստծու մեջ է պահված: Իսկ երբ Քրիստոս՝ ձեր կյանքը, հայտնվի, այն ժամանակ դուք էլ Նրա հետ կհայտնվեք փառքով» (Կողոս. 3:2–4): Անցավոր կյանքի ընթացքում առաքինի գործերով Աստծուն հավատարիմներն արժանի են հավիտենական կյանքի բազմաբեղուն երանություններին: Հիշենք առաքյալի խոսքերը. «Հանձնեցե՛ք ձեզ ի ծառայություն Աստծու, որպես մեռելներից կենդանի դարձածներ, իսկ ձեր մարմնի անդամները՝ արդարության գործիքներ: Մարդն ինչին հնազանդվում է, նրա ծառան է դառնում. եթե մեղքերին է ծառայում, նրա բաժինը մահն է, իսկ եթե արդարությանն է ծառայում, նրա վարձատրությունը կյանքն է: Մեղքի վարձը մահն է, իսկ Աստծու շնորհը՝ կյանքը մեր Տեր Քրիստոսի միջոցով» (Հռոմ. 6:12–13):

Փրկչական կրոնը մարդկանց համար եղավ Հակոբ նահապետի զարմանալի տեսիլքի այն սանդուղքը, որի պատվանդանը հաստատված էր երկրի վրա, իսկ ծայրը հասնում էր մինչև երկինք՝ մինչև Հայր Աստծու աթոռը, Որի աջ կողմում նստած է մարդեղացած Աստվածորդին: Եվ հենց այդ սանդուղքով է, որ հրեշտակները վար են իջնում (Ծննդ. 28:12):

Քրիստոսի հարությունը, սակայն, միայն պատմական իրադարձություն չէ. այն շարունակվող, կենդանի իրականություն է, որը փոխակերպում է յուրաքանչյուր հավատացյալի կյանքը: Մենք կոչված ենք ամեն օր հարություն առնելու դեպի առաքինություն, դեպի լույս, դեպի կյանք: Այս խորհուրդն առավել խորն է դառնում, երբ հայացք ենք նետում մեր ազգային պատմությանը:



Մուշեղիկի կրած անմարդկային պատժի հետքերը երևում են անգամ դեպքից մեկ տարի անց արված լուսանկարում: 1915 թ. Խալիլ բեյի հրամանով Դիզա գյուղից թուրք զինվորականները հավաքում են 5—10 տարեկան արական սեռի հայ երեխաներին և դաժանաբար սպանում: Մուշեղիկի մայրը երկու որդիներին մահից փրկելու խնդրանքով դիմում է իրենց ընտանիքի ծանոթ թուրք պաշտոնյային, որը համաձայնում է միջնորդել Խալիլ բեյին երեխաների ազատության համար՝ կրոնափոխության դիմաց: Այդ նույն ժամանակ մի քուրդ, լսելով երեխայի հայկական անունը, Մուշեղիկի ձեռքերը դաժանաբար գամում է փայտին:

Հայ ժողովուրդը 1915-ին խաչակից եղավ Քրիստոսին և Քրիստոսի պես էլ հարություն առավ: Պատահական չէ, որ 2015 թ. ապրիլի 23-ին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու եպիսկոպոսաց դասի որոշմամբ և Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Առաջինի կոնդակով սրբադասվեցին Հայոց ցեղասպանությանը զոհ գնացած բոլոր նահատակները՝ ավելի քան մեկուկես միլիոն հայ, և իր ուղերձում Գարեգին Բ Կաթողիկոսը սրբադասումը նշանավորեց որպես հարության հաղթանակ. «Քրիստոսին նահատակությամբ վկայելը ընդելուզված է մեր ժողովրդի կյանքին: Սրբության, առաքինության, անձնվիրումի հոգևոր սխրանքի բազում վկայություններ են արձանագրված նաև Հայոց ցեղասպանության ողբերգական տարեգրության մեջ: Ցեղասպանության նահատակների սրբադասումը կենդանարար նոր շունչ, շնորհ և օրհնություն է բերում եկեղեցական և ազգային մեր կյանքում: Մենք հավատում ենք, որ մեր ժողովրդի հոգևոր նոր վերածննդի պսակն ենք հյուսում՝ Հայոց ցեղասպանության նահատակներին սրբադասելով: Մեր սուրբ նահատակների հիշատակն այլևս ոչ թե զոհի ու ննջեցյալի հոգեհանգստյան աղոթք է, այլ հաղթանակած ու նահատակության արյամբ սրբագործված անմարմին զինվորների հաղթական օրհներգություն»:

Հիսուս ասաց. «Ով հավատում է Ինձ, թեպետ և մեռնի, կապրի» (Հովհ. 11:25): Այս հավատքով ապրենք և վկայենք աշխարհին մեր հարության զորությունը:

Ալբերտ սրկ. ՍԱՀԱԿՅԱՆ
Արմեն ՍԱՀԱԿՅԱՆ

Երևանը Հայոց ցեղասպանության տարիներին

Երևանն Առաջին աշխարհամարտի տարիներին գտնվում էր սոցիալ-տնտեսական ծանր վիճակում: Վերջին տարիների անբերրիության և պատերազմի պատճառով մեծ չափերի էր հասել սովը, զգացվում էր դեղորայքի խիստ պակաս, տարածված էին տիֆը, խոլերան և այլ համաճարակներ: 20-րդ դարի սկզբին Երևանն ուներ մի քանի հիվանդանոց, 3 դեղատուն, 13 մանկաբարձուհի, 19 բժիշկ, 13 բուժակ և 14 այլ աշխատողներ: Հասկանալի է, որ այս միջոցներով անհնարին էր լուծել գաղթականների խնամքի խնդիրները:

1915 թ. հուլիսի 26-ին Երևան հասավ գաղթականների առաջին խումբը: Քաղաքում տեղավորված գաղթականները հիմնականում Ալաշկերտից և Բայազետից էին: Երևանում հրատարակվող «Эриванскія обьявленія» («Երևանի հայտարարություններ») լրագրի դեռևս 1914 թ. տարեվերջի համարում՝ «Քաղաքացիներ, օգնեցեք գաղթականներին» վերնագրի ներքո, կարդում ենք. «Ալաշկերտի հովտից, Բայազետի սանջակից գաղթում է հայ ժողովուրդը, նրանք շուտով Երևանում կլինեն, նրանց թիվը շատ մեծ է՝ ոչ պակաս քան 40 000: Անհրաժեշտ է շուտափույթ օգնություն»: Մեկ այլ պարբերականում՝ Շուշիում լույս տեսնող «Փայլակ» լրագրում (1915 թ., № 47, էջ 3), հոդվածագիրը, մանրամասն նկարագրելով Երևանի գաղթականների ծանր ու անօգնական վիճակը, եզրակացնում է, որ հապաղել չի կարելի, քանի որ քաղցն ու հիվանդություններն առատ հունձ են անում՝ խլելով հարյուրավոր կյանքեր. «Գաղթականների վերքերն ամոքելն ու նրանց միակ մխիթարությունը պետք է լինի նյութական օգնությունը, որի համար պետք է հոգ տանի հասարակությունը»:

Մեկ օրվա փրկարարություն Երևանում, 1919 թ., նոյեմբեր



Բժիշկ Արամ Տեր-Գրիգորյանը Երևանի 2-րդ ապաստարանի երեխաների հետ, 1916 թ.

Քաղաքային իշխանությունները, չնայած բոլոր դժվարություններին, բարեգործական կազմակերպությունների և անհատ երևանցիների հետ միասին, դեռևս առաջին օրերից որոշակի աշխատանք իրականացրին գաղթականների՝ մանավանդ որբ երեխաների վիճակը թեթևացնելու համար:

Դեռևս 1914 թ. դեկտեմբերի 28-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի կոնդակով Արևելյան Հայաստանի բոլոր քաղաքներում ստեղծվում են Եղբայրական օգնության կոմիտեներ: Գտնվելով Կաթողիկոսի անմիջական հսկողության տակ՝ դրանք կազմակերպեցին տարբեր գավառներում տեղակայված արևմտահայ գաղթականների և որբերի օգնությունը:

Եղբայրական օգնության Երևանի կոմիտեն բաղկացած էր 25 անդամից: Կոմիտեի առաջին նախագահն էր Երևանի թեմական Խորեն եպիսկոպոսը (հետագայում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյան), փոխնախագահը՝ Երևանի քաղաքագլուխ Մկրտիչ Մուսինյանցը: Կազմավորման օրից սկսած՝ կոմիտեն դիմում է հայաբնակ բոլոր քաղաքներին՝ խնդրելով օգնություն, եկեղեցիներին կից ստեղծում ենթակոմիտեներ, որոնք կարգավորում էին գաղթականներին հատկացվելիք բնակության վայրերի ցուցակագրումը, հագուստ և սննդամթերք հավաքելու և բաշխելու գործընթացը, լուծում ծխական դպրոցների շենքերը գաղթականների պահանջներին հարմարեցնելու հարցերը: Ծխական դպրոցները վեր էին ածվել նաև նպաստների բաշխման կետերի:

Երևան եկած գաղթականների մեջ մեծ էր որբ երեխաների թիվը, որոնց փրկության և խնամքի գործը հրատապ խնդիր էր: Այդ օրերին Աստրախանից Երևան եկած քահանա Ս. Ասլանյանցն իր տպավորությունների մասին հետևյալն է գրում. «Թողնենք Կովկասի կենտրոնը՝ Թիֆլիսը, և գնանք առաջ՝ Երևան, որտեղ կենտրոնացվել են գաղթականների հիմնական զանգվածները» (տես Армянскій вѣстникъ, еженедѣльный журналъ, 1916 г., Москва, № 6, էջ 10): Առաջին գաղթականներին նա տեսնում է առաջնորդարանի բակում: Քահանային զարմացրել էր գաղթականների պահվածքը՝ բողոքի ոչ մի խոսք և ոչ մի կաթիլ արցունք. դրանք վաղուց էին չորացել նրանց տանջահար դեմքերին: Այդ դժբախտ մարդիկ միայն կրկնում էին. «Մխ, մեր երկիրը, մեր հողը...»:

1915 թ. մայիսին կոմիտեի կողմից ընտրվում է 14 հոգուց բաղկացած որբախնամ վարչություն՝ բժիշկ Արամ Տեր-Գրիգորյանի նախագահությամբ: Վերջինս հետագայում դարձավ Եղբայրական օգնության Երևանի կոմիտեի նոր նախագահը: Գաղթականների համար առաջին ապաստան են դառնում Սուրբ Սարգիս եկեղեցու մոտ գտնվող հոգևոր թեմական, Կոնդի դպրոցները և Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու բակում գտնվող Գայանյան ուսումնարանը: Վերջինիս հոգաբարձության նախագահը 1915 թ. սեպտեմբերի 26-ի գրության մեջ նշում է, որ Գայանյան օրիորդաց դպրոցն առաջին օրից ծառայել է որպես ապաստարան, որբանոց կամ հիվանդանոց: Դպրոցի սենյակներից վեցն այդ պահին շարունակում են մնալ որպես ապաստարաններ՝ ծանր վիճակում գտնվող հիվանդների համար: Օրըստօրե մեծացող խմբերին ընդունելու և տեղավորելու համար Երևանը չուներ համապատասխան շենքային հնարավորություններ, այդ պատճառով մի հարկի տակ կուտակվում էին մարդկանց մեծ խմբեր: Թեմական դպրոցի յոթ սենյակներից յուրաքանչյուրն ասես վերածվեց մեկական գյուղի:

Օգոստոսից քաղաքում սկսում են բացվել որբանոցներ. օգոստոսի 3-ին՝ Դոկտորսկայա (այժմ՝ Թումանյան), սեպտեմբերին՝ Մալյարսկայա (այժմ՝ Տերյան), հոկտեմբերին՝ Բեհբութովի (այժմ՝ Փավստոս Բուզանդ) փողոցներում: Սուրբ Սարգիս եկեղեցու բակում որբերի համար ստեղծվում է ժամանակավոր կացարան: Ժամանակի մամուլից տեղեկանում ենք նաև, որ Երևանի եղբայրական օգնության հանձնաժողովի որբանոցների վարչությունը գաղթական երեխաների համար տոնածառի հանդես կազմակերպելու նպատակով դիմել է քաղաքի հասարակությանը, բարերարներին՝ օգնելու, ինչով կարող են՝ դրամով, նվերներով, խաղալիքներով, քաղցրավենիքով:

Ժամանակի մամուլում առկա է նաև որոշակի քննադատություն՝ ուղղված ինչպես եղբայրական օգնության, այնպես էլ քաղաքի հասարակության գործունեությանը: Օրինակ՝ «Մշակ» լրագրում (1915 թ., № 82, էջ 3) հոդվածագիրը նշում է, որ «երևանցիներին բնորոշ դանդաղկոտությունը» դրսևորվել է նաև գաղթականության օգնության հարցերում. գաղթականության հոսքն արդեն հասել է Էջմիածին, իսկ Երևանը դեռ պատրաստ չէ նրանց ընդունելու: Եղբայրական օգնության Երևանի կոմիտեի գործունեության մասին հոդվածագիրը հետևյալ կարծիքն է հայտնում. «....ընտրված մասնախմբերը իրենց թվի և բաժանմունքների տեսակետից բավարար էին, սակայն գաղթականության բուռն հոսանքը քաղաք լցվելուց հետո դրանք սկսեցին նոսրանալ, և գործը ծանրացավ մի քանի մարդկանց վրա: Վերջում մնացած գործիչների թիվը ևս պակասելով՝ օգնության գործն այնքան էլ նախանձելի չէր....»: Խոսելով լավ աշխատող կառույցների մասին՝ հոդվածագիրը «միակ մխիթարականը» համարում է հիվանդանոցի գործունեությունը, որի տեսչությունը և բժշկական գործը հանձնված էր տիկին Ղազարյանին (Խորասանյան) (խոսքը վերաբերում է Երևանի առաջին կին բժիշկ-գինեկոլոգ Վերգինե Խորասանյանին՝ նկարչուհի Ռեգինա Ղազարյանի մորը, որը 1918 թ., երբ դուստրը ընդամենը 3 տարեկան էր, տիֆով հիվանդ հղի կնոջից վարակվում և մահանում է):

Քննադատություն առկա է նաև «Փայլակ» լրագրում (1915 թ., № 47, էջ 3), ուր թղթակիցը սթափության կոչ է անում Երևանի հասարակության բոլոր շերտերին և քննադատում հատկապես հարուստներին, որոնք, նրա կարծիքով, այդ դժվար օրերին մնում էին անտարբեր: Խոսելով հասարակության ուժերը համախմբելու մասին՝ հեղինակն անչափ կարևորում է հայ օրիորդների և կանանց օգնությունը, որը ևս բավարար չէր այդ պահին: Նա համարում էր, որ Երևանում նույնպես պետք է ստեղծել օրիորդաց կոմիտե, որը կարող է որոշակի օգնություն ցույց տալ գաղթականներին՝ մինչև գավառներ ճանապարհելը: Թղթակիցը մեծ հանցանք է համարում նաև այն, որ սննդամթերքի հայթայթման ողջ դժվարությունը բարդվել է գյուղացիության վրա՝ այն էլ Երևանի նահանգի գյուղացիության, որը վերջին տարիների անբերրիության և պատերազմի պատճառով տնտեսապես քայքայված վիճակում էր:

1916 թ. տվյալներով՝ Երևանի նահանգում գաղթականների թիվը հասնում էր 100 000-ի: Բայց քանի որ ինչպես Էջմիածնում, այնպես էլ Երևանում նրանց մեծ մասը ժամանակավորապես էր մնում, հետո տեղաբաշխվում տարբեր քաղաքներում և գյուղերում, ուստի, 1917 թ. տվյալներով, քաղաքում մնացել էր 17 505 մարդ, որոնցից 5491-ը կանայք էին, 8350-ը՝ երեխաներ, 2881-ը՝ ծերունիներ: Աշխատունակ տղամարդիկ ընդամենը 783-ն էին: 1918 թ. նրանց թիվը նորից մեծանում է. սեպտեմբերի դրությամբ՝ քաղաքային ինքնավարության կողմից ցուցակագրվել էր շուրջ 45 000 գաղթական:

Երևանում հանգրվանած գաղթականներին օգնելու գործում մեծ ջանքեր և միջոցներ ներդրեցին նաև Հայ նպաստամատույց ընկերությունը, Համառուսական քաղաքների միության կովկասյան բաժանմունքը, Անգլիան հայ փախստականներին (Անգլկոմ), Մերձավոր արևելքի ամերիկյան նպաստամատույց (Ամերկոմ) կոմիտեները, Կովկասի հայոց բարեգործական և Թիֆլիսի կանանց խնամածություն ընկերություններն ու բազմաթիվ անհատներ, սրտացավ երևանցիներ:

Թիֆլիսում գործող Հայ նպաստամատույց ընկերությունը գտնվում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովանավորության ներքո՝ գաղթականության օգնության համար առանց որևէ վերապահության ընդունելով ամենատարբեր նվիրատվություններ: 1915 թ. օգոստոսի 12-ին Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում քաղաքագլխի փոխանորդ Ալեքսանդր Արղությանի նախագահությամբ կայանում է խորհրդակցություն՝ գաղթականներին շտապ օգնություն ցույց տալու հարցով: Խորհրդակցությունը հրավիրել էր Համառուսական քաղաքների միության Կովկասի բաժանմունքի բյուրոն: Խորհրդակցության նախագահը ներկայացնում է միության գլխավոր լիազորի օգնական պրոֆեսոր Կիշկինի զեկուցումը գաղթականների վիճակի մասին (Կիշկինը ներկա չէր խորհրդակցությանը, քանի որ գտնվում էր գաղթականների մոտ): «Փայլակ» լրագրից տեղեկանում ենք, որ պրոֆեսոր Կիշկինն իր զեկուցման մեջ, նկարագրելով գաղթականների ծանր վիճակը, այն միտքն է հայտնում, որ 1. վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու և փախստականներին օգնելու գործերը չի կարելի բաժանել իրարից, 2. փախստականների օգնությունը չպետք է դիտարկել որպես բարեգործություն, այլ պետական պաշտպանություն, որի համար անհրաժեշտ է նրանց կենտրոնացնել որոշ վայրերում, որտեղ կկազմակերպվեն սննդատու և բժշկական կետեր: Խորհրդակցության ժամանակ ընդունված որոշումներից մեկը վերաբերում էր Սևան, Դիլիջան և Էջմիածին քաղաքների հետ միասին Երևանում հիվանդանոցներ բացելուն՝ 2500 մահճակալով: Նույն լրագրի օգոստոսի 20-ի համարից տեղեկանում ենք, որ թիֆլիսյան խորհրդակցության որոշումներից ելնելով՝ քաղաքների միությունը սննդատու կայաններ է հիմնել Երևանում և գաղթականների անցնելիք ճանապարհներին, իսկ Երևանի քաղաքային դուման (քաղաքագլուխ՝ Սումբատ Խաչատուրյանց) 10 000 ռուբլի է հատկացրել՝ գաղթականներին սանիտարական-բժշկական օգնություն ցուցաբերելու համար:

Անգլկոմը, որ որպես բարեգործական կազմակերպություն ստեղծվել էր 1915-ի հոկտեմբերի 6-ին, Երևանում ուներ 4 որբանոց, որոնցից ամենամեծը՝ 200 որբերով, տեղակայված էր թեմական դպրոցում: Նրա հիմնած սննդակայանների մեծ մասը Երևանում էր: Կոմիտեն իր հիմնական գործառույթները կենտրոնացրել է որբ երեխաների կենսական պայմանների բարելավման, ինչպես նաև դաստիարակության և կրթության վրա, բայց որոշ չափով նպաստել է նաև երկրի սոցիալ-տնտեսական ծանր վիճակի հաղթահարմանը՝ աշխատակիցներ ընտրելով բացառապես տեղացիներից, ստեղծելով ապաստարաններ ու սննդակայաններ, որոնց համար անհրաժեշտ պարենն անգամ ձեռք էր բերվում տեղում, ինչպես նաև գաղթականների համար որպես աշխատատեղ բացված արհեստանոցներով (կարի, կոշիկի, գործվածքի և այլն): Նշենք, որ որբերի համար բացված արհեստագործական և հանրակրթական դպրոցներում սովորում էին նաև կոմիտեի աշխատակիցների երեխաները:

Երևանում հանգրվանած որբերին և գաղթականներին ամենածավալուն ու երկարատև օգնությունը ցուցաբերեց Ամերկոմը: Կոմիտեի դրամական միջոցները կուտակվում էին ամերիկյան ժողովրդի կամավոր հանգանակություններից: Նրանց միջոցներով քաղաքում բացվում են որբանոցներ, որոնց տեղ էր տրված Գայանյան դպրոցում, Ալեքսանդրյան իգական գիմնազիայում, ուսուցչական սեմինարիայում և Մարիամյան ծխական դպրոցում: ➥ էջ 15

Հիշողության քարերը Հորդանանից մինչև Ծիծեռնակաբերդ

(հարուցյալ ազգի խորհուրդը. ոճրի, զոհության և աստվածային դատաստանի տիպաբանությունը)

Կյանքը

Կյանքը սոսկ կենսաբանական գոյություն չէ, այլև աստվածային էներգիայի արտահայտություն: Այս իմաստով՝ ոչ ոք իրավունք չունի խլելու այն, ինչ իրենը չէ, առավել ևս՝ որ ինքնին շնորհ է՝ տրված Բարձրյալից: Շնորհատուի մասին ամենադիպուկն ասվում է Հոբի գրքում. «Նրա ձեռքին է բոլոր կենդանիների շունչը և ամեն մի մարդկային մարմնի հոգին» (Հոբ ԺԲ 10): Բ Օր. ԼԲ 39-ում Տերն ասում է. «Տեսեք, տեսեք, որ ես եմ, և Ինձնից բացի՝ ուրիշ աստված չկա. ես եմ սպանում, և ես եմ կենդանացնում, ես եմ հարվածում, և ես եմ բժշկում, և չկա մեկը, որ ձեռքիցս ազատի»: Այստեղից է գալիս մեր առաջին վերլուծական թեզը. ցեղասպանությունը ոչ միայն քաղաքական կամ ազգային բախում է, այլև վախճանաբանական ընդվզում Աստծո կամքի դեմ:

Երբ մարդը ձեռք է բարձրացնում կյանքի վրա, նա ոչ թե պարզապես սպանում է մեկ այլ մարդու, այլ փորձում է ներխուժել Աստծո իրավասության տիրույթ: Կյանք տվողը միակ Դատավորն է, Որ տնօրինում է սկիզբն ու վախճանը, սակայն երբ այս ոճիրը դուրս է գալիս անհատի սահմաններից և դառնում «ազգային բնաջնջում», այն դառնում է տիեզերական աղետ: Մի ամբողջ ազգի կյանքից զրկելը փորձ է՝ խմբագրելու Աստծո ստեղծագործությունը, ջնջելու մի գույն, որը Նա դրել էր մարդկության պատկերասրահում:

Բնաջնջման բումերանգը. զոհի կյանքի «ստանձնումը»

Այստեղ թաքնված է փիլիսոփայական ամենասարսափելի առեղծվածը: Ազգը, որը փորձում է բնաջնջել մյուսին, անգիտակցաբար իր վրա է վերցնում մի ծանր լուծ: Բնաջնջողը, դատարկելով իր զոհի աշխարհագրական և մշակութային տարածքը, ստիպված է լինում «ապրել նաև նրա փոխարեն»: Սա փաստ չէ, սա բնաջնջողի ցանկությունը կամ զոհի պարտադրանքը չէ, այլ բնության, կյանքի և մահվան չգրված մի օրենք: Սա նման է Կայենի դեպքին, երբ Աստված հասկացրեց, որ Աբելի կորստով Կայենը նաև Աբել դարձավ. «Քո եղբոր արյան ձայնը երկրից բողոքում է ինձ» (Ծնն. Դ 10):

Բնաջնջողն այլևս երբեք չի լինում նախկինը: Նա դառնում է իր կողմից սպանվածի հիշողության կրողը՝ թեկուզ ժխտման միջոցով: Փիլիսոփայորեն՝ սպանված ազգի «բացակայությունը» դառնում է ավելի ներկա, քան սպանողի «ներկայությունը»: Սպանողը դատապարտված է հավերժական առերեսման այն դատարկության հետ, որն ինքն է ստեղծել, և այդ դատարկությունն սկսում է կլանել նրա սեփական ինքնությունը:

Այսպիսով՝ բնաջնջողը հայտնվում է մի անհերքելի իրականության մեջ, որտեղ զոհի ժառանգությունը դառնում է նրա սեփական կեցության անբաժանելի, բայց օտար մասը: Յուրացված տունը, եկեղեցին կամ հողը չեն դառնում սեփականություն, այլ վերածվում են հավերժական վկաների, որոնք լռությամբ մատնացույց են անում իրենց իսկական տիրոջը: Սա «մարդասպանի հիվանդությունն» է. նա չի կարող տիրանալ զոհի կյանքին՝ առանց տիրանալու նաև նրա մահվանը և այդ մահվան բերած անեծքին: Ինչպես Կայենը, որ դատապարտված էր թափառելու՝ կրելով իր ճակատին անջնջելի կնիքը, այնպես էլ բնաջնջող ազգն է դատապարտված կրելու իր զոհի «ուրվականը» իր մշակույթի, պատմության և նույնիսկ լեզվի շերտերում: Երբ ոճրագործը բնաջնջում է մի ազգի, նա տիրանում է նրա տներին, եկեղեցիներին և հողին, բայց նա չի կարող տիրանալ այդ ամենի ոգուն: Վերջնարդյունքում նա դառնում է մի բռնազավթիչ, որ իր սեփական տանն զգում է օտարի շունչը: Նա ստիպված է ապրել զոհի ստվերի տակ: Աստվածաշնչյան տիպաբանությամբ՝ սա նման է Աքաաբ թագավորին, որ սպանեց Նաբովթին՝ նրա այգուն տիրանալու համար: Եղիա մարգարեն եկավ ու ասաց. «Սպանեցիր և հիմա էլ տիրացո՞ր.... Այնտեղ, որտեղ շները լիզեցին Նաբովթի արյունը, շները պիտի լիզեն նաև քո արյունը» (Գ Թագ. ԻԱ 19): Սա այն անխուսափելի հոգևոր օրենքն է, որը գործում է համաման բոլոր պարագաներում:

Հետաքրքրական է խաչի վրա Հիսուս Քրիստոսի խոսքը. «Հա՛յր, ներիր նրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկ. ԻԳ 34), որը հաճախ սխալ է մեկնաբանվում: «Չգիտեն»-ը չի ազատում պատասխանատվությունից, այլ մատնանշում է նրանց հոգևոր կուրությունը: Բնաջնջող ազգը, որը չի զղջում, շարունակում է մնալ այդ անգիտակից ոճրի մեջ:

Սա հոգևոր առեղծված է, և այն հուշում է, որ ոչնչացումը երբեք լիակատար չէ: Մարմնական բացակայությունը վերածվում է հոգևոր ներկայության, որն սկսում է թելադրել սպանողի վարքագիծը: Ժխտողականությունը, որն այնքան բնորոշ է բնաջնջողին, իրականում ինքնապաշտպանական ճիգ է, փախուստ՝ սեփական հայելուց, որտեղից զոհի դեմքն է հետապնդում իրեն: Ի վերջո զոհի կյանքի «ստանձնումը» հանգեցնում է նրան, որ բնաջնջողը կորցնում է իր սեփական ինքնության վավերականությունը. նա այլևս ինքնուրույն միավոր չէ, այլ մի էակ, որի ամբողջ գոյությունը կառուցված է մի մեծագույն Ոչնչի շուրջ, որն ինքն է ստեղծել, և որը հիմա սնվում է իրենով:

Երբ Կայենը սպանեց Աբելին, նա չազատվեց նրանից: Ընդհակառակը՝ նա դարձավ Աբելի բացակայության կրողը: Ծննդոց Դ 12-ում Տերն ասում է. «Երբ երկիրը մշակես, նա իր արդյունքը քեզ չպիտի տա. երկրի վրա պանդուխտ ու թափառական պիտի լինես»: Այն ազգը, որը բնաջնջում է մյուսին, դատապարտված է թափառական դառնալու սեփական ինքնությունից: Նա այլևս չի կարող ինքնաբավ լինել, որովհետև իր տան մեջ, իր հողի վրա և իր պատմության ընթացքում միշտ լսվելու է սպանվածի «արյան ձայնը»: Սպանողն ստանձնում է զոհի կյանքը սարսափելի մի իմաստով. նա է այդուհետ այդ կյանքի հավերժական պարտապանը:

Սպանողն սպանվողի հանդեպ գործում է փիլիսոփայական մի հանցանք՝ փոխարինման մեղք: Սա այն է, ինչ կարելի է անվանել գոյութենական գողություն: Բնաջնջողը փորձում է յուրացնել զոհի տեղը տիեզերքում, բայց քանի որ նա չունի այդ կյանքը կրելու աստվածային օրհնությունը, սկսում է հոգեպես քայքայվել:

Կոտորածի աստվածաշնչյան տիպաբանությունը

Աստվածաշնչում կոտորածը հաճախ ներկայացվում է որպես մարդկային չարության գագաթնակետ, բայց նաև որպես մի կետ, որտեղից սկսվում է նոր ուխտը: Երեմիայի մարգարեության մեջ իր զավակների համար սգացող Ռաքելի մասին կարդում ենք. «Ձայն լսվեց Ռամայում.... Ռաքելը լաց էր լինում իր որդիների համար և չէր ուզում մխիթարվել, որովհետև նրանք չկային» (Երեմ. ԼԱ 15):

Սակայն քրիստոնեական ընկալմամբ՝ կոտորածը երբեք վերջնակետ չէ: Նոր Կտակարանում մանուկների կոտորածը նախորդում է Փրկչի հայտնությանը: Ավետարանիչը, մեջբերելով հինկտակարանյան մարգարեությունը, ցույց է տալիս, որ մահվան ստվերը նահանջում է կյանքի լույսի առջև. «Ռաքելը լաց էր լինում իր որդիների համար.... Բայց երբ Հերովդեսը մեռավ, ահա Տիրոջ հրեշտակը երևաց Հովսեփին ու ասաց. «Վե՛ր կաց, առ այդ մանկանն ու նրա մորը.... որովհետև մեռան նրանք, որ մանկան կյանքն էին փնտրում» (Մատթ. Բ 18–20): Այս իմաստով՝ ցեղասպանությունը՝ որպես ոճիր, փորձում է հաստատել մահվան հաղթանակը, բայց հենց այստեղ է գործում վախճանաբանական հեռանկարը. մահը ենթադրելի սահմանն է, սակայն վերջին խոսքի իրավունքը նրան չի տրված, այլ հետմահու գալիք հայտնություններին և ի վերջո անհատական, ազգային կամ համամարդկային փրկությանը:

Այս տիպաբանության մեջ Գողգոթան դառնում է այն առանցքը, որտեղ կոտորածն ու զոհաբերությունը փոխակերպվում են հաղթանակի: Եթե ցեղասպանությունը չարի փորձն է՝ դատարկելու աշխարհն Աստծո ներկայությունից և ոչնչացնելու Նրա պատկերը կրողին, ապա հարության հեռանկարը վերականգնում է այդ պատկերը նորոգված փառքով: Այս համատեքստում զոհվածների հիշատակը դադարում է լինել լոկ սգո առարկա. այն վերածվում է վկայության, որտեղ արյունը ոչ թե լռության կնիք է, այլ աղաղակող ճշմարտություն, որը հերքում է մահվան վերջնականությունը:

Կարող ենք դիտարկել աստվածաշնչյան մի քանի հետաքրքիր համեմատական.

1) *Եգիպտոսի մանուկների կոտորածը և Մովսեսի ծնունդը:* Փարավոնը փորձեց բնաջնջել եբրայեցի արու զավակներին (Ելք Ա 16), որպեսզի վերացնի այդ ազգի ապագան, բայց հենց այդ կոտորածի միջից Աստված հանեց Մովսեսին: Սա ցույց է տալիս, որ մարդկային ոճիրը չի կարող կանգնեցնել Աստծո Բ ծրագիրը:

2) *Հոբի տառապանքը՝ որպես ազգային տիպար:* Մեր ազգի պատմությունը կարելի է համեմատել Հոբի հետ: Նա զրկվեց ամենքից և ամեն ինչից՝ զավակներից, հարստությունից, առողջությունից: Սակայն իր աներեր հավատարմության շնորհիվ կայացավ Հոբի նոր հարությունը: Հոբի գրքի ԽԲ 12-ում ասվում է. «Եվ Տերը Հոբի վերջին օրերն ավելի օրհնեց, քան առաջինները»: Ցեղասպանությունը հայության հոբյան ժամանակաշրջանն էր, որտեղ մենք զրկվեցինք երկրային ամեն ինչից, որպեսզի ստանանք երկնային ու անանցանելի սրբություն, սակայն չպետք է այսօր ինքներս մեզ համարենք վերոնշյալից ազատագրված, քանի որ դա կլինի այն ժամանակ, երբ ապրենք իբրև հարուցյալ ազգ:

Կարող ենք ասել, որ աստվածաշնչյան տեսանկյունից կոտորածի միջով անցած ժողովրդի պատմությունը նմանվում է մաքառող եկեղեցու ընթացքին: Այնտեղ, որտեղ մարդկային տրամաբանությունը տեսնում է միայն մոխիր և վախճան, աստվածային նախախնամությունը տեսնում է վերածննդի սերմերը: Ինչպես որ Քրիստոսի խոցված կողը դարձավ կյանքի աղբյուր, այնպես էլ ազգային մեծագույն ողբերգությունները, անցնելով հավատքի քուրայով, դառնում են հոգևոր զարթոնքի և բարոյական վերածննդի հիմնաքարեր:

Այսպիսով՝ կոտորածի աստվածաբանությունը մեզ հանգեցնում է մի առեղծվածային հայտնության. չարը կարող է ջնջել մարմնական ներկայությունը, սակայն ի զորու չէ ոչնչացնելու այն հույսը, որը խարսխված է Աստծո հավիտենական ուխտի վրա: Փրկությունը՝ որպես վերջնական արդարության հաղթանակ, սկիզբ է առնում հենց այնտեղ, որտեղ թվում էր, թե ամեն ինչ ավարտված է:

Սրբադասում. մարտիրոսությունը՝ որպես հաղթանակ

Մենք՝ հայերս, կոչված ենք լինելու հարուցյալ ազգ: Սա՝ հիշողության շարունակությամբ ու պահանջատիրությամբ, զոհի կարգավիճակից հրաժարում է՝ հօգուտ հաղթանակածի: Հարությունը չի նշանակում մոռացում, այլ վերքերի սրբագործում: Քրիստոս հարություն առավ Իր վերքերով հանդերձ, և այդ վերքերը դարձան Նրա փառքի վկայությունը:

Մեր գալիք սերունդները պետք է գիտակցեն, որ մենք չենք ապրում պատահաբար, այլ ապրում ենք՝ որպես ապացույց, որ չարը պարտվել է: Մենք կրում ենք Եզեկիել մարգարեի տեսիլքի խորհուրդը չորացած ոսկորների մասին. «Ահա ես շունչ պիտի տամ ձեզ, և դուք պիտի կենդանանաք.... և պիտի իմանաք, որ ես եմ Տերը» (Եզեկ. ԼԶ 5–6):

2015 թ. Հայոց ցեղասպանության զոհերի սրբադասումը եկեղեցական սովորական արարողություն չէր. դա զոհերի հանդեպ աստվածաբանական հեղափոխություն էր: Մենք դադարեցինք նահատակների համար «հոգեհանգիստ» անելուց և սկսեցինք նրանց «բարեխոսությունը» հայցել: Սա մեզ կապում է վաղքրիստոնեական վկաների՝ մարտիրոսների հետ: Նրանք, ովքեր զրկվեցին երկրային կյանքից, ձեռք բերեցին երկնային անմահություն և դարձան մեր ազգի հոգևոր պարիսպը:

Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասումը չափանիշների առումով բացառիկ է քրիստոնեական պատմության մեջ: Այն հիմնված է «վասն հավատոյ և վասն հայրենեաց» անբաժանելի միասնության վրա, որտեղ հայրենիքը դառնում է տաճար, իսկ արյունը՝ հավատքի սերմ:

Հայրենիքը՝ որպես տաճար: Հայի համար հայրենիքը սոսկ աշխարհագրություն չէ. այն Աստծո հետ հաղորդակցվելու վայր է: Սպանվել հանուն հայրենիքի նշանակում է պաշտպանել այն սուրբ սեղանը, որի վրա մատուցվում է Սուրբ Պատարագը: Մեր սրբերը չմեռան որպես անճար զոհեր, այլ որպես գիտակից նվիրյալներ: Նրանց մարտիրոսությունը նման է մակաբայեցիների սխրանքին, որոնք նախընտրեցին մեռնել, քան տեսնել իրենց սրբավայրերի պղծումը (Բ Մակ. Է):

Արյունը՝ որպես սերմ: Եկեղեցու հայրերն ասում են. «Մարտիրոսների արյունը քրիստոնեության սերմն է»: Հայ նահատակների արյունը դարձավ այն սերմը, որից ծնվեց հարուցյալ ազգը: Մենք չենք սրբադասել նրանց, որ ողբանք, այլ որպեսզի ունենանք 1,5 միլիոն բարեխոս երկնքում: Նրանք այն «ամպի նման շրջապատող վկաներն» են (Եբր. ԺԲ 1), որոնք ուժ են տալիս մեզ՝ չհանձնվելու:

Սրբադասումը քրիստոնեական Եկեղեցու կողմից սովորական ճանաչում չէ. այն վկայություն է, որ այդ անձինք հաղթել են մահվանը: 2015-ին Հայոց ցեղասպանության զոհերի հավաքական սրբադասումը հիմնված էր երկու անփոփոխ սյուների վրա, որոնք հայկական ինքնության ժառանգորդական ծածկագիրն են՝ հավատք և հայրենիք:

Զոհաբերության չափանիշը: Սրբադասման մեջ կարևոր է ոչ միայն տառապանքը, այլև այն գիտակցված ընտրությունը, որն արեցին նահատակները: Նրանք կարող էին փրկվել՝ ուրանալով իրենց ինքնությունը կամ հավատքը, բայց ընտրեցին մահը՝ որպես հավերժական կյանքի դուռ: Սա համահունչ է Մատթեոս Ժ 39-ին. «Ով իր անձը գտնում է, այն կկորցնի, և ով իր անձը կորցնում է Իմ պատճառով, այն կգտնի»: Հայ նահատակը չմեռավ՝ սոսկ որպես ազգային զոհ, նա մեռավ՝ նաև որպես քրիստոնյա վկա, որի արյունը դարձավ հայոց հոգևոր հայրենիքի անկյունաքարը: Նրանք համալրեցին սպիտակ զգեստավորյալների բանակը. Հայտնության գրքում Հովհաննեսը տեսնում է մի մեծ բազմություն, որը ոչ ոք չէր կարող հաշվել. «Սրանք նրանք են, որ գալիս են մեծ նեղությունից և իրենց զգեստները լվացին ու սպիտակեցրին Գառան արյունով» (Հայտն. Է 14): Մեր 1,5 միլիոն սրբերն այլևս ազգային ողբի խորհրդանիշ չեն, այլ երկնային զորք, որոնք «վասն հայրենեաց» իրենց զոհաբերությամբ սրբագործեցին հայկական հողը՝ այն դարձնելով սուրբ մասունք:

Ապրիլի 24-ը մեզ համար պետք է լինի ոչ թե լացի, այլ ուխտի օր: Մենք ապրում ենք նրանց փոխարեն, ովքեր չապրեցին, բայց պետք է ապրենք ոչ թե տառապանքի հոգեբանությամբ, այլ ստեղծարարության: Որպես հարուցյալ ազգի ներկայացուցիչներ՝ մեր ամեն մի հաջողություն, ամեն մի նորածին երեխա և ամեն մի աղոթք ապացույցն են այն բանի, որ «լույսը խավարի մեջ լուսավորում է, և խավարը նրան չհաղթեց» (Հովհ. Ա 5):

Մեր հոգեբանությունը պետք է վերափոխվի վերքից դեպի առաքելություն: Աստված՝ որպես բացարձակ Դատավոր, տեսնում է արդարությունը, իսկ մեր դերը երկրի վրա այդ արդարության կենդանի վկան լինելն ու որպես հարուցյալ ազգ ապրելն է:

Հարուցյալ ազգի կոչումը. «մահուամբ զմահ կոխեաց»

Ամենաէականը մեր հոդվածի պատգամի մեջ հարուցյալ ազգ լինելու գիտակցումն է: Սա նաև քրիստոնեական վարդապետության սիրտն է:

Եզեկիելի մարգարեության ԼԷ 11–12-ում նկարագրվում է չորացած ոսկորների կենդանացման մի դրվագ, որտեղ Տերն ասում է. «Մարդո՛ւ որդի, այս ոսկորները Իսրայելի ամբողջ տունն են. ահա նրանք ասում են՝ «Մեր ոսկորները չորացան, և մեր հույսը կորավ....»: ➥ էջ 16

Հայրենադարձությունը և Երևանի նոր թաղերի հիմնադրումը ցեղասպանությունից հետո. Արարատ լեռան տեսանելիությունը՝ նախապայման

1918 թ. աշնանը Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության կրած պարտությունը ցեղասպանության հետևանքով աշխարհով մեկ սփռված արևմտահայության շրջանում Միացյալ Հայաստանի ստեղծման հույսեր արթնացրեց: Սակայն 1920 թ. թուրք-հայկական պատերազմից ու Հայաստանի խորհրդայնացումից և հատկապես Լոզանի կոնֆերանսում (1922 թ. նոյեմբեր — 1923 թ. հուլիս) Հայկական հարցի փաստացի անտեսումից հետո հայության՝ հայրենիք վերադարձի խնդիրը վերածվեց սոսկ հայ գաղթականությանը տարբեր երկրներում, առաջին հերթին՝ Խորհրդային Հայաստանում տեղավորելու հարցի:

Օտար երկրներում դեգերող աշխարհասփյուռ հայության մեծ մասը, կորցնելով հայրենի տուն վերադառնալու հույսը, փորձեց հաստատվել իրենց ապաստան տված երկրներում՝ ստեղծելով այնտեղ բազմաթիվ միություններ՝ հայրենակցական, վերաշինաց, կրթասիրաց և այլն: Դրանք նախկին արաբկիրցիներ, կեսարացիներ, վանեցիներ, սեբաստացիներ, էրզրումցիներ, տիգրանակերտցիներ էին:

Արևելյան Հայաստան վերաբնակեցումը, որը հետագայում անվանվեց հայրենադարձություն, տեղի ունեցավ մի քանի փուլերով՝ մինչ 1925 թ., 1925—1940, 1946—1948/49, 1962—1982 թթ.:

1921 թ. վերջին առաջին հայրենադրածները ժամանեցին ՀՍԽՀ: Նրանց քարավանը, որ հիմնականում բաղկացած էր մոտավորապես 3000 վանեցիներից, սալմաստեցիներից, բայազետցիներից (ինչպես պայմանականորեն ընդունված էր նրանց անվանել՝ միջագետքահայեր), 1921 թ. դեկտեմբերի 20-ին Բաթումով տեղափոխվեց Հայաստանի տարբեր շրջաններ:

1923 թ. հավանության արժանացավ շուրջ 50 հազար հայ գաղթականների՝ Խորհրդային Հայաստանում տեղավորելու Ազգերի լիգայի ծրագիրը: Անհրաժեշտ ֆինանսական միջոցներ հայթայթելու համար առաջարկվում էր դիմել տարբեր երկրների բարեգործական ֆոնդերի և բանկերի՝ երկարաժամկետ փոխառություն ստանալու համար:

1925 թ. հունիսին Ֆ. Նանսենի գլխավորությամբ Երևան ժամանած Ազգերի լիգայի հանձնաժողովն առաջարկեց Երևանի արևելյան և արևմտյան մասերում եղած 19 հազար դեսյատին ամայի տարածքը (ղռեր), ինչպես նաև Բասարգեչարի (Վարդենիս) շրջանում Սև ջրի հովիտն օգտագործել գաղթականներին տեղավորելու նպատակով: Վերոհիշյալ ամբողջ տարածքը կազմում էր 33 հազար դեսյատին, որի յուրացման համար պահանջվում էր 4,1 մլն ռուբլի: Սակայն եվրոպական տերությունների՝ մասնավորապես Անգլիայի մեղքով նանսենյան ծրագիրը փաստորեն կյանքի չկոչվեց:

Խորհրդային Հայաստանի ժողկոմխորհին կից ստեղծվում է Վերաբնակեցման բաժին, ապա՝ Գաղթականական գործերի գլխավոր վարչություն, մեկ տարի անց՝ Գաղթականության բաժին: Ներգաղթի այս փուլում հայրենադարձները, բնակություն հաստատելով Հայաստանի զանազան շրջաններում, ստանում էին հող և որոշակի նյութական օգնություն: Խորհրդային իշխանությունից բացի՝ օգտագործվում էր արտասահմանյան բարեգործական հաստատությունների (Ամերիկյան նպաստամատույց կոմիտե, Անգլիական կոմիտե, ՀՕԿ և այլն) նյութական և ֆինանսական օժանդակությունը:

Սիրիա, Հալեպ. մահացած երեխայի կողքին դաշտում ծնկի իջած հայ կինը

Այս փուլի առաջին կազմակերպված խումբը թերևս կարող ենք համարել 1925 թ. հունվար ամսին Հունաստանից եկած բութանիացիներին: Ստեղծելով «Բութանիա» կոոպերատիվ ընկերությունը՝ նրանք քաղաքապատկան 200 հա հողի վրա սկսեցին զբաղվել ծխախոտագործությամբ: Բութանիացիները մինչև 1930-ական թթ. բնակարաններ կառուցելու համար հիմնական օգնություն ստանում էին պետությունից:

Շուտով այլ հայրենակցական միությունների օրինակով Արգենտինայում, Բուլղարիայում և այլ երկրներում կազմակերպվեցին «Բութանիա» հայրենակցական միություններ, որոնցից ստացվեց նյութական օժանդակություն:

1924 թ. 80 ընտանիք արեշցիներ (70-ը՝ չքավորներ) Երևանին մերձակա 300 դեսյատին հողի վրա հիմնում են Նոր Արեշ գյուղը, որը հետագայում դառնում է քաղաքի առանձին թաղամաս: Ներգաղթի հաջորդ փուլն սկսվում է 1925 թ.: Հայրենակցական միությունները ձեռնամուխ են լինում Խորհրդային Հայաստանում իրենց ծննդավայրերի անունները կրող քաղաքներ, գյուղեր, ավաններ, թաղեր ստեղծելու ծրագրի իրագործմանը: Հայրենակցական միությունները հանդես էին գալիս Խորհրդային Հայաստանի կառուցման գործին զորավիգ լինելու կոչերով: Հայրենադարձությունը դիտվում էր այդ շինարարության անբաժան մասը: Այս պարագայում խիստ տարաձայնություններ կային կուսակցությունների ներսում:

Այդուհանդերձ, քաղաքական թեժ պայքարի պայմաններում իսկ, հայրենակցական միությունների կոչով ստեղծված «Վերաշինաց միությունները» շարունակում էին դիմումներ հղել Խորհրդային Միության կառավարությանը՝ իրենց հայրենադարձությունը կազմակերպելու, հող ստանալու և իրենց ծննդավայրերի անուններով բնակավայրեր հիմնելու խնդրանքներով: Առաջին միությունը, որ գործում էր Նյու Յորքում, 1923—1924 թթ. հունվարին պատգամավորական ժողովում որոշում է կայացնում՝ Հայաստանում հիմնել «Նոր Արաբկիր» անունով քաղաք: Այդ նպատակով ՀՍԽՀ կառավարությանը ներկայացրած նրանց ծրագիրն արժանանում է հավանության: Եվ 1925 թ. Քանաքեռի և Հրազդան գետի միջև տարածությունը՝ մոտավորապես 610 դեսյատին, տրվում է նախկին արաբկիրցիներին՝ Նոր Արաբկիր քաղաք կառուցելու համար:

Նոր ավաններն ստեղծվում են հիմնականում մայրաքաղաքին մերձակա տարածքներում՝ փաստորեն Երևան քաղաքի բոլոր կողմերում: Դրանց աշխարհագրական դիրքը հայրենակցական միությունները խիստ կարևորում էին: Որպես կանոն՝ պետք է տեսանելի լիներ Արարատը՝ իբրև բռնազավթված հայրենիքի խարհրդանիշ: Ավանների տեղի ընտրությունն իրականացվում էր բանակցությունների միջոցով, հաճախ նաև՝ հայրենակցական միությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Կառուցվող բնակավայրերը թեև կոչվում էին ավաններ, սակայն իրականում դրանք գյուղեր էին՝ իրենց արտադրական հիմնարկներով: Այդ ավանների ստեղծումն առանց նախագծման էր: Միայն Նոր Արեշը (1924—1926), Արաբկիրը և Նուբարաշենը կառուցվեցին թամանյանական նախագծերով: Ստեղծվեցին Նոր Մալաթիա (1926—1927), Նոր Սեբաստիա (1926—1931), Նոր Կեսարիա (1932—1934), Նոր Թոմարզա (1931), Նոր Տիգրանակերտ (1934) ավանները, որոնք գտնվում էին քաղաքի հյուսիս-արևմուտքում: Դրանք միմյանցից բաժանվում էին փողոցներով, և ենթադրվում էր, որ հետագայում կվերածվեն քաղաքի առանձին թաղամասերի:

Նոր Խարբերդը (1928—1929) Երևանի հարավարևելյան կողմում էր և ուներ հսկայական մշակովի հողատարածքներ: Քաղաքի հարավում էր գտնվում մեծ բարերար, ազգային գործիչ Պողոս Նուբարի անունը կրող Նուբարաշեն ավանը (1932): Պողոս Նուբարը ավանի կառուցման համար նվիրաբերել էր 100 հազար դոլար գումար: Նուբարաշենում կառուցվեցին նաև արևմտահայ տարբեր բնակավայրերի անուններով շենքեր:

Նախատեսվում էր դեպի Էջմիածին տանող ճանապարհի վրա կառուցել ևս նոր թաղամասեր՝ Նոր Տարոն, Նոր Երզնկա, Նոր Յողդաթ, Նոր Շապին Կարահիսար, և դրանք ավարտել առաջիկա 4—5 տարում:

Նոր Տիգրանակերտը գտնվում էր Մալաթիային կից: Նրան հարում էր Նոր Սեբաստիան, որը կազմված էր Նոր Կամարակ, Նոր Պարտիզակ և այլ թաղերից: Նոր Սեբաստիայի հակառակ մայթին գտնվում էր Նոր Քղին՝ իր նորակառույց տներով: Վերոհիշյալ ավանները Շահումյան կոլտնտեսության կազմում էին: Ի տարբերություն Նոր Քղիի (1934) և Նոր Թոմարզայի (1931)՝ Նոր Սեբաստիայի ստեղծման գործընթացն ավելի դասակարգված էր ընթանում:

Ներգաղթողներն իջնում են «Տրանսիլվանիա» շոգենավից, 1946 թ.

Նոր թաղամասերի ստեղծման գործն իր վրա վերցրեց Հայաստանի օգնության կոմիտեն՝ ՀՕԿ-ը, որին կից ստեղծվեց Ներգաղթի կոմիտե, ապա՝ Շինարարության մատակարարման գրասենյակ (Ներգաղթշին), որոնց նպատակը ներգաղթի հետ կապված ամեն տեսակի աշխատանքներին օժանդակելն ու ավանների կառուցումն էր:

Հայրենակցական միությունների գումարներով ավաններին կից կառուցվող տների խմբերը հայրենակարոտ ներգաղթողները փորձում էին անվանել իրենց երբեմնի գյուղերի անուններով: Սակայն հետագայում դրանք մոռացվեցին, իսկ բնակարանները դարձան այդ թաղերի մի մասը:

Նոր ավաններից շատերը չէին կառուցվի, եթե չլիներ հայ մեծահարուստների՝ Պողոս Նուբարի, Գալուստ Կյուլպենկյանի և այլոց ֆինանսական աջակցությունը: Նրանք անգնահատելի դեր ունեցան Նուբարաշենի, Նոր Կեսարիայի և այլ բնակավայրերի կառուցման գործում: Ներգաղթի շրջանում Հայրենակցական միություններն իրենց ազգանպաստ գործունեությամբ իրավամբ վերածվեցին հայրենաշեն կազմակերպությունների: Պատահական չէ, որ նրանցից շատերը վերանվանվեցին «Վերաշինաց» միություններ:

1936 թ. ժողկոմխորհը որոշում է ներգաղթած և նոր ավաններում բնակեցված քաղաքացիների համար սահմանել հարկային արտոնություններ:

Միությունները ձգտում էին փոքր ավանները կենտրոնացնելու մի տեղում, սակայն ցանկանում էին, որ հողամասեր տրամադրվեն ոչ միայն Երևանի շրջակայքում, այլև շրջաններում: Վերաշինաց միությունները լուրջ խնդիրների առաջ էին կանգնում:

1937 թ., երբ սկսվեցին զանգվածային բռնությունները, հայրենադարձությունը դադարեց, ՀՕԿ-ի գործունեությունը կասեցվեց: Իշխանություններն ըստ էության դրժեցին Արևմտահայաստանի տեղանվանաբանությամբ նոր բնակավայրեր հիմնադրելու իրենց խոստումը: Ավելին՝ նրանք կանգ չառան նաև արդեն արևմտահայ անուններ ունեցող բնակավայրերի անվանաբանությունը կրկին փոխելու քայլի առջև, որը հոգեկան մեծ հարված հասցրեց ներգաղթողներին: Պատահական չէ, որ տարիներ անց Նուբարաշենը վերանվանվեց Սովետաշեն: Նուբարաշենի ճակատագրին արժանացան նաև այլ բնակավայրեր:

Հայաստանում հայրենակցական սկզբունքով 1920—1930-ական թթ. բնակավայրերի ու թաղամասերի հիմնադրման գործընթացը շարունակվեց նաև հետպատերազմյան տարիներին: Հետազոտությունները հանգեցնում են այն համոզման, որ ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ դեպքում հայրենադարձության հետ կապված երևույթների միջև կային շատ ընդհանրություններ:

1946—1948 թթ. ընթացքում աշխարհի շուրջ 15 երկրներից Խորհրդային Հայաստան ներգաղթեց 90 000—100 000 մարդ. դա ամենամեծ ու զանգվածային ներգաղթն էր:

1946 թ. հունիսի 23-ին Սիրիայից և Լիբանանից «Տրանսիլվանիա» ռումինական փոխադրանավով Բաթում է մեկնում 366 ընտանիք՝ ավելի քան 1800 մարդ: 1946 թ. ընթացքում «Տրանսիլվանիա», «Ռոսիա», «Պոբեդա», «Մոլոտով» շոգենավերով Հայաստան է ժամանում 8 քարավան: Միայն հունիս-հոկտեմբերին հայրենադարձվածների թիվը 19 253 մարդ էր:

Ներգաղթը կատարվում էր հոծ խմբերով կամ անհատապես: 1946—1948 թթ. հիմնականում ներգաղթում էին մեծ խմբերով, իսկ 1960—1970-ական թթ.՝ անհատական կարգով: Սփյուռքահայ հայրենակցական միությունները Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչներից խնդրում-պահանջում էին, որ ներգաղթողների համար հատկացվեն առանձին տարածքներ՝ ավաններ, թաղեր, փողոցներ, դրանք անվանակոչվեն իրենց կամ ծնողների ծննդավայրերի անուններով: Այդ կերպ հայրենադարձները կարող էին պահպանել իրենց պատմամազգագրական շրջանների ինքնատիպ նկարագիրը:

Քարավանների առաջին խմբերը տեղաբաշխվում էին սկզբում մայրաքաղաքի Նոր Արաբկիր, Նոր Մալաթիա, Նոր Սեբաստիա թաղամասերում, այսինքն՝ դեռևս 1925—1930-ական թթ. ստեղծված հայրենակցական թաղամասերում: Հետագայում նաև նոր թաղամասեր ստեղծելու ցանկություն եղավ:

Նախապես որոշված էր՝ գյուղաբնակներին բնակեցնել գյուղերում, իսկ քաղաքաբնակներին՝ քաղաքներում, նկատի առնել այն բնակիլիմայական պայմանները, որտեղ նախկինում ապրել էին վերաբնակիչները: Սակայն շռայլ խոստումներ ստացած հայրենադարձներն ստիպված էին լինում հաստատվել կենցաղային տարրական պայմաններից զուրկ բնակարաններում, անբարեկեցիկ գյուղերում ու ավաններում:

Ճանաչված բազմաթիվ հայ ճարտարապետներ կառավարության հատուկ հանձնարարությամբ ձեռնամուխ եղան հայրենադարձ հայերի համար կառուցվող ավանների նախագծմանը: Այդ ծրագրի իրագործմանը մասնակից դարձան Գ. Մուշեղյանը, Ռ. Իսրայելյանը, Հր. Իսաբեկյանը, Հ. Բաբաջանյանը, Ռ. Գրիգորյանը և այլք: ➥ էջ 15

Քողարկված հավատ կամ ծպտյալ հայ քրիստոնյաները Թուրքիայում. Քազըմ Գյունդողանի «Ալևիացված հայեր: Մենք Հիսուսինն ենք ի վերուստ, պարտավոր ենք Ալիին» գիրքը

Աշխարհի շատ քրիստոնյաների կենսագրության մեջ առկա են հալածանքի, հետապնդման ու ոչնչացման պատմություններ, բայց կան նաև պատմական ամբողջական փուլեր՝ որպես հանցագործության նախափուլ կամ հետշրջան, որոնք շարունակում են մնալ ստվերի տակ կամ քիչ բացահայտված: Այս անգամ խոսքը վերաբերում է 20-րդ դարի Հայոց ցեղասպանությանը հաջորդող տարիներին՝ ցեղասպանության արհավիրքից փրկված ու Թուրքիայում մնացած հայերի ճակատագրին՝ մասնավորապես Դերսիմի հայերին, որոնք բռնի պարտադրանքի ու մահվան սպառնալիքների պայմաններում, քողարկելով սեփական ինքնությունն ու հավատը, հավատարիմ են մնացել իրենց Աստծուն: Նրանց կյանքի պատմություններն այսօր ոչ միայն պատմական, այլ նաև հոգեբանական՝ արիության, վախի, տառապանքի ու Քրիստոսին հավատարիմ մնալու հույսի վկայություններ են:

ՄԱԿ-ի Ցեղասպանության կոնվենցիայի հեղինակ Ռաֆայել Լեմկինը ցեղասպանությունը բնորոշել է ոչ միայն որպես մարմնական ոչնչացում, այլև հոգևոր, երբ գոյատևումն անհնար է՝ առանց սեփական ազգային ինքնության քողարկման: Լեմկինի այս թեզը տպավորիչ կերպով վերահաստատում է ալևիական արմատներով գրող և վավերագրական ֆիլմերի ռեժիսոր Քազըմ Գյունդողանի «Ալևիացված հայեր: Մենք Հիսուսինն ենք ի վերուստ, պարտավոր ենք Ալիին» գիրքը, որը գերմաներեն լույս է տեսել 2026 թ. մարտի 1-ին Գերմանիայում, մինչ այդ՝ 2022-ին, հրատարակվել էր նաև թուրքերեն: Գիրքը վավերացնում է հայ ինքնության ջնջման և ձուլման ընթացքը Թուրքիայում:

Իր բովանդակային ու կառուցվածքային տեսակով գիրքը վեպ չէ, այլ պատմափաստագրական նյութերի ու հարցազրույցների ժողովածու (ընդգրկում է Դերսիմում և այնտեղից դուրս ապրող հայկական ծագում ունեցող մարդկանց հետ վարած 72 հարցազրույց, ինչպես նաև նրանց մասին 12 զրույց՝ ալևիների, քրդերի և զազաների հետ):

Գրքում Դերսիմի ծպտյալ հայերը ներկայացվում են որպես «խոսող համր և տեսնող կույր»: Սեփական ինքնության որոնումը այստեղ նաև հոգևոր ճանապարհորդություն է, որը մղում է քո ես-ի ծագման, հավատի ու քո իսկ կյանքի իմաստի մասին հարցադրումների: Հիշողությունը չի ներկայանում որպես գծային պատմություն, այլ որպես բեկորների կառուցվածք (կոմպոզիցիա), բեկորներ, որոնք հաճախ ի հայտ են գալիս միայն ուրիշների հետ երկխոսության մեջ:

Քազըմ Գյունդողանը Հայոց ցեղասպանության պատմությունը խորությամբ հետազոտող հեղինակ է: Նա հայտնի է նաև «Դերսիմի կորած աղջիկները», «Վանականի թոռները Դերսիմի հայեր են», գրքերով, որոնց մեջ պատմում է Դերսիմի հայ, ալևի, քուրդ և զազա ժողովուրդների ոչնչացման և բռնի ձուլման մասին: Այս թեմայով նա կնոջ՝ ռեժիսոր Նեզահաթ Գյունդողանի հետ նաև նկարահանել է վավերագրական ֆիլմեր, որոնք պատմում են Թուրքիայի Դերսիմի շրջանում տեղի ունեցած ցեղասպանության մասին, ինչպես՝ «Երբ Մունզուր գետը չի հոսում», «Երկու մազափնջեր– Դերսիմի կորած դուստրերն են», «Օ՜, ժամանակ», «Վանքի երեխաները»: Գյունդողանը այս ֆիլմերի և՛ հեղինակն է, և՛ պրոդյուսերը: Քաղաքական բռնաճնշումների և հետապնդումների պատճառով 2017 թ. կնոջ և երեխայի հետ նա Թուրքիայից Գերմանիա է տեղափոխվել և ապաստան ստանալու դիմում ներկայացրել, սակայն չի դադարեցրել և այսօր էլ շարունակում է իր աշխատանքը ցեղասպանության պատմության, հոգեհարվածի, հիշողության մշակույթի և մարդու իրավունքների ոլորտներում:

Քազըմ Գյունդողանի «Ալևիացված հայեր» գիրքն ունի նորարարական նշանակություն, քանի որ այն համակարգված կերպով ուսումնասիրում է հայկական ծագում ունեցող ալևիացված համայնքների հիշողությունն ու ազգային ինքնության փոխակերպումը: Լռեցված ինքնությունների բացահայտումը գիրքը դարձնում է կարևոր ներդրում Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ոլորտում:



Հեղինակը Արևելյան Անատոլիայի Դերսիմի շրջանի հայերի պատմության օրինակով ցույց է տալիս, թե ինչ է նշանակում այլևս չկարողանալ պահպանել ազգային և կրոնական ինքնությունը ցեղասպանության հետևանքով: Գիրքն ունի պատմական կարևորություն, փաստագրում է հիշողություններ, որոնք գիտակցաբար մոռացության են մատնել: Այն նաև օգնում է ընթերցողին՝ գնահատելու սեփական ինքնությունն ու պատմությունը՝ անձնականի ու պատմականի նույնացման ուղիով:

Գրքում հնչեցվող յուրաքանչյուր արտահայտություն նման է հայտարարության. «— Մեր տանը մենք երբեք չենք խոսել ծագման մասին. միայն գոյատևման մասին»: Այս հայտարարությունը տարբեր ձևերով կրկնվում է գրեթե յուրաքանչյուր հարցազրույցում: Լռությունն այստեղ դատարկություն չէ, այլ ինքնապաշտպանության ձև, որը փոխանցվում է սերնդեսերունդ: Շատ ընտանիքներում պատմությունը բարձրաձայն չի խոսվում, այլ փոխանցվում է անուղղակիորեն՝ վարքի, լռության, ասելիքի որոշակի սահմանների միջոցով: Մասնակիցներից մեկը այն նկարագրում է այսպես. «— Մենք գիտեինք, որ չպետք է հարցնեինք: Բայց մենք նաև գիտեինք, որ ինչ-որ բան չէր ասվի»:

Հարցազրույց տվածներից շատերը բացահայտում են պատկանելության կրկնակի զգացում, որը երկար ժամանակ հակասություն չէր ընկալվում: Միայն ավելի ուշ, հաճախ պատահական հանդիպումների կամ տարեց հարազատների հետ զրույցների միջոցով, ի հայտ է գալիս տարբեր ծագման գիտակցությունը. «— Ես կարծում էի, որ մենք պարզապես ալևիներ ենք: Միայն մեծանալով իմացա, որ մեր տատիկն այլ կերպ էր աղոթում՝ լուռ, միայնակ, բոլորից թաքուն»: Այս տեսակի հիշողությունը մասնատված է: Այն բաղկացած է ժեստերից, ակնարկներից, երգերից կամ ընտանեկան որոշակի ծեսերից, որոնց իմաստը հասկացվում է միայն հետադարձ հայացքով:

Կրկնվող թեմա է լեզվի անհետացումը: Հայերեն այլևս չէին խոսում շատ ընտանիքներում կամ՝ միայն առանձին բառերով, որոնք կորցրել էին իրենց սկզբնական իմաստը: Օրինակ՝ մեկը պատմում է. «— Իմ տատիկը երբեմն հայհոյում էր մի լեզվով, որը ես չէի հասկանում: Երբ ես հարցնում էի, նա պարզապես ասում էր. «— Դա այլևս կարևոր չէ»»: Լեզվի կորուստն այստեղ նկարագրվում է ոչ միայն որպես մշակութային տեղաշարժ, այլև որպես ընտանեկան շարունակականության խզում:

Մի քանի աղբյուրներում կրոնական ինքնությունների տեղաշարժը կամ համընկնումը ներկայացվում է ոչ թե որպես գիտակցված որոշում, այլ որպես հարկադրանքի, անապահովության և պաշտպանական ռազմավարության հետևանք: Միակ անվտանգ ապաստարանն ապահովում էր քողարկված հավատն առ Քրիստոս՝ ի դեմ պատմական իրականության, որպես գոյատևման ռազմավարություն. «— Մեզ ասացին, որ մենք ալևիներ ենք: Եվ դա ավելի լավ էր: Այդպես ավելի անվտանգ էր»:

Հարցազրույցների ընթացքում պարզ է դառնում, որ ինքնությունն այստեղ չի ընկալվում որպես ամրագրված կարգ, այլ որպես ինչ-որ բան, որը փոխվում է, մթագնում և երբեմն վերածնվում: Մի երիտասարդ ասում է. «— Ես չգիտեմ, թե ով եմ: Բայց գիտեմ, որ մոռացել եմ ինչ-որ բան, որը պատկանում է ինձ»:

Այս հայտարարությունն ընդգծում է ամբողջ նյութի առանցքային լարվածության գիտակցելը և այն բացը, որը չի կարող ամբողջությամբ լցվել:

Հայ ընթերցողի համար գիրքը բերում է ինքնագիտակցման այն միտումը, որ ինքնության ու հավատի պահպանման գրավականը սեփական արմատների հիշողությունն է: Ստորև ներկայացնում ենք գրքի հարցազրույցներից հատվածներ՝ գերմաներենից հայերեն մեր թարգմանությամբ:

— Երբ ես հայրիկիս անձնագրում նրա մոր անունը որպես Վարդիթեր տեսա, հորիցս իմացա, որ իմ տատիկը հայ է եղել: Տանը այդ մասին մենք չէինք խոսում: Երբ ես հայրիկիս հարցրի, թե ինչ է նշանակում Վարդիթեր, բավարար տեղեկություններ չստացա: ....Երբ մի քիչ ավելի մեծ էի, մի անգամ մեր հարևանի երեխան՝ Աբդուլահը, ինձ հայից ծնված անվանեց.... Ցեղասպանության ժամանակ իմ տատիկի ողջ գերդաստանը մասամբ սպանվել, մասամբ էլ տարհանվել է: Ինչպես նա հետագայում իմացավ, եղբայրներից երկուսը փախել էին: Իմացել էր, որ նրանք Ամերիկայում կամ էլ Կանադայում են.... Երկար ժամանակ անց լուր է ստանում եղբորից, որը հասել էր Կանադա: Եղբայրը նրան ուղարկել է հրավեր և ինքնաթիռի տոմս, բայց պապս չի թողել, որ նա գնա, որովհետև նա վախենում էր այն մտքից, որ կինը էլ երբեք չէր վերադառնա....:

— Մի անգամ տատիկս հաց էր թխում, երբ այն արդեն պատրաստ էր եղել, նա խմորի գրտնակով խաչ է նկարել սև, մրոտ մետաղյա լագայի հատակին, պապս դա տեսել էր ու կատաղել: Այս պատկերը նա էլ երբեք չնկարեց, իսկ եթե նույնիսկ նկարել է, դա ոչ ոք չի տեսել:

— 1938 թ. սպանությունների ժամանակ նրանք կտրել էին իմ հորաքույրերի կրծքերը և դրել վզի շուրջը, հետո երկուսին էլ սպանել են.... Այդ ժամանակ նրանք տարբերություն չէին դնում, նրանք նույն ձևով կոտորում էին հայերին ու քրդերին: Իմ մորաքույրերից մեկն ուներ երեխաներ, նրանք ապրում էին Մուդրումում: 1938 թ. նրանց հորը արտաքսել են, իսկ նրա որդուն ճանաչել եմ Ստամբուլում: Նրանց երեխաները սովորել են համալսարանում, դարձել են ուսուցիչներ, մեկ աղջիկ ու մեկ երիտասարդ.... Եվ նրանք ամուսնացել են թուրքերի հետ:

Նրանք ասել են իմ հորը. «— Քեռի՛, մի՛ թող՝ իմացվի, որ մենք հայեր ենք: Մենք թեև կարողանում ենք միմյանց այցելել, բայց թույլ տուր այն գաղտնի պահել»: Դրանից հետո ես այլևս այնտեղ չգնացի:

— Իմ պապիկին, իհարկե, աղան ազատ չի արձակել, այլ ամուսնացրել է և հետո նրան ու նրա կնոջը դարձրել ստրուկներ՝ իր համար աշխատելու.... Նրանք հայ երեխաներին վերցնում էին պաշպանության տակ, հարմարեցնում, բայց հետո նրանց օգտագործում միաժամանակ որպես ճորտեր: Սա ևս մի փաստ է.... Իրականում նրանք հաճախ հարմարեցնում էին երեխաներին բարեկեցիկ ընտանիքներին, որովհետև ինչքան շատ երեխաներ տային հարուստ ընտանիքներին, այնքան շատ հարստանալու երաշխիք ունեին:

— Սկզբից վտարում էին, հետո մնացածներին, այսինքն՝ մեզ, ստրկացնում.... Նրանք մեզ համարում էին մարաբասներ, այսինքն՝ ստրուկներ, որոնք աշխատում էին նրանց ձիարաններում, գոմերում: Դա անում էին, ոչ թե որ շատ են ուզում, այլ որ աշխատուժի կարիք ունեին.... Դառն է ասել, որ աղաները, երբ ցանկանում էին, տիրում էին ընտանիքներին, մարաբասների կանանց, օգտագործում էին նրանց, հետո հետ բերում կամ հետ ուղարկում.... Այսպիսով՝ հայերը ոչինչ չունեին:

— Իմ տատը մահացել է 1938 թ . աքսորում.... Երբ մենք դեռ Մազգիրտում էինք, նա օգնում էր կառավարչի կնոջը տնային գործերում՝ եփելու, լվացք անելու: 1938 թ. շրջանի կառավարիչը փոխանցում է լուրը. «Մարիամ քույրիկ, վերցրու երեխաներիդ ու հեռացիր: Այստեղ վատ է լինելու քեզ համար: Անհետացեք այստեղից»: Հաջորդ իսկ առավոտ գալիս են նրանց հետևից: Նրանք խուզում են տղամարդկանց ու կանանց մազերը, իսկ երեկոները քշում էին անասնավագոնների մեջ: Դու գիտես, թե ինչ է դա, ինչպե՞ս են ոչխարներին քշում փարախ, անասունները.... նրանք բոլորին իրար վրա էին կիտում սև վագոնների մեջ, ու թե՝ Դե՛, առա՛ջ....:

— Իմ մայրը խոսում էր քրդերեն, զազաերեն, հայերեն. Նա կարողանում էր նույնիսկ շատ լավ խոսել թուրքերեն և խոսում էր շատ մաքուր: Մենք մեր մորը միշտ քննադատել ենք. «Ինչո՞ւ դու մեզ չես սովորեցրել, երբ մենք փոքր ենք եղել»: Իսկ նա պատասխանում էր. «Որդի՛ս, շունը չէր տանի այն, ինչ մենք տարանք: Այդ է պատճառը, որ ես գաղտնի խաչակնքում էի վերմակի տակ, որովհետև վախը խարսխել էր մեր հիշողության մեջ»: Իրականում նա այսպիսի բաները շշուկով էր պատմում: Երբեմն, երբ մենք մեր մորը շատ հարցեր էին տալիս, նա լռում էր ու ամենևին ոչինչ չէր ասում: Իսկ հետո ասում էր. «Եթե իմանաք, դուք էլ կդառնաք կասկածելի»:

....Իմ մայրն ամուսնացել է 13 տարեկանում, հենց որ աքսորվել է: Ես նրան ասացի. «Ինչո՞ւ ես այսքան երիտասարդ ամուսնացել»: Նա պատասխանեց. «Այդ ժամանակ դա ընդունված էր: Նրանք ասում էին՝ Ամուսնացեք, և մենք ամուսնանում էինք»: 14 տարեկանում ունեցել է իր առաջին երեխան: Նա միշտ խոսում էր ինքնությունը թաքցնելու մասին, և ինչպես էին իրենք ստորացվում այլ ինքնության պատճառով:

— Հավատը մեր ընտանիքում պահպանված գաղտնիք էր:

— Մենք միշտ աղոթել ենք, բայց միշտ էլ փակ դռների հետևում:

— Մեր տատիկը մեր ականջին միշտ շշնջում էր. «Մենք քրիստոնյա ենք, բայց չի կարելի ոչ մեկին ասել»:

— Մայրս ասում էր. «Երբեք չմոռանաս՝ ով ես դու:

— Մենք բարձրաձայն չէինք աղոթում, բայց միշտ աղոթում էինք երեկոները մեր մտքում: Մայրս միշտ ասում էր. «Աստված լսում է նաև լուռ աղոթքը»:

— Մենք թաքցրել ենք մեր ինքնությունը, որովհետև վախեցել ենք:

— Իմ պապիկը մեզ գաղտնի պատմում էր, որ մենք հայեր ենք:

— Կենդանի մնալու համար ստիպված էին լռել:

— Երբ ես իմացա, որ իմ նախնիները եղել են քրիստոնյա, սկզբից ես շփոթվեցի, բայց հետո զգացի մի խոր կապ իմ պատմության հետ:

— Մեր անուններն են փոխվել, բայց ոչ՝ հիշողությունները:

— Տարիներ շարունակ մենք ապրել ենք երկու աշխարհների միջև:

— Վախն ավելի ուժեղ էր, քան ավանդույթը, բայց հավատը մնացել է մեր սրտում:

— Միայն հասուն տարիքում իմացա, որ իմ նախնիները հայեր են եղել:

Սիրվարդ ՍՏԵՓԱՆՅԱՆ, բ. գ. թ., դոցենտ

Հայ Եկեղեցին Հայոց ցեղասպանության ընթացքում

← էջ 6

Փաստերը հավաստում են՝ 1915 թ. Հայոց ցեղասպանությանը զոհ է գնացել արևմտահայ ավելի քան 900 հոգևորական:

Կ. Պոլսի պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Եղիայանի բողոքի հորդորները Թուրքիայի արդարադատության և կրոնի նախարար Փարիզադե Իբրահիմ բեյին, Մեծ վեզիր Սայիդ Խալիմ փաշային, երեսփոխանական ժողովի նախագահ Խալիլ բեյին, Օսմանյան կայսրության Շեյխ-ուլ-իսլամ՝ Մուսա Քյազիմ էֆենդիին, ներքին գործոց նախարար Թալեաթին մնացին անպատասխան: Պատրիարքի զայրույթը և խնդրանքները Թուրքիայի կառավարող օղակներում անտեսվեցին:

1915 թ. հունվարի 5-ին Նախիջևանի փոխանորդ Սիոն վարդապետը հեռագրում էր Խորեն Սրբազանին, որ Նախիջևանում կուտակվել են հազարավոր գաղթականներ, որոնք կարիքի մեջ են, անոթի և սպասում են գնացքներին, որպեսզի մեկնեն Երևան:

Երևանի թեմում ապաստանած գաղթականների վիճակի մասին 1915 թ. հունվարի 17-ին Խորեն եպիսկոպոսը զեկուցում է Էջմիածնի եղբայրական օգնության հանձնաժողովին. «Մինչև օրս Երևան հասած փախստականներից քաղաքացիները տեղավորված են Երևանում, որոնց թիվը հասնում է 1500-ի, իսկ մյուսները՝ զանազան գյուղերում: Տեղիս գործադիր մարմինը ոչ մի ջանք չի խնայել՝ բոլորին տաք շոր, անկողին, սնունդ հասցնելու: Գաղթականների հոսանքը դեռ չի դադարել, շարունակում են գալ Պարսկաստանից և Թուրքիայից Էջմիածնի վրայով, որոնց տեղավորումը կատարվում է ամենայն արագությամբ»:

Գաղթական հայության հիմնական մասը տեղավորվեց Երևանին հարող Քանաքեռ, Արամուս, Բաշգառնի, Շիրաբաթ և Նորագավիթ գյուղերում:

Սբ. Էջմիածնի եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի՝ 1915 թ. հունվարի 24-ի նիստում որոշվեց.

1. Կանոնավոր կազմակերպել գաղթական-փախստականներին խնամելու և կերակրելու գործը:
2. Միաժամանակ անցկացնել միանման վիճակագրություն:
3. Գաղթականներին բաժանել հագուստ և անկողին:
4. Ամենուր կազմակերպել բժշկական օգնություն:
5. Գաղթականների համար ստեղծել բարենպաստ պայմաններ, բացել բաղնիքներ:
6. Ամեն կերպ նպաստել անտեր ու չքավոր երեխաների խնամքին ու ուսմանը:
7. Աշխատանքի ընդունակների համար աշխատանք կազմակերպել:
8. Ունենալ հատուկ չափաբերական մատյան Թուրքիայից, Պարսկաստանից և այլ վայրերից եկած գաղթականների համար:

Գաղթական հայերը, հաղթահարելով զգալի տարածություններ, քաղցած, տանջված, սառած, վախեցած, իրենց վրա զգալով թուրքական և քրդական կոտորածների սարսափը, առանձին խմբերով հասնում էին Կովկասի սահմանները և կուտակվում Մայրավանքի շուրջը: Այն, ինչ որ տեղի էր ունենում այդ ժամանակ Մայր Աթոռում, կարելի է համեմատել միայն դանթեական դժոխքի հետ: «Գաղթականությունը… եկավ կուտակվեց Էջմիածնի շրջակայքում, անտառի մեջ ու վանքի արևակեզ հրապարակների վրա, ապա անցավ հեղեղելու Երևանի հրապարակները, եկեղեցիների գավիթներն ու նույնիսկ բանուկ մայթերը՝ ժեռուտ ու կիզիչ: Այո՛, եկավ, կուտակվեց ավելի քան 15 000 գաղթականություն Խնուսից, Բուլանուխից, Մանազկերտից, Մուշի դաշտից, Ախլաթից, Ալջավազից, Արճեշից ու Վասպուրականի մնացյալ գավառներից, ինչպես և Մոկսից ու Շատախից:

….Եվ սկսվեց սովը, ապա՝ վարակիչ հիվանդություններն ու մահացությունները Էջմիածնի, Իգդիրի, Երևանի, մանավանդ Էջմիածնի հրապարակներում ու պատերի տակ, և սկսվեց նոր աղետը՝ ահավոր և ահռելի:

…. Էջմիածին, 28 հուլիսի

Մարդկային երևակայությունից վեր զարհուրելի տեսարան է ներկայացնում այժմ Էջմիածինն իր շրջանակներով: Չեք գտնի



Վանի ինքնապաշտպանությունը, 1915 թ., ապրիլ

ոչ մի արշին տեղ, ուր կուտակված չլինեն զանգվածները:

Բազմահազար գաղթականությունը բռնել է ճեմարանի բակը, վանքի գավիթը, Ղազարապատը, լճի չորս կողմը, նույնիսկ շուկան ու փողոցները: «Համ» աղաղակում են ամենքը, հաց չկա, հիվանդացողներն ու մեռնողները բազմաթիվ են…

Էջմիածին, 28 օգոստոս

Փոքրիկ պտույտ «Դանթեի դժոխքում»: Ճեմարանի մուտքի առաջ ընկած են մի քանի կանայք ու երեխաներ, որոնք վերջին կռիվն են մղում մահվան դեմ: Նրանց կողքին մի քանի անչափահաս աղջիկ ու տղաներ, երկու դիակի վրա ընկած, ականջ են խլացնում իրենց ողբով:

Ներս են մտնում ճեմարանի բակը, գարշահոտություն է տիրում այստեղ. այդ գարշահոտության մեջ թափված են մեր հարազատների քոչերը: Մուտքից մինչև ճեմարանի առջև համրում են զանազան հասակի վեց դիակներ:

Անցնում եմ վանքի բակը, ուղիղ մուտքի առջև երկու կին մի երիտասարդ դիակի վրա իրենց ողբն են ասում ու պատան կարում: Տպարանի ու միաբանության խցերի առաջ թափված են իրար վրա մահվան ճանկերում գալարվող ծերունիներ, կանայք և երեխաներ, իսկ ճանապարհի երկարությամբ մինչև էլեկտրական կայանը ընկած են բազմաթիվ դիակներ:

Ահա վարակիչ հիվանդությունների աղբյուր դարձած Ներսիսյան լիճը, աջ ափում, խոնավ գետնին ընկած, կյանքի հետ իրենց հաշիվն են մաքրում մարդակերպ արարածների բազմաթիվ խմբեր, իսկ լճի ձախ ափն ամբողջ երկարությամբ բռնած է զանազան հասակի դիակներով՝ պատանած և անպատան: Իջնում եմ անտառը, մի քանի քայլի վրա, դեպի ձախ, աչքիս է զարնվում մարդկային աղտոտություններով լի փոսի մեջ ընկած մի պառավ կնոջ դիակ, ամբողջապես ճանճերի ու միջատների մեջ կորած դիակից երևում է, որ նա չափազանց երկար կռիվ է մղել մահվան դեմ…

Հասնելով անտառի ծայրը՝ հանկարծ առաջս բացվում է մի դժոխային տեսարան, հիսունի չափ մշակներ գերեզմաններ են փորում, իսկ մի ահագին տարածություն պատած է մի 6–7 հարյուր անթաղ մեռելներով, բոլորը այլակերպված, ուռած այն աստիճան, որ շատերի պատանն է պատռվել, շատերը նեխել են, որդերի մեջ կորել ու գարշահոտությունը չորս կողմը սփռել, բավական է հիշել, որ հարյուրից ավելի դիակներ հինգերորդ օրն է, ինչ անթաղ ընկած են Էջմիածնի կիզիչ արևի տակ:

Օգոստոսի 21-ին մեռել են 131 հոգի, 22-ին՝ 168, 23-ին՝ 204, 24-ին՝ 234, 25-ին՝ 280, 26-ին՝ 268, 27-ին՝ 347, 28-ին՝ 357, 29-ին՝ 300, 30-ին՝ 314:

Այսպիսով, Էջմիածնի գաղթականությունը ընդամենը 10 օրում տվեց 2613 զոհ: Այսքանը միայն Էջմիածնում, իսկ Իգդիրո՞ւմ, Երևանո՞ւմ և բազմաթիվ գյուղերո՞ւմ»:

Մայր Աթոռ Ս. Էջմիածին եկած փախստականները միանգամից շրջապատվեցին վանական միաբանության խնամքով: Մայրավանքում կուտակվել էր մոտ 60 հազար գաղթական հայություն: Բեսարաբիայի թեմի կոնսիստորիայի նախագահող Տիրայր վարդապետին ուղղված իր նամակում նշում էր Սինոդի անդամ և «Արարատի» խմբագիր Բաբգեն վարդապետ Աղավելյանը. «Գիտես, որ «Արարատի» ամբողջ գործն իմ վզին է, որքան հնարավոր է, աշխատում եմ, չնայած որ շուրջս սոսկալի տեսարան է ներկայացնում գաղթականությունը. ամբողջ օրը նրանցով եմ զբաղված, օրական 5–6 հազար մտնում և դուրս է գալիս, իսկ տեղում՝ Էջմիածնում, միշտ 60 հազարից ավելի լցված են, սոսկալի դրություն է, 3 հազարից ավելի որբեր ենք ժողովել Վեհարանում, որը վերածված է որբանոցի և հիվանդանոցի: Աշխատող ձեռք չունենք»:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը այդ օրերին տվեց զոհեր: Փախստականներից ժանտախտով վարակվեցին և մինչև 1915 թ. օգոստոսը մահացան Ս. Էջմիածնի եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի նախագահ և Սինոդի անդամ Եփրեմ եպիսկոպոս Սուքիասյանը, Մայր Աթոռի միաբան Վահան վարդապետը, մահից հազիվ փրկվեց Ս. Էջմիածնի եղբայրական օգնության հանձնաժողովի անդամ Գարեգին վարդապետ Հովսեփյանը, իսկ Բաբգեն վարդապետ Աղավելյանը, որը ևս հանձնաժողովի անդամ էր ու Ս. Էջմիածնի որբանոցի կառավարիչը, 1915 թ. դեկտեմբերի 27-ին որբերից վարակվելով, վախճանվեց 1916 թ. հունվարի 3-ին:

1915 թ. Հալեպից Մայր Աթոռում ստացվեց Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ-ի նամակը, որում նա մասնավորապես հաղորդում էր. «Տիգրանակերտ գնացողներեն լուր չկա, դժոխք գնացողների պես: Այնթապի գաղթալ ազդարարվեցավ: Այս գիշեր 51 ընտանիք հասան: Այս կողմեն քաղաքաց հայ բնակչություն Դամասկոսի Հավրան (կամ Հորան) գավառը կը տեղափոխվեն: Ուրֆայեն ալ, թերևս Տիգրանակերտեն 800 հոգի հասնելու վրա են: Խարբերդեն բերվածները Ռաս-էլ-Այնէն, ուղղակի Տերզոր կղրկվեն: Հիվանդությունը համաճարակ է: Երկրիցս դեղ ու նպաստ ղրկեցավ, բայց կաթիլ մը օվկիանոսի մեջ: 20 000 և ավելի են այդ գավառի գաղթականք, Հալեպի մեջ համախմբված են ավելի քան 15 000 և օրեցօր հեղեղի նման կը հասնին:

Անոթությունեն հիվանդության չափ կոտորած կլինի: Պարեն Հալեպի մեջ գրեթե կանոնավորապես կտրվի, բայց դուրսերը հաց կաղաղակեն: Կամ փրկարար հրաշագործ զորությունը ու կամ թագավորական գանձ պետք է, որ կես միլիոն կիլիկեցիք թերևս այնչափ կամ ավելի արևելյան գավառներից կարենան կերակրվեն անապատների մեջ:

Աշխարհ տեսած չէ և պիտի չտեսնե այսքան արհավիրք, այսքան թշվառություն ու կորստություն: Երուսաղեմի ավերը բախտավորություն է հայության բաղդատմամբ՝ ավերած, կոտորած, բռնությունք երկսեռ մանուկներու, անհետացում, անհամար առևանգությունք»: Հաղորդման վերջում Նորին Սրբությունը գրում էր. «Ինչ պիտի ըլլան վանքերն ու մենաստանները, սուրբ սպասները, գրքերն ու զգեստները: Խորհուրդ տվեք, մենակ եմ: Խելք չմնաց գլուխս, արտասուք չմնաց աչքերուս մեջ, զգացում չմնաց սրտիս մեջ: Չորս կողմս գիշեր ու ցերեկ մերկություն, անոթություն, նվաղում, լաց ու վայնասուն»:

Այս հաղորդումը ստանալուն պես Գևորգ Ե-ն թուրքական կառավարության՝ հայ ժողովրդին բնաջնջելու և Հայաստանից ու Կիլիկիայից Իկոնիա ու Միջագետք նրա արտաքսումը կազմակերպելու ծրագրի մասին հայտնում է Պողոս Նուպար փաշային: Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից նրան առաջարկվում էր բողոքել «դաշնակից և չեզոք պետություններին, որպեսզի խանգարեն այդ դժոխային ծրագրի» իրագործմանը:

Օսմանյան Թուրքիայի առանձին վայրերում հայ ազգաբնակչությունը կարողացավ միավորել և կազմակերպել իրենց ազգային և հոգևոր առաջնորդների շուրջը և հակահարված տալ զավթիչներին: Առանձին տարածքներում հայերի ինքնապաշտպանություն կազմակերպեցին:

Մուշի ինքնապաշտպանության կազմակերպիչների շարքում էր Եղիշե քահանա Տեր-Պարսամյանը:

Սասունի Բսանք գյուղի ինքնապաշտպանության ղեկավարներից էր Ստեփան վարդապետ Տեր-Ավետիսյանը: Սասունի ինքնապաշտպանական մարտերին մասնակցեցին նաև Ստեփան քահանա Սուլուխեցին, Ղևոնդ քահանա Տեր-Մարգարյանը, Մամբրե քահանա Երանոսյանը, Թորոս քահանա Մուրադյանը, Առաքել քահանա Տեր-Քաջյանը:

Յոզգատի հայության դիմադրության ղեկավարն էր թեմի առաջնորդ Ներսես եպիսկոպոս Դանիելյանը:

Զեյթունի ինքնապաշտպանական կռիվների ղեկավարներից էր Սահակ քահանա Գալաջյանը, «որը, Ղևոնդ Երեցի նման, գիշեր և ցերեկ խաչը և Աստվածաշունչը ձեռքին, հաղորդակցություն էր տալիս զինվորներին»: 1915 թ. զեյթունցիներին աքսորեցին, կանանց և երեխաներին՝ Իկոնիա, մնացածին՝ Դեր Զոր, Ռաքա և Բաղդադ: Աքսորվեցին և սպանվեցին Գարանֆիլյան Սրբազանը, Հովսեփ վարդապետ Ագրապյանը:

1918 թ. հուլիսի 31-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին ժամանեց գերմանա-ավստրո-հունգարական պատվիրակությունը՝ գեներալ Ֆոն Կրեսի և Կովկասում Ավստրո-Հունգարիայի դեսպան բարոն Ֆրանկենշտայնի գլխավորությամբ: Հանդիպման ժամանակ Գևորգ Կաթողիկոսը նրանց փոխանցեց Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի կայսրերին ուղղված իր կոնդակները՝ հայերին օգնելու նպատակով: Սակայն ո՛չ Գերմանիայի, ո՛չ Ավստրո-Հունգարիայի կայսրերը ոչնչով չօգնեցին հայ ժողովրդին:

Թուրքերն ավերեցին, այրեցին, կողոպտեցին նաև հայկական վանքերն ու եկեղեցիները կամ դրանք դարձրին մզկիթներ: «Հայաստանի ջարդերը» գրքում Ի. Լեփսիուսը նշում էր. «Հազարե ավելի եկեղեցիներ ամայացված են: Անոնք փոխված են մզկիթներու, երբ չեն գործածվիր հասարակ նպատակներու, կամ թե ավերակի վերածված են»: Վանքերի և եկեղեցիների հետ ոչնչացվեցին արվեստի, հայ գրի ու գրչության բազմաթիվ հուշարձաններ, գրչական կենտրոնների հարյուրավոր ձեռագիր հատորներ: Ձեռագրերի միայն փոքրաթիվ մասը պատահաբար փրկվեց:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ Առաջին աշխարհամարտի նախօրյակին Հայ Եկեղեցին, որ միշտ մտահոգ էր իր հոտի ճակատագրով, ի սկզբանե փորձում էր կանխել աղետը՝ դիմելով ամենատարբեր միջոցների: Բայց Հայ Եկեղեցու բոլոր փորձերը մնացին ապարդյուն:

Այդուհանդերձ, Հայ Եկեղեցին անում էր հնարավոր ամեն ինչ՝ արևմտահայության բեկորները սովից, ցրտից, հիվանդություններից փրկելու, գաղթականների կարիքները հոգալու համար: Այդ առումով անգնահատելի է Հայ Եկեղեցու, մասնավորապես Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հովանու ներքո ստեղծված եղբայրական օգնության հանձնաժողովի դերը ցեղասպանությունը վերապրողներին՝ գաղթականներին զորավիգ լինելու գործում:

Ստեփան ՍՏԵՓԱՆՅԱՆՑ, պ. գ. դ.

....Արարատ լեռան տեսանելիությունը՝ նախապայման

➥ էջ 12

Ավանների կառուցմանը մասնակցում էին նաև սփյուռքահայ ճարտարապետներ (Ա. Թերզիբաշյան և ուրիշներ):

1946–1949 թթ. զանգվածային հայրենադարձության ընթացքում կառուցվեցին ինչպես ավաններ, այնպես էլ թաղամասեր ու փողոցներ:

Կիրզա տափարակ բարձրավանդակի վրա 1947 թ. վեր խոյացավ Նոր Զեյթունը: Կիրզա անունը բնակավայրին տվել են 1930-ական թթ. այստեղ բնակություն հաստատած ֆրանսահայ մահուդագործները, որոնք հիմնել էին գործվածքի արհեստանոց: 1946 թ. գարնանը Երևանից Սևան տանող ճանապարհից դեպի աջ՝ Քանաքեռի այգիների և քաղաքը շրջապատող անտառաշերտերի միջև ընկած մի ամայի ու ընդարձակ տարածության վրա, կառուցվեց բնակելի 3 տուն: Սկզբում ներգաղթողներին տեղավորել են այստեղ եղած 14 բարաքներում: 1947 թ. մայիսի 13-ին Զեյթունում բնակություն հաստատեցին առաջին 55 ընտանիքները: Հետագայում՝ հունիս-օգոստոս ամիսներից, ժամանում են Սիրիայից, Պարսկաստանից, Լիբանանից, Ֆրանսիայից, Բուլղարիայից և այլ երկրներից եկած հայրենակիցներ: Մինչև 1948 թ. Զեյթուն ավանի կառուցման համար ծախսվեց 5 մլն ռուբլի: Կառուցվեցին բնակելի նոր տներ, անցկացվեց էլեկտրական լուսավորություն, բարեկարգվեցին փողոցները: 1949 թ. ավանում արդեն հաշվվում էր 1800 տուն, կար 2 դպրոցական շենք, ակումբ, բաղնիք, բուժարան, ռադիոբարձրախոսներ:

Նոր Զեյթունը հետագայում, նոր նախագծերի համաձայն, իր հերթին բաժանվեց Վերին և Ներքին Զեյթունների. «նոր» բառը հանվեց թաղամասի ընդհանուր անվանումից: Ավանը պետք է տարածվեր Քանաքեռի ամբողջ բարձունքով և հասներ մինչև հին Նորք: Հարավում այն պետք է ձգվեր մինչև «Հաղթանակի» զբոսայգի: 1960-ական թթ. այստեղ կառուցվում են վիրահատական գիտահետազոտական ինստիտուտի մասնաշենքերը, մեծ թվով տուֆակերտ բազմաբնակարան շենքեր, կաթի, հացի գործարաններ, «Հաղթանակ» կինոթատրոնը, մանկապարտեզ, մշակույթի տուն և այլն:

Նոր Զեյթունին կից թաղամասը տրամադրվեց կամարակցիներին, և այնտեղ կառուցվեց Նոր Կամարակ ավանը: Սակայն թաղամասի անունը հետագայում չպահպանվեց: Կամարակի անունով կոչվեց տեղի փողոցներից մեկը:

Զեյթունի և նրա շրջակա ավաններում կառուցվող տները, որպես կանոն, միահարկ էին և ունեին այգի, բանջարանոց կամ ծաղկանոց: Կառուցված էին զուգահեռ, միաշար: Հետագայում՝ 1960–1970-ական թթ., այդ ավանները մտցվեցին Կիրովյան շրջանի մեջ:

Ինչպես հայտնի է, Առաջին աշխարհամարտի տարիներին Կիլիկիան նույնպես հիմնովին դատարկվեց հայերից: Աշխարհաստիչուռ եղած կիլիկիահայերի մեջ էին նաև մարաշցիները: Լատինական Ամերիկայի երեք քաղաքներում գործող «Մարաշ» հայրենակցական միության անդամները վճռեցին իրենց միության նպաստը բերել հայրենաշինությանը՝ Արևելյան Հայաստանում վերականգնել Նոր Մարաշը:

1949 թ. Արգենտինայի «Մարաշ» հայրենակցական միության որոշմամբ և սփյուռքում ու հայրենիքում բնակվող մարաշցիների խնդրանքով Երևանից ոչ հեռու՝ Նորքի գեղատեսիլ բարձունքում, դրվեցին Նոր Մարաշի առաջին հիմնաքարերը: Օրերի հետ բարձրացավ ավանը, կանաչապատվեց, լցվեց նոր բնակիչներով: 250 հա-ի վրա կառուցվեցին առանձնատներ, հետագայում՝ բարձրահարկեր: Սկսեցին գործել մշակույթի պալատ, դպրոց, պոլիկլինիկա, խանութներ, կենցաղի տներ և այլն: 1969 թ. ավանում հաշվում էր 7000 բնակիչ:

Նոր Արաբկիր, Նոր Սեբաստիա, Նոր Մալաթիա, Նոր Եվդոկիա, Նոր Կեսարիա, Նոր Մարաշ թաղամասերին 1948 թ. ավելացավ ևս մեկը՝ Նոր Կիլիկիան: Այն գտնվում էր «Հաղթանակ» կամրջից ոչ հեռու՝ բլրի վրա: Այստեղ կառուցվեց երկհարկանի 84 շենք: Հետագայում 170 ընտանիքի համար կառուցվում է ևս 100 բնակարան: Էջմիածնի ճանապարհից մինչև ջրանցք ձգվող խաղողի այգիների տարածքը վերակառուցվեց և վերածվեց Նոր Կիլիկիայի հրապարակի, որի շուրջ կառուցվեցին շենքեր ու դպրոցներ: Կառուցվեց նաև գարեջրի գործարան՝ հայրենադարձներին աշխատանքով ապահովելու համար:

Հայրենադարձների ընտանիքները նաև պետությունից ստացած վարկերով էին կառուցում իրենց բնակարանները: Առաջին Նորկիլիկիացի հայրենադարձը Տիրան Քեթերյանն էր՝ մոր և երկու քույրերի հետ ներգաղթած Եգիպտոսից: Նոր Կիլիկիայի հիմնադրման նախաձեռնությունը պատկանում է ամերիկահայ հայրենադարձ Արշակ Չագմագչյանին, որը գրամեքենաների մասնագետ էր: 1946 թ. Լոս Անջելոսից նա գնում է Նյու Յորք, ապա՝ Սիրիա, հետագայում՝ քարավանների խմբի հետ ներգաղթում Երևան:

1960–1970-ական թթ. Երևանի արվարձաններում կամ դրանց կից կառուցվում են ոչ միայն թաղամասեր, ավաններ, այլև փողոցներ: Ընդառաջելով սփյուռքահայերի՝ հատկապես հայրենակցական միությունների դիմում-խնդրանքներին՝ Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը շարունակեց նոր թաղամասերի անվանակոչումները: Այսպես՝ ՀՀ Գերագույն խորհրդի 1970 թ. սեպտեմբերի 10-ի հրամանագրով՝ Թազագյուղը, որտեղ ապրում էին Սիրիայից, Իրանից, Հունաստանից և այլ երկրներից հայրենադարձներ, անվանակոչվեց Այնթապ: Տեղի ունեցավ նաև պաշտոնական անվանակոչություն:

Նախատեսված էր կառուցել նաև Նոր Մնձուր ավանը, որը պետք է գտնվեր Երևանից 3 կմ արևմուտք՝ Դալմայի այգիներին կից: Այդ նպատակի համար անգամ հանգանակություն կատարվեց, արվեցին չափագրումներ, սակայն ծրագիրը մնաց անկատար:

Անվիճելի է, որ հայրենադարձության ընթացքում թույլ տրվեցին բազմաթիվ սխալներ ու բացթողումներ: Պատահական չէ, որ հետագա տասնամյակներին շատերը կրկին բռնեցին արտագաղթի՝ առավելապես Արևմուտքի երկրների ճանապարհը: Սակայն հայրենադարձությունը Հայաստանի համար ընդհանուր առմամբ ունեցավ մեծ նշանակություն: Նախ՝ Հայրենական մեծ պատերազմում ունեցած մարդկային ծանր կորուստներից հետո հայրենադարձության շնորհիվ որոշակիորեն բարելավվեց հանրապետության ժողովրդագրական իրավիճակը: Հայրենադարձներն իրենց ծանրակշիռ ավանդն ունեցան երկրի սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի զարգացման գործում: Արևելյան Հայաստանի տեղանունների շարքում կտրուկ աճեց Արևմտյան Հայաստանն ու արևմտահայ իրականությունը հիշեցնող տեղանվանաբանությունը, որը դարձավ ինչպես քաղաքամայր Երևանի, այնպես էլ հայ ժողովրդի կյանքի ու աշխարհընկալման անբաժան մասը:

Լուսինե ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
Երևանի պատմության թանգարանի գիտական գծով փոխտնօրեն

Երևանը Հայոց ցեղասպանության տարիներին

➥ էջ 10

Զգտելով իր աշխատանքներին տալ ուղղորդված բնույթ՝ Կոմիտեն համագործակցում էր Երևանի քաղաքային իշխանությունների և հասարակական կազմակերպությունների հետ, իսկ 1918 թ. հետո՝ Հայաստանի առաջին հանրապետության, այնուհետև խորհրդային իշխանությունների հետ (վերջիններս ծանր պայմաններում ստիպված էին ընդունել Ամերկոմի ծավալած որբախնամ գործունեությունը): 1917 թվականից սկսած՝ ամերիկյան միսիոներները Երևանում և Ալեքսանդրապոլում, ինչպես նաև Կարսում ու Դիլիջանում և անգամ գյուղերում բացել էին արհեստանոցներ, որտեղ աշխատելով՝ կանայք և տղամարդիկ հոգում էին ոչ միայն չքավոր բնակչության և գաղթականների հոգսերը, այլև զորքի ու հիվանդանոցների կարիքների մի մասը: Ընտանիքներում տեղավորված որբերից յուրաքանչյուրին կեցության համար հատկացվում էր ամսական 10 ռուբլի: Այն որբերի համար, որոնք որբանոցներում չէին, Ամերկոմը պարբերաբար անվճար ճաշարաններ էր բացում: Հաշվի առնելով համաճարակների տարածվածությունը, ինչպես նաև հիվանդ երեխաներին առողջներից առանձին պահելու խնդիրը՝ Ամերկոմի կողմից դրվեց որբերին գաղթականներից առանձնացնելու հարցը: Այս նպատակների համար Ամերկոմին տրամադրվեցին շենքեր՝ Երևանի բերդի զորանոցը, Քանաքեռի զորանոցը, իսկ հիվանդ երեխաների համար՝ օրիորդաց սեմինարիայի շենքը՝ Աստաֆյան (այժմ՝ Աբովյան) փողոցում: 1919 թ. մայիսի 5-ի որոշումով՝ կառավարությունն Ամերկոմին է տրամադրում Երևանի նորակառույց արական գիմնազիայի անավարտ շենքը: Ամերկոմն իր կողմից պարտավորվում է Երևան տեղափոխել պատվիրված շինանյութը և ավարտել շինարարությունը: Ամերկոմը ծավալել էր նաև կրթական գործունեություն: Երևանի որբանոցային դպրոցների հոգսը՝ պետության, իսկ մյուս վայրերինն Ամերկոմի հոգածության ներքո էր: 1919 թ. տվյալներով՝ քաղաքի որբանոցներում տարբեր տարիքի դպրոցահասակ 3000 երեխա կար: Դպրոցներում, հայկական ավանդույթներից չհեռանալու նպատակով, Երևանի թեմի կողմից նշանակվում էին քահանաներ՝ կրոն դասավանդելու համար: 1920 թ. դրությամբ՝ Ամերկոմի խնամքի տակ կար 18 500 որբ, որոնցից 2500-ը՝ Երևանում: Նույն թվականի տվյալներով՝ Ամերկոմը Երևանում ուներ 6 հիվանդանոց՝ 955 մահճակալով:

1919 թ. դրությամբ՝ Երևանում հաշվառված էր շուրջ 40 000 որբ, որոնցից կառավարությունը կարողացել էր որբանոցներում տեղավորել 15 612-ին: Փողոցներում անխնամ թափառող որբերի թիվը մի քանի անգամ գերազանցում էր պետական հոգածության տակ գտնվողներին: Սովից ու հյուծվածությունից օրական մահացությունը միայն Երևանում կազմում էր 50 մարդ, իսկ ամբողջ Հայաստանում՝ 2000: Իրենց հնարավորությունների սահմաններում անօթևան որբերին օգնում ու սատարում էին երևանցիները: «Армянскій вѣстникъ» ամսագրում հայտնվում է, որ Երևանում մասնավոր հիմունքներով կազմակերպվել է գեղարվեստական արվեստանոց, որտեղ աշխատել են վարպետ-նկարիչներ՝ բացառապես գաղթականներից, պատրաստվել են նաև Վանի ասեղնագործ վարպետուհիների ձեռագործ աշխատանքներ, որոնք իրենց որակով և նրբագեղությամբ չեն զիջել բելգիականին: Արվեստանոցի կազմակերպիչները նպատակ են ունեցել այդ աշխատանքները Զատկի տոնական օրերին ցուցադրել Մոսկվայում՝ հայ ինժեներների մոսկովյան ընկերության հովանավորությամբ (տե՛ս Армянскій вѣстникъ, № 6, էջ 20):

Երևանի պատմության թանգարանում հազարավոր լուսանկարների հետ պահպանվել է նաև արդեն հնացած և խունացած, բայց անչափ խոսուն մի լուսանկար, որտեղ միջին տարիքի մի հայուհի շրջապատված է երեխաներով: Աշխեն Տեր-Սարգսյանն է՝ Աշխեն մայրիկը, ինչպես նրան քնքշորեն անվանում էին այն որբանոցի սաները, որտեղ նա աշխատում էր: Ցեղասպանությունը վերապրածները հիշում են, որ փողոցում հանդիպելով անօթևան որբ երեխաների՝ տիկին

Աշխեն Տեր-Սարգսյանը՝ շրջապատված որբերով

Աշխենն իր տուն էր տանում, խնամում, կերակրում նրանց: Տիկին Աշխենն իր սաների հետ շրջում էր քաղաքում և անօթևան երեխաների համար հանգանակություն հավաքում: Շատերի հիշողության մեջ մնացել է նրա դրամարկղը՝ թիթեղյա մի տուփ, որի վրա գրված էր. «Օգնեցեք երեխաներին»:

Տիկին Աշխենի պես սրտացավ մարդիկ շատ էին Երևանում: Նրանց մի մասն օգնում էր դրամական միջոցներով, մյուսները՝ աշխատանքով: Ժամանակի մամուլի էջերում տեսնում ենք երկար ցուցակներ, որտեղ մարդկանց անուններ են՝ դիմացը գումարի չափ (25 ռուբլուց մինչև մի քանի հարյուր): Օրինակ՝ Հարություն Խորասանյանի տղաները՝ Պողոսը և Հակոբը, մի ալմաստ են տալիս իրենցից օգնություն խնդրող մի գաղթականի, և արդեն մեծ տարիքում նա անսպասելի հայտնվում է իր բարերարների տանը ու պատին կախված նկարներից ճանաչելով նրանց՝ բացահայտում ալմաստի պատմությունը, որի շնորհիվ կարողացել էր ապահովել իր ընտանիքի բոլոր կարիքները: Բազմաթիվ են նաև գործարար երևանցիների անձնական օգնությունները, որոնցից մեկի՝ վաճառական Եսայի Զանփոլադյանի մասին պարզապես չենք կարող լռել: Գաղթականների՝ Երևանում հայտնվելու առաջին իսկ օրերից նա ինքնամոռաց կերպով սկսում է որբանոցների բացման, աշխատատեղերի ստեղծման նախաձեռնություններ: 1916 թ. ընտրվելով Համահայկական կոնգրեսի պատգամավոր՝ նա շրջում է գաղթականների հավաքատեղիներում, ցուցաբերում գործնական օժանդակություն՝ աշխատանքի և բնակության պայմանների ստեղծում, բժշկական օգնության կազմակերպում և այլն: Բազմաթիվ գաղթականներ ապրում էին հենց նրա տանը: 1918 թվականին՝ շրջայցերից մեկի ժամանակ, վարակվելով բծավոր տիֆով՝ նա մահանում է:

1919 թ. ապրիլի 6-ին Երևանում նշվում է որբերի օրը: Անգլիական այգում հավաքվում են տարբեր հաստատությունների՝ Ամերկոմի, Եղբայրական օգնության, Կովկասի հայոց բարեգործական ընկերության՝ Երևանի վարչության, Համառուսական քաղաքների միության՝ Երևանի կոմիտեի, կառավարական որբանոցների երեխաները: Կազմակերպվում են միջոցառումներ, ցուցադրվում երեխաների ձեռքի աշխատանքները: Կատարվում է հանգանակություն, հրատարակվում որբերին նվիրված միօրյա թերթ:

Ամփոփելով աշխատանքը՝ գալիս ենք այն համոզման, որ մեծ է Երևանի՝ որպես հանգրվանի դերը ցեղասպանությունից փրկված մեր հայրենակիցների օգնության կազմակերպման գործում: Երևանցիների մարդասիրական օգնությունների, հոգատար վերաբերմունքի շնորհիվ հազարավոր արևմտահայ երեխաներ փրկվեցին սովից ու հիվանդություններից, ապրեցին ու հետագայում իրենց ներդրումն ունեցան մայր հայրենիքի բարգավաճման ու զարգացման գործում:

Սուսաննա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Երևանի պատմության թանգարանի նոր պատմության բաժնի ղեկավար

Հիշողության քարերը Հորդանանից մինչև Ծիծեռնակաբերդ

↩ էջ 11

Դրա համար մարգարեացի՛ր և ասա՛ նրանց. «Այսպես է ասում Տեր Աստված. ահա ես պիտի բացեմ ձեր գերեզմանները և ձեզ ձեր գերեզմաններից պիտի հանեմ, ո՛վ Իմ ժողովուրդ»»: Մեծ եղեռնից՝ 1915 թվականից հետո հայ ազգը կարծես այդ «չորացած ոսկորներն» էր, որոնց վրա, ըստ մարդկային տրամաբանության, այլևս միս ու ջիղ չպիտի լիներ: Բայց Աստված փչեց Իր շունչը, և մենք հարություն առանք:

Գալիք սերունդները պետք է ապրեն ոչ թե որպես զոհի ժառանգներ, այլ որպես հարության վկաներ: Վերջապես պետք է սեպել մեր մտքում և ամեն օր հիշել, որ ոճիրը չմոռանալը պարտք է, բայց հարության լույսով ապրելը՝ պատվիրան:

Հարուցյալ ազգի կոչումը թաքնված է մի սկզբունքի մեջ, որն էլ թաքնված է «ինչպե՞ս ապրել ապրիլի 25-ը» հարցի պատասխանում: Եթե ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության հիշատակի օրն է, ապա մեր ամբողջ պատմությունը պետք է լինի ապրիլի 25՝ Հարության առաջին առավոտը:

«Մահուամբ զմահ կոխեաց». մեր սերունդները պետք է հասկանա՝ մենք հարություն ենք առել ոչ թե պարզապես գոյատևության, այլ առաքելության համար: Ինչպես Քրիստոս հայտնվեց աշակերտներին հարությունից հետո և պատվիրեց գնալ ու քարոզել, այնպես էլ հայ ազգը պետք է լինի կենդանի քարոզ՝ ընդդեմ չարի, ընդդեմ մահվան՝ բայց արդեն ազգային մասշտաբով: Ուստի՝ ապրել, որպես հարուցյալ ազգի ներկայացուցիչներ, նշանակում է՝

- Ունենալ ամուր հավատք, ինչպես նահատակները:
- Կառուցել հզոր հայրենիք՝ որպես կորստի հատուցում:
- Պահել հիշողության պարտքը՝ որպես ուխտի նշան:

Մենք այլևս զոհ չենք: Զոհը նա է, ով սպանել է և հիմա ստիպված է կրել մեր կյանքի բեռը: Մենք ազատագրված ենք, որովհետև սրբադասված ենք: Մեր 1,5 միլիոն սրբերը երկնքում ոչ թե լաց են լինում, այլ բարեխոսում են մեր և մեր հաղթանակի համար:

Հիշողության քարերը Հորդանանից մինչև Ծիծեռնակաբերդ

Հիշողությունը մեզ համար ոչ թե անցյալի կապանք է, այլ ապագայի կողմնացույց:

Այս գաղափարը լավագույնս երևում է Հին Կտակարանի Հեսուի Գրքում: Երբ Իսրայելի որդիները հրաշքով անցնում են Հորդանանը, Աստված պատվիրում է վերցնել 12 քար. «Որպեսզի դրանք ձեր մեջ հավերժական նշան լինեն: Եվ երբ վաղը ձեր որդիները հարցնեն ձեզ ու ասեն՝ «Ի՞նչ են այս քարերը ձեզ համար», դուք նրանց կասեք.... որ այս քարերը հավերժական հիշատակ կլինեն Իսրայելի որդիների համար» (Հես. Դ 6–7):

Այստեղ կարևոր է նշել, որ Աստված երբեք չի պատվիրել մոռանալ, ընդհակառակը, Սուրբ Գրքում հիշողությունը հոգևոր պարտք է: Երբ Հեսուն քարեր էր դնում Հորդանանի ափին, նա ոչ թե քարե արձան էր կանգնեցնում, այլ կենդանի երկխոսություն ստեղծում սերունդների միջև:

Աստված Հեսուին պատվիրան տվեց հրեա ժողովրդի համար հենց այդ քարերի միջոցով, որն էլ ուղղված էր ոչ միայն այդժամ գետն անցնող սերնդին, այլև ապագային. «Երբ ձեր որդիները հարցնեն իրենց հայրերին և ասեն՝ ի՞նչ են այս քարերը, դուք պիտի պատմեք ձեր որդիներին....» (Հես. Դ 21–22): Սա է ցեղասպանության հիշողության մեր բանաձևը: Մենք չպետք է սերունդներին փոխանցենք միայն ցավը, այլ պետք է փոխանցենք «քարը»: Քարը կարծր է, այն չի դառնում հեղուկ, չի գոլորշիանում: Հայոց արյունը չպետք է ջուր դառնա, այն պետք է դառնա հիշողության «քար», որի վրա հենվելով՝ նոր սերունդը պիտի կառուցի իր տունը: Մենք չպետք է վերցնենք Աստծո դերը մեզ վրա, պետք է գիտակցենք, որ չենք ներելու այն, ինչը մեր իրավասության մեջ չէ. այդ արյունը պատկանում է նահատակներին և Աստծուն: Մեր գործը հիշելն ու պատմելն է, որպեսզի պատմության «Հորդանանը» անցնելիս չկորցնենք մեր ինքնությունը: Մենք հրաժարվում ենք կույր վրեժից ոչ թե թուլության պատճառով, այլ որովհետև մեր հույսը դնում ենք Բացարձակ Արդարության վրա: Մենք դատավոր չենք, բայց մենք վկա ենք: Մեր վկայությունը երկնքում է:

Եթե մենք փորձենք լռել կամ հանուն «խաղաղության» մոռացության տանք ոճիրը, ապա կխախտենք աստվածային կարգը: Հիսուսն ասաց. «Եթե դրանք լռեն, այդ քարերը կաղաղակեն» (Ղուկ. ԺԹ 40): Հայաստանի ամեն մի խաչքար, ամեն մի փլված եկեղեցի Արևմտյան Հայաստանում այդ «աղաղակող քարերն» են, որոնք վկայում են բնաջնջողի ոճրի մասին:

Այսօր յուրաքանչյուր հայ պետք է կրի «հիշողության քարը»: Սա այն քարն է, որի վրա գրված է մեր դեմ գործված ոճիրի պատմությունը: Մենք չենք կարող ջուր դարձնել մեր նախնիների արյունը, որովհետև այդ արյունը մեր ինքնության թանաքն է: Եթե մենք էլ մոռանանք, կրկին անգամ՝ «քարերը կաղաղակեն»:

Հիշողության քարերը առավել են, քան վրեժը: Այդ հիշողության վառ պահումով է, որ կունենանք ազգային-հոգևոր հավասարակշռություն: Մենք չպետք է վառվենք ամենօրյա կույր վրեժով, որովհետև վրեժը կրծում է կրողին և նմանեցնում նրան ոճրագործին: Բայց մենք իրավունք չունենք նաև էժան ներման: Այդիմաստ ներումը՝ առանց արդարության և զղջման, հանցակցություն է: Մենք պահում ենք հիշողությունը, բայց դատաստանը հանձնում ենք Տիրոջը, ինչպես գրված է Հռոմ. ԺԲ 19-ում. «Ինքներդ վրեժխնդիր մի՛ եղեք, սիրելինե՛ր.... որովհետև գրված է՝ «Իմն է վրեժխնդրությունը, Ես կհատուցեմ»,– ասում է Տերը»: Սա թուլություն չէ, սա բարձրագույն արդարության վստահություն է: Մենք ապրում ենք որպես հարուցյալ ազգ, իսկ մեր դատը թողնում ենք Նրան, Ում համար ոչինչ ծածուկ չէ:

Մենք պետք է կերտենք մի նոր սերունդ, որի համար Ապրիլի 24-ը ոչ թե պարտության, այլ Հաղթանակած Կյանքի տոնն է:

Տիպաբանական կապը: Ինչպես Քրիստոսի խաչելությունը թվացող պարտություն էր, բայց իրականում կործանումն էր մահվան, այնպես էլ 1915-ը հայ ազգի համար թվացյալ վերջ էր, բայց դարձավ հայության վերածննդի գողգոթան:

Առաքելությունը: Մեր սերունդները պետք է ապրեն որպես Հարության որդիներ: Մենք պարտավոր ենք լինել ուժեղ, ստեղծագործ և հավատարիմ, որպեսզի մեր կյանքով ապացուցենք, որ ոչ մի ոճիր չի կարող ջնջել Աստծո կողմից օրհնված ազգին:

Մենք կանգնած ենք պատմության ափին՝ մեր ձեռքում պահած «Հորդանանի քարերը»: Մենք վրեժխնդիր չենք լինում, բայց մենք չենք էլ լռում: Մենք հիշում ենք, սրբադասում ենք և ապրում ենք՝ սպասելով այն օրվան, երբ «Արդարությունը պիտի բխի ջրերի նման, և իրավունքը՝ ինչպես մշտահոս վտակ» (Ամոս Ե 24):

Ապրել ուրիշի կյանքով

Ցեղասպան ազգը, որը յուրացնում է հայկական հողերը, մշակույթը և նույնիսկ խոհանոցը, դատապարտված է հոգևոր մակաբուծության: Նա չունի իր սեփականը, նա ստիպված է ապրել զոհի ստեղծածով, ինչը նրան դարձնում է հավերժական գող:

Ոճրագործի հոգեբանական կուրությունը: Հիսուսի խոսքը՝ «Չգիտեն, թե ինչ են անում», վերաբերում է մեղքի կործանարարությանը: Ոճրագործը չի գիտակցում, որ սպանելով ուրիշին՝ նա առաջին հերթին սպանում է իր մեջ Աստծո պատկերը: Նա դառնում է կենդանի մեռյալ: Մինչդեռ հայ նահատակը, զոհվելով «վասն հավատոյ և վասն հայրենեաց», ձեռք է բերում հավերժական կյանք: Այսպիսով՝ սպանողն ու սպանվածը աստվածային հեռանկարում փոխում են իրենց տեղերը:

Ոճրագործի գոյութենական գողությունը

Սա աստվածաբանական առումով կարելի է կոչել «կայենյան փոխարինում»:

Սպանողը կարծում է, թե հաղթեց, բայց իրականում նա հայտնվեց մի թակարդում, որտեղ ստիպված է ապրել զոհի ստվերում: Սա այն մեղքն է, որը կատարվում է անգիտակցաբար՝ այն իմաստով, որ ոճրագործը չի հասկանում՝ սպանելով հային, նա սպանեց իր սեփական ապագայի խաղաղությունը: Նա ստանձնեց մի ժառանգություն, որն իրենը չէ, և այդ ժառանգությունը դառնում է նրա համար «Անեծքի գիրք»: Ինչպես Զաքարիա մարգարեն է ասում. «Այդ անեծքը պիտի մտնի գողի տունը.... և պիտի բնակվի նրա տան մեջ ու պիտի սպառի այն՝ նրա փայտերով ու քարերով հանդերձ» (Զաք. Ե 4):

Այսպիսով՝ գոյաբանական առումով ոճրագործը դառնում է իր իսկ զոհի պատանդը՝ դատապարտված հավերժ հսկելու մի գերեզման, որը հրաժարվում է փակվել, քանի դեռ արդարությունը չի վերականգնել կեցության խաթարված հավասարակշռությունը:

Հարուցյալ ազգի վախճանաբանությունը

Ինչո՞ւ է հայը հարուցյալ ազգ. որովհետև մեր գոյությունը հակասում է բոլոր երկրային տրամաբանություններին:

Ցեղասպանությունը մեր ազգային գերեզմանն էր, որը ոճրագործները փակեցին և կնքեցին՝ կարծելով, թե՝ վերջ: Բայց ինչպես Քրիստոսի գերեզմանի քարը գլորվեց, այնպես էլ հայության գերեզմանը բացվեց: Մենք այսօր ապրում ենք որպես հարության վկաներ: Սա նշանակում է, որ մեր կյանքը սովորական կյանք չէ. այն առաքելություն է: Մենք պետք է ապրենք ավելի լավ, ավելի սուրբ և ավելի հզոր, որպեսզի մեր ամեն մի շնչով հերքենք մահվան հաղթանակը:

Գալիք սերունդները պետք է դաստիարակվեն այս գիտակցությամբ. նրանք ողջ մնացածների զավակներ չեն, նրանք հարություն առածների ժառանգներն են: Նրանք պետք է կրեն հիշողության քարը ոչ թե որպես պատիժ, այլ որպես պատվո նշան: Նրանք պետք է գիտակցեն, որ իրենք ապրում են նաև այն մեկուկես միլիոնի փոխարեն, որոնք չհասցրին իրենց տաղանդը, սերը և հավատքը իրացնել երկրի վրա:

Հայոց վախճանաբանությունը ոչ թե սպասում է աշխարհի վերջին, այլ ազդարարում է նոր սկիզբ՝ կառուցված անմահության գիտակցության վրա: Մեր յուրաքանչյուր հաջողություն, ստեղծագործ միտք և հնչող մայրենին մի նոր հարված են այն կնիքին, որով փորձում էին հավերժորեն լռեցնել մեզ: Մենք այլևս սովորական ազգ չենք պատմության հոլովույթում. մենք կենդանի ապացույցն ենք այն բանի, որ ոգին բարձր է նյութից, իսկ աստվածային կամքը՝ մարդկային չարությունից:

Այս առաքելությունը մեզնից պահանջում է որակական թռիչք: Լինել հարություն առածի ժառանգ նշանակում է մերժել միջակությունը, քանի որ մեր թիկունքում մեկուկես միլիոն անկատար երազանքների ուժն է: Մեր ստեղծած ամեն մի բարիք պետք է լինի բազմապատկված նրանց չապրած կյանքերի ներուժով: Մենք դատապարտված ենք լինելու լավագույնը, հզորագույնը և ամենաարդարը, որովհետև միայն այդ բարձրության վրա է, որ մահը վերջնականապես կորցնում է իր խայթոցը, և հիշողության քարը վերածվում է լուսավոր մի փարոսի:

Սա է մեր ուխտը՝ ապրել այնպես, որ մեր ներկայությամբ աշխարհը ճանաչի Աստծո հաղթանակը: Հարուցյալ ազգը չի նայում հետ՝ միայն սգալու համար, նա նայում է հետ՝ իր արմատներից ուժ առնելու և դեպի հավերժություն սլանալու համար: Եվ այդ ընթացքի մեջ մենք դառնում ենք անհասանելի ոչ միայն ոճրագործի, այլև հենց մահվան համար:

Հայոց ցեղասպանությունը և Հոլոքոսթը

Հայ և հրեա ազգերի պատմական ու հոգևոր զուգահեռը լոկ երկու ժողովուրդների տառապանքի նմանությունը չէ, այլ մի խորհրդավոր «մետաֆիզիկական ընտրյալություն», որտեղ Հայոց ցեղասպանությունն ու Հոլոքոսթը հանդես են գալիս որպես մարդկային չարության կողմից փորձարկված «բացարձակ մահվան» լաբորատորիաներ: Այս երկու ազգերը, լինելով աստվածաշնչյան հնագույն քաղաքակրթությունների կրողներ, անցան կրակի ու մոխրի միջով՝ դառնալով մարդկության պատմության մեջ «այրվող մորենիներ», որոնք վառվում են, բայց չեն սպառվում: Ինչպես հրեա ժողովուրդը Եգիպտոսի ստրկությունից և Հոլոքոսթի անդունդից բարձրացավ դեպի պետականության վերականգնում, այնպես էլ հայությունը՝ Գողգոթայի իր բարձունքից նայեց հարությանը՝ ապացուցելով, որ «լույսը խավարի մեջ լուսավորում է, և խավարը նրան չհաղթահարեց» (Հովհ. Ա 5):

Այս նմանությունը հատկապես ցնցող է ուխտի տեսանկյունից. երկու ազգերն էլ իրենց մաշկի վրա զգացին բնաջնջման այն արհավիրքը, որը նպատակ ուներ ոչնչացնել Աստծո ներկայությունը երկրի վրայից, սակայն երկուսի պարագայում էլ գործեց Եսայի մարգարեի խոստումը. «Ոչ մի զենք, որ պատրաստվել է քո դեմ, հաջողություն չի ունենալու» (Ես. ԾԴ 17): Եթե Հոլոքոսթը փորձում էր հրեային վերածել լոկ մոխրի, իսկ ցեղասպանությունը՝ հային դարձնել անապատի քամի, ապա այսօր նրանց վերածնունդն այն վախճանաբանական պատասխանն է, որը տրվում է աշխարհի հերովդեսներին: Նրանք երկուսն էլ հարուցյալ ազգեր են, որոնք կրում են Եզեկիել մարգարեի տեսիլքի շունչը, երբ չորացած ոսկորները կենդանություն առան ու դարձան հզոր բանակ (Եզեկ. ԼԷ 1–14): Այսօր հայը և հրեան կանգնած են պատմության առջև՝ որպես հավիտենական վկաներ այն բանի, որ ոճիրը կարող է ժամանակավորապես տիրել հողին, բայց երբեք չի կարող սեփականեցնել այն հոգին, որը կնքված է Աստծո հավիտենական ուխտով:

Լույսի հաղթանակը

Ի վերջո մեր ամբողջ հոդվածի միտքը հանգում է մի վեհ գաղափարի. ցեղասպանությունը ոճրագործի համար դարձավ հոգևոր բանտ, իսկ հայի համար՝ հոգևոր հարության դարպաս: Մենք պահում ենք հիշողությունը, սրբագործում ենք նահատակությունը և վստահում ենք Աստծո արդարությանը:

Այստեղ է թաքնված պատմության մեծագույն հեգնանքը. նա, ով փորձում էր ոչնչացնել, դարձավ սեփական ոճրի գերին ու պահապանը, իսկ նա, ով պիտի ոչնչանար, վերածնվեց նոր որակով: Հայի համար նահատակությունը ոչ թե պարտություն էր, այլ անցում՝ ժամանակավորից դեպի հավիտենականը, մարմնական տառապանքից դեպի հոգևոր անպարտելիություն: Մեր հիշողությունը լոկ անցյալի դիպված չէ, այլ կենդանի հաղորդություն այն լույսի հետ, որը ոչ մի խավար չկարողացավ կլանել:

Ոճրագործի հոգևոր բանտը կառուցված է վախի, ժխտման և ուրիշի կյանքի գողացված բեկորներից, մինչդեռ մեր հարության դարպասը բացվում է ներման, սրբագործման և արդարության հանդեպ անսասան հավատի առջև: Սա այն հաղթանակն է, որը չի չափվում աշխարհագրական սահմաններով, այլ չափվում է հոգու տիրույթներով: Մենք դուրս ենք եկել մահվան հովտից՝ կրելով մեր մեջ ոչ թե ատելության թույնը, այլ հարության խորհուրդը, որովհետև աստվածային արդարությունը ենթադրում է, որ վերջին խոսքը միշտ պատկանում է կյանքին:

Այսպիսով՝ Գողգոթայից հետո միշտ գալիս է հրաշափառ հարությունը կամ նոր պայծառակերպությունը, որը պետք է տեսնել:

Մենք հարուցյալ ազգ ենք, որի ճանապարհը դեպի լույսն է, իսկ մեր «Հորդանանի քարերը» վկայում են, որ Տերը մեզ հետ է «բոլոր օրերում, մինչև աշխարհի վախճանը» (Մատթ. ԻԸ 20):

Հովհաննես սրկ. ԷՎԻՆՅԱՆ
Դիանա ՔՈՉԱՐՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/
kristonya-hayastan
Ստոր. տպագր. 30.04.2026 թ.
Տպաքանակը՝ 915